

ՀՐԱ. ԵՎ. ՐՍ. ԿՈՒԹԻՒՆ
ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ, - Թիւ 1

Գ. ԳԻՒԶԱԼԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ
ԽՆԴԻԲՆԵՐ

1937

ՏՊ. "ԱՐԱՋ" Ս. ԲԱԼՏԻԿԵԱՆ, ՊԵՁՐՈՒԹ

081

գ - 67

81
- 67

թ 1709

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
“ԱՐԱԶ” ՀՐԱՏԱՐԱԿՈՒԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ, - Թիկ 1

Գ. ԳԻՒԶԱԼԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐ

60 69

1937

ՏՊ. “ԱՐԱԶ” Ա. ԲԱԽՏԻԿԵԱՆ, ՊԵՂՐՈՒՔ

MAR 2013

15302

18 Ապրիլ 2009

ԵՐԿՐՈՒ ԽԱԾԱ-Ց

«Պատմական խնդիրներ»ի այս ժողովածուն սկզբում լոյս է տեսել որպէս առաևաճին յօդածներ հայ պարբերականներում: «Մարքսիզմը եւ ազգային հարցը» հրատարակւել է «Դրօւակ»ի մէջ: ՍՏ. Նազարեանին նիդրած առաջին երկու գլուխները լոյս են տեսել նոյն տեղում: Վերցին գլուխը տեղ է գտել «Համազգային տարեգրի» առաջին հատորում: «Մեծ յոթեանի առքիւ» եւ Մ. Փօրբուզալեանի մասին գրածները լոյս են տեսել «Վէմ» երկամսեայ հանդիսում: Հաւաքելով ի մի որոշ փոփոխութիւն է մՏցրած միայն ՍՏ. Նազարեանին նիդրած գլուխներում, այն էլ իննուրոյն յօդածների մէջ ամբողջութիւն ստեղծելու համար:

«Պատմական խնդիրներ»ը մէկ փորձ է մՏի մէկ պՏոյս կատարելու հասարակական-քաղաքական գաղափարների աշխարհում: Այդ անելիս մենք մշակել ենք ու պատահել որոշ տեսակէն: Ուշադիր ընթերցողը ինքը կը գտնի այդ տեսակէնը:

Գ. Գ.



ՄԱՐՔՍԻԶՄԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

I

Ազգութեան էութիւնն ու նրա գիտական սահմանումը, նրա լուծումը մեր օրերում ևս մնում է որպէս դորձնական քաղաքականութեան և տեսական պրացտումների գլխաւոր խնդիր։ Յետապատերազմեան քաղաքական միտքը միայն նոր ձեւաւորում տւեց նրան, սակայն, գեռ չառ հեռու է այն օրը, երբ նա գիտականօրէն և միջազգային քաղաքականութեան տեսակետից բաւարար լուծում ստացած կը լինի։

Նախորդ գարում ազգային հարցը, իբրև ուսումնասիրութեան խնդիր և որպէս քաղաքականութեան հարց, գանում էր մարքսիզմի խորունկան ազգեցութեան տակ։ Պատմագիտական այս անութիւնը, որի փիլիսոփայական և հասարակագիտական հիմունքները մըշակված էին 40-60ական թւականներին, իբրև ամենից առածւած ուսումքը՝ ոչ միայն հասարակագիտական անութիւն էր, այլև իրենով պայմանաւորում էր ժողովրդական լայն զանգվածների վարքագիծը, ամենօրեայ քաքաքականութիւնը։ Արդի մատածութիւնը, պատարագմի և յեղափոխութեան ջախջախիչ ազգեցութեան տակ, զբեթէ հրաժարւեց մարքսիստական պատմահայեցողութիւնից։ Եւ այժմ վերաքննութեան նիւթ է ոչ միայն Մարքսի ազգութեան մասին արտայայտած տեսակէտները, այլև մարքզիմն ընդհանրապէս, որպէս պատմափիլիսոփայական և հասարակագիտական դրութիւն։ Միջազգային ընկերվարական միտքը, որ չուրջ կէս գար զրեթէ նոյնանում էր

մարքսիզմի հետ, այժմ որոնում է այլ ուղիներ իր տեսական, գաղափարական հիմնաւորումների և դորձնական քաղաքականութեան համար, այլ ուղիներ, քան այս, որ ցոյց է տալիս Մարքս-էնդելսեան վարդապետութիւնը: Եթէ մարքսիզմի հիմունքները նախորդ դարի 40ական թւականին մշակում էին Հեգելեան փիլիսոփայական դպրոցի և Անդրյայի քաղաքատնտեսական առեւտրա-արդիւնաբերական անմիջական կեանքի ազգեցութեան առկ, ժամանակակից ընկերվարական միտքր՝ ազատազրւելով մարքսիզմի մենատիրութիւնից՝ սերտօրէն յարակցւում է մեր օրերի փիլիսոփայական, բարոյագիտական գրութիւնների և ժամանակակից ումկավարութեան հետ: Իսկ այսօր այ իմաստասիրութիւնը շատ քիչ առնչութիւն ունի Մարքսի նիւթագաշտ և Հեգելի բանապաշտ վարդապետութիւնների հետ: Ապացոյց թէ ընկերվարական միտքր ինչքա՞ն հետացած է մարքսիզմի ակունքներից՝ ահա Հենրիխ զը Մանի «Ընկերվարութեան Ողին» գիրքը, որ ժխտելով մարքսիզմ՝ բացասական վերաբերում չունի դէպի ընկերվարութիւնը, այլ փորձում է լայնօրէն հիմնաւորել նրան ժամանակակից փիլիսոփայութեան և հասարակագիտառութեան տեսալների վրա: Որով մարքսիզմը դառնում է ընկերվարական մտքի զարգացման մի փուլը: Որպէս այդպիսին՝ նա պայմանաւորւած էր իր ժամանակի քաղաքատնտեսական և իմաստասիրական գրութիւններով, և մեզ համար դառնում է լոկ պատմական երեսոյթ՝ պայմանաւորւած որոշ ժամանակի և տարածութեան սահմաններով:

Սակայն, այդպէս չէ մարքսիզմը համայնտվար կուսակցութեան համար: Եթէ արևմտեան Եւրոպայում դասական մարքսիզմը դարձել է պատմութեան նիւթ, Եւրոպայի հասարակական քաղաքական մտքի անցած փուլը, այդպէս չէ բնաւ արևմտեան Եւրոպայի ծառականութեան նիւթը:

Դուն ստեղներում, ուր մարքսիզմը պետական ուժի մի հզօր բազուկով՝ յայտարարւած է միակ և ձշմարիտ հասարակագիտական գրութիւնը: Նա նւիրագործւել է, որպէս պաշտօնական ուսմունք խորհրդային հանրակարգի: Այլ ուսմունք՝ հասարակագիտական և փիլիսոփայական՝ գոյութիւն չունի այդ աշխարհում: Եւ բոլոր այն սրբագրումները, որ անում է այժմ արեմըտեան մարքսիզմն ու ոչ-մարքսիտական ընկերվարութիւնը Մարքս-էնդելսեան վարդապետութեան նկատմամբ, նրան թւում են դաւաճանութիւն «պրոլետարիատի գատի հանդէպ»: Իրենց այդ քայլով այլամիտեաները վաճառքի են հանում իրենց «միտքն ու խիզճը բնկերվարութեան թշնամիներին»: 70-80 տարի առաջ Մարքսն ասել է ու կոանել ամէն բան: ու եթէ արդի գիտառթիւնը, իմաստասիրական որոնումները ասում են նոյնը, ինչ որ Մարքսն ու Էնդելսը, նշանակում է աւելորդ են, իսկ եթէ հակառակն են պնդում, ապա վնասակար են: Մարգիկային որոնող, կառուցանող ու քանդող միտքը, խուզարկու ու անհանդիսա հոգին նրա ստեղծագործող թոփչքը և յղացումի ազատութիւնը երբէք այնպէս գերւած ու կաշկանդւած չեն եղել, որքան մեր օրերի «քաղաքակիրթ» Եւրոպայի արևելքում, այդ մայր ցամաքի 45 0/0 ի վրա:

Մարքսիզմի հետ կապւած բազմաթիւ խնդիրներից, որոնք այժմ իրենց իսկ մարքսիզմների բանակում վերաբնութեան նիւթ են դառնում, ազգային հարցը ամենէն կարեւորն է: Նա ընկերվարական մտքի գլխաւոր առանցքն է՝ ուամկավարութեան խնդրի հետ միասին: Եւ զարմանալի չէ, որ այդ երկուսը միշտ միասին են երևան գալիս: ազգային հարցը առանց ուամկավարութեան տեսութեան, իսկ վերջինս առանց մարգիկայնութեան ուսմունքի լուծել հնարաւոր չէ: Սակայն, համայնալարութիւնը, որպէս հասարակական ու քաղա-

Քական միտք, կառչած մնալով դասական մարքիզի
վարդապետութեան՝ մի քայլ առաջ չի գնացել ազգա-
յին հարցին աւելի իրական և գիտական հիմնաւորում
տալու տեսակէտից։ Ու եթէ հաղաքիւտ դէպիրում
նա արել է խորիմաստ յայտարարութիւններ, որդեպիրել
է ազգութեանց ինքնորոշման սկզբունքը, այդ յայտա-
րարութիւնները երբէք շեն պարտաւորեցրել նրան հա-
մապատասխան քաղաքականութիւն վարելու և անյա-
րիր են իրենց ու սուցչի պատմագիտական ուսմունքին։
Համայնավարների բոնապիտութեան տակ ազգութիւն-
ների հարցը նոյնքան հրատապ է ու չլուծւած, որքան
միապիտական կայսրութեան դաժան իշխանութեան
տակ։

Ահա թէ ինչու խօսել մարքսիզմի ազգային խնդրի
նկատմամբ մշակած տեսութեան մասին, չի նշանակում
լոկ մտքի պրատում կատարել, այլ, ընդհակառակը։
Նշանակում է խօսել մի վերին աստիճանի գործնական
արժէք ունեցող և հասարակութեան ամենալայն խաւե-
րի միտքը յուղող խնդրի մասին։ Այդիսկ պատճառով,
թող ներւի մեզ մի քանի գիտողութիւններ անել ազգա-
յին հարցին և նրա մարքսիստական ըմբռման մասին։

* * *

Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը իրենց հասարակական
աշխատանքի և գրական վաստակների մէջ ազգային
հարցի համեմէպ երբեք սկզբունքային վերաբերում չեն
ունեցած։ Իրենց սահմանած ընկերվարութեան գաղա-
փարի հետ ազգութիւնը կապւած չէ եղել օրդանական
սերտ կապերով, այլ եղել է մի հարց, որը կարող էր
այս կամ այն չափով նպաստել ընկերվարական հան-
րակարգի շուտափոյթ իրականացման, կամ խանգարել
ու յետաձգել նրա անխուսափելի ընթացքը։ Նրանց հա-
մար ազգային հարցը աւելի շուտ զործելակերպի,

գործնական քաղաքականութեան առարկայ էր, քան
սկզբունքի հարցը բխած իրենց ընկերութին, փիլիսոփա-
յական գումանանքից Աւստի և զարմանալի չէ, որ
նրանք մը ենոյն ժամանակ տարբեր ազգերի մասին և
տարբեր ժամանակ միենոյն ազգի մասին արել են հա-
կասական յայտարարութիւններ։ Միայն 19րդ զարի
70ական թւուկաններից յետոյ տեղի ունեցող ազգային
շարժումները ՍւատրօՀունգարիան, ուռամական կայ-
սրութեանց և օսմանեան պետութեան ուսհմաններում
սովորեցին մարքսիստներին լրջօրէն գրադել ազգային
հարցով և մշակել որոշ վերաբերունք։ Այս հարցինը
կատամբ մարքսիզմի զավափարախօսութեան վերա-
քննութիւնը սկսում է ՍւատրօՀունգարիայում, ուր
Քրիսի խորհրդաժողովը ընկերվարական մատածու-
թեան մէջ կազմում է մի գործակէտ ազգային հարցի
վերաբերմամբ։ Նոյն աւստրիական ընկերվարմարք-
սիստական գրականութիւնն է, որ լոյս հանեց երկու
խոշոր աշխատանք՝ Բառեկրի և Շպրինգելք-Սինոպտի-
կուսի գրչին պատկանող հատորները։ Զնայած այն
գործնական թելազրանքներին, որ անում էր յատկա-
պէս Սինոպտիկուսը լուծելու համար ազգային հարցը
աւարիական կայսրութեան մէջ, երկու մտածողների
ելակէտը մնում էր նորին մարքսիզմը և նրա պատմա-
վիտական ուսմունքը։ Այսուհետեւ կ. կառցիկին՝ դասա-
կան մարքսիզմի լաւագոյն տեսաբանը՝ փորձել է հիմ-
նաւորել ազգային հարցը Մարքսի ուսմունքով, սա-
կայն, նու էլ աստիճանաբար հեռանում է Մարքսիզմից,
և, ի վերջոյ, ստիպւած է լինում ընդունել ազգութեան
ուրոյն ազգակ լինելը պատմա հասարակական կեան-
քում։ Սա նշանակում է անտեսական, արտադրական
ուժիքի կողքին դնել մի հոգեսր ընայթ կրող ոյժ, որ
ընաւ վերլուծելի չէ նիւթական տւեալներով։ Ազգային
հարցը յատուկ քննութեան նիւթ է զառնում նաև ուռ-

սական ընկերվարականն կուսակցութիւնների մօս, ուրոնցից սոցիալ-դեմոկրատները ունեցել են ժխտական վերաբերմունք գէպի այդ հարցի սկզբունքային լուծումը:

Կարելի է ասել՝ չկայ քիչ թէ չառ ականաս որ ընկերվարական գէմք, որ իր մտքի ոյժը և գրչի թափը փորձած չլինի ազգային հարցի բնագավառում: Սակայն, հին ու նոր մարքսիստների մէջ կան ընդհանուր շփման կէտեր և այդ այն է, որ նրանց բոլորի համար ելտկէտ է ծառայում Մարքսի հասարակազիտական ուսմունքը: Մարքսիզմը նրանց համար միակ ձշմարիտ և առարկայօրէն մշակւած պատմագիտական տեսութիւնն է, որը միայն ի վիճակի է հանրային կեանքի բոլոր բարդ և բազմազան խնդիրները լուսաբանելու ձշմարտապատում ձեռվէ: Ըստ այսմ՝ պատմութեան միակ գոյակը (առ բատանա) անտեսական սահմաններում պէտք է որոնել արտադրական միջոցների, նըրանց ձեւագոխման ու նրանցից բխած հասարակական ուժերի փոխյարաբերութեան մէջ: Ուստի և հասարակական բարդ մարմնի մէջ, ազգութիւնը, որպէս ուրոյն պատմական գործոն, գնր չունի: Նա «գոյակ» չէ, այլ այդ «նիւթի» յատկանիչը, ազգութիւնն ինքը տարրալուծելիք խնդիր է: Նա բացատրելի է միայն տեղայի գարաշընի գասակարգային ուժերի փոխյարաբերութեամբ: Շատ բնական է, որ այս հայեցակէտը հիմնովին պիտի ժխտէր այն տեսակէտաները, որոնք պատմական կեանքի միակ իրական, մնայուն ու կայուն գոյակ համարում էին ազգութիւնը: Այդ հարւածը ամենից առաջ տրւում էր Հեղեղին, ըստ որի բացարձակ ոպին ազգայնօրէն կազմակերպած պետութեան մէջ է, որ առարկայանում է իր բովանդակ ծաւալով՝ ազգը դառնում է սովորողը, ազգութիւնը՝ պատմութեան ուսումնասիրութեան միակ առարկան: Ազգութիւնը, կազմակերպում է միա պետութիւնը և նրա պայմանների ծնունդն է:

Քը դառակարգայինի վերածելով՝ մարքսիզմը դրանով էլ չբաւականացաւ: Եթէ ազգութիւնը դասակարգային յարաբերութեան և նրա գաղափարախօսութեան մի ուրոյն արտայայառութիւնն է, ապա մարքսիզմը նրան կազեց բուրժուազիայի հետ ըստ այսմ՝ ազգութիւնն ու ազգային հարցը առաջացել են պատմական կեանքի աւելի նոր շրջանում: Եւրոպայի պատմութեան մէջ 15-16րդ դարերում տեղի է ունենում մեծ յեղաշրջում, սազմակերպում է գրամատիրական տնտեսութիւնը, ծնուռմ է մի նոր զասակարգ՝ բուրժուականը: Այնու հետեւ նորագոյն պատմութեան երեք գործօնները՝ ազգութիւնը, պետութիւնը և տնտեսութիւնը՝ ընթացան զուգահեռ ու միասին՝ ստեղծելով ժամանակակից մեծ ազգային պետութիւնները և գրամատիրական բարդ ու հասունացած անտեսութիւնը: Ուրեմն, ըստ այս տեսակէտի, կայ ժամանակի նոյնութիւն և մի ներքին պատճառակցութիւն նորագոյն առետրա արդիւնաբերական ձեւերի և ազգութեան ծագման մէջ: Դրամատիրութիւնը կենտրոնացնող ոյժ ունի – միջնադարեան քաղքենիութիւնը ձեւորուում է աստիճանաբար, որպէս բուրժուազիա – լայն հողային սահմաններում, զարկ է տալիս և կազմակերպում է մեծ պետութիւնը, երկնում է մի զօդով, «միաւորիչ» զաղափար՝ ազգութեան զաղափարը, որը զառնում է նոր պետութիւնների կառուցման մղիչ ոյժը: Ազգութիւնն, ուրեմն, նոր ժամանակների և նրա պայմանների ծնունդն է:

Յաճախ, ոչ մարքսիստական բանակից անդամ պընդում են, որ նոր զարերում ազգութեանց զարթօնքն է տեղի ունենում, նորագոյն շրջանում նա կազմապարուում է որպէս պայծառ գաղափար, 19րդ դարում աստիճանաբար իրականանում է ձեւալորելով որպէս ազգային քաղաքական միութիւններ՝ պետութիւններ: Նման մըտածողները, կարծէք, անուղղակի կերպով ուզում են

ազացուցանել մարքսիզմի հիմնական սկզբունքը Այլ տեսակետի պաշտպանները, եթէ անդամ համաձայն չեն տնտեսական տրտագրական ուժերով մեկնաբանելու արդի ազգութիւնը, դանում են, որ նա, իրեւ պատամական գործոն, նորոգոյն գարերումն է հանդիս գումար, և կապւած է նոր գարերի մեծագոյն յեղափոխութիւններից մէկի՝ բարենորոգչութեան (բնֆարմացիայի) հետ։ Վերջինիս յայտարարած սկզբունքը, եկեղեցու և անհատի ինքնափարութիւնը, հետևազականորէն պիտի յանդէր ազգութեանց ինքնափարութեան սկզբունքի, որ, իբր թէ, նկատելի է նոյնիսկ բարենորոգումների շրջանում։ Թէ Բարենորոգչութիւնը նոր գարերի մեծագոյն յեղափոխութիւններից մէկն է, թէ նա շատ խոչիր չափով ազգել է Եւրոպական ժաղովուրդների ազգային գիտուկցութեան խորացման վրա՝ այդ, ի հարկէ, կասկածից վեր է։ Սակայն, այդ ազգային գիտակցութիւնը՝ պարտ րւած կրօնական շղարշով և կրօնով գունաւորւած՝ չի ստանում իրաւական հիմնաւորում, ինչ որ միայն նախորդ գարի գործն է, անդամնարն էլ պակասում է բարոյական հիմնաւորումը, և, ընդհանրապէս, ժամանակի մատծողների մօտ ազգութիւնը, որպէս ուրոյն հարց՝ անկախ կրօնականից, ազգայնացած եկեղեցուց և պիտութիւնից՝ հանդիս չի գալիս։ Բարենորոգչութիւնը նպաստել է ազգութեան գաղափարին անուղղակի ձեռով հիմնաւորելով պիտութեան անկախ հաստատութիւն լինելը, որի հետևանքն են ազգային պիտութիւնների հանդիս գալը, ազգային եկեղեցու շնչնքի կառուցումը, աշխարհիկ-ազգային յեղաւի և գրականութեան ստեղծումը։ Բարենորոգչութեան ամենէն աչքառու փաստը այն է, որ նա շարժման մէջ գրեց ժողովրդական հռծ զանգւածներին։ Եւ այս զանգւածները ընթացակցելով ազգային եկեղեցու, պիտութեան, լիզէի և գրականութեան՝ աստիճանաբար կեր-

անցին աշխարհիկ, ուամկավար-ժողովրդական ազգութիւնը։

Սակայն, այս էլ զեռ բաւարար հիմք չէ ազգութիւնը նոր գարերի զործ հաշակելու համար։ Այսպէս մտածել նշանակում է բովանդակ պատմութիւնը բաժանել երկու հակագիր մասերի։ Նորը և նորագոյնը՝ վեր է ածում ազգերի պատմութեան, հինը և միջնադարը, ինչ անուն կուղէք աւէք՝ լինի ցեղերի, թագաւորական տների, կոյսրութեանց, քաղաք-պետութիւնների պատմութիւն, ազգութիւնների պատմութիւն չի լինի Բառ այսմ, ազգութիւնն ընդլրկում է պատմական կեանքի մի շատ կարծ ժամանակամիջոցը, սկսած 15-16րդ զարդից։ Այս տեսակետը, որ յատուկ է տմենէն շատ մարքսիզմին, կամայ թէ ակամայ, պիտի ժխտի պատմական կեանքի յաջորդականութեանը, որն այնքան խիստ շիշտած ձեռով երեանէ գալիս պատմամշակութային ստեղծուգործութեան բոլոր ձեռքի մէջ։ Իսկ հասարակական ժամանականութեան, պատմական յաջորդականութեան սկզբունքի ժխտումը մեծագոյն բացն ու պակասութիւնն է ամէն պատմազիական տեսութեան, որ և կարող է կասկած առաջացնել, թէ արգեօք այդ արւած է փաստերի, պատմութեան եղակի զեպքերի հետազոտութեան վրա, նրանց խորազննին ուսումնասիրութեան հետեանքով, թէ՞ որևէ վերացական, կանխորոշւած միաք է զեկավարել պատմապէտին։

* *

Հնդունելով հանդերձ մարքսիզմի մէջ պարունակած որոշ ծշմարտութիւնները, մենք միանդամայն ժխտում ենք նրան, որպէս պատմագիտական ուրոյն տեսութիւն և փիլիսոփայական զրութիւն։ Նիւթապաշտութիւնը, և մարքսիստական նիւթապաշտութիւնը մասնաւորապէս անկարող է յարակցւել ժամանակակից

իմաստասիրական դրութիւնների և պատմագիտական տեսութեանց հետ։ Եւս առաւել նա անկարող է մուկնուքանել ազգութեան բարդ խնդիրը։ Մարքսիզմի ազգացին տեսակէտները յանդում են այնպիսի եզրակացութիւնների, որոնց հանդէս յաճախ կանգ են առնում անդամ մարքսիստներն իրենք։ Եթէ ազգութիւնը պատմական կեանքի որոշ վայրկեանում է ծագել, ապա, ուրեմն, պատմական կեանքի որոշ վայրկեանում էլ պիտի գտնի իր վախճանը։ Այս ըմբռնումով՝ ազգութեան խնդիրը մարքսիզմի համար պատմական երեսյթ է։ Այս սիալից հեռու չմնացին նաև ոչ մարքսիստները, որոնք նոր գարը միայն յայտարարեցին ազգութեան զարգացման շրջան։ Թէ մարքսիստական այդ տեսակէտը որքան արմատացած էր լայն մտաւորական խաւերի մէջ, երեսում է այն բանից, որ անդամ ուսւսոցիալիստ-յեղափոխականներից ումանք երեմն յարել էին այդ տեսակէտին։ 1907 թւին Խուսաստանի Ազգային ընկերվարական կուսակցութեանց համագումարում էսէրներից շատերը պնդում էին, թէ «ազգութիւնը հասարակական կեանքի միայն անցողական ձեն է»։ «ազգային մշակոյթը իր ամբողջութեամբ ընկերվարութեան համար անարմէք փաստ է, մենք չենք կարող պայքար մզել ազգային մշակոյթի ճոխացման և ամրացման համար»։ «Պայքարելով ազգային իդէալի համար՝ զուք կը հասնէք ոչ թէ դասակարգացին հակամարտութեան սուր բնոյթ տալուն, այլ նրանց հարթելուն՝ աշխատաւոր ժողովրդի դասակարգացին զիտակցութեան մթագնման»։ Եւ այսպէս արտայայտւում էին ներկայացուցիչները մի կուսակցութեան, որ հետագայում այնպէս լայնօրէն պիտի զարգացնէր ընկերվարական ազգայնութեան ստեղծաբործիչ գաղափարը։

Հստ այս եզրակացութեան և ըստ մարքսիստների՝ ազգութիւնը եղել է, կտյ և, զուցէ, երկար ժամանակ

էլ լինելու է որպէս փաստ, որպէս գոյութիւն, բայց որպէս պատմական երեսյթ պիտի ունենայ իր վախճանը, որից յետոյ կը ստեղծւի մշակոյթի արտայայտութեան մի այնպիսի եղանակ, որ ազգային չի լինի, այլ, եթէ կուզէք՝ գեր-ազգային կամ ապազգային, կամ, ինչպէս ասում է, միջազգային։ Սա նշանակում է, որ ազգային ձեւը անհրաժեշտաւթիւն չէ մշակոյթի առարկայացման և դրանում համար Մշակոյթի աւեալ ձեւը հետեւանք է նոր պատմութեան մէջ տեղի ունեցող որոշ քաղաքա-տնտեսական յնդաշլջման, եթէ այդ հիմքը վերանայ, արտայալտութեան ձեւն էլ կը փոխի։ Հետաքրքրականը այն է, որ ոչ-մարքսիստներն էլ միջազգայնութեան ջատագովներ են, յաճախ, սակայն, առանց յստակօրէն պարզաբանելու միջազգայնութեան գողափարը, իսկ մարքսիստները այդ երկու սկզբունքը գրիթէ միշտ հակառակ են իրար։ միջազգայնութիւնը, որ ունի կարծիքով, ժիառամն է ազգութեան, նա աւելի բարձր սկզբունք է և անյարիր ազգութեան հետ։

Հստ այսմ, ազգութեան և բուրժուազիայի մէջ կայ ոչ միայն ծագման, այլ և վախճանի ժամանակակցութիւն, որը վեր է ածում ներքին սերտ պատմառակցութեան։ Եթէ նրա ծագումը կապւած է գրամտիրական անտեսութեան և բուրժուազիայի հետ, ապա վերջինիս հասարակական վախճանը պիտի աւեալ նաև ազգութեան վախճանը։ Ուրեմն, ազգութիւնը իբրև պատմական երեսյթ, սերտօրէն կապակցւում է ու բախտակից է նոյնպիսի պատմական երեսյթի՝ բուրժուազիայի հետ։ Բուրժուազիայի մահը, որպէս ուրոյն դասակարգի, միաժամանակ յալթանակն է նոր դասակարգի՝ բանւորութեան, որը կերտում է նոր՝ ընկերվարական հանրակարգ։ Ուստի և սրանից հետեւում է, որ մարդկութիւնը մտնելու է նոր՝ ընկերվարական հանրակարգը առանց ազգային գունաւորումների ու երանգաւու-

բումների : Ընկերվարութիւնը զատնում է ուսմունք մի հանրակարգի, ուր ազգութիւնը տեղ չունի . Ընկերվարութիւնը ազգութեան ժխտումն է : Այս տրամաբանական եղբակացութիւնը անհրաժեշտաբար բխում է մարքսիդիր նախազրեալից :

Սակայն, այս տեսակիւթը մշակւել է ոչ թէ պատմական կեանքի խորազնին ուսումնասիրութեան հետեւանքով, այլ արդիւնք է քաղաքական նպատակների հետապնդման : Պատմականօրէն ձիչտ է, որ նոր գարերում ազգային զարթօնքը և ազգութիւնների պայքարը սերտօրէն զուգակցւում է բուրժուազիայի զօրանալու և կատարած նւաճումների հետ : Մարքսն ու մարքսիստները պատմական այս զուգագիպութիւնը համարեցին ներքին տրամաբանական կապ : Եւ հենց այսուեղ է նրանց սխալը : Նոր գարերի քաղաքաւանտեսական դարպացումը վերին աստիճանի խորացնում և ընդարձակում է ազգութեան կեանքով ապրող և միենոյն մշակոյթին պատկանող մարդկանց թիւը : Ազգութիւնը, որ միջնազարում շատ սեղմ շրջանակի բաժին էր ընկած, ընդգրկում է նոր խաւեր, որոնք մինչ այդ թմրած գրութեան մէջ էին : Միջնազարեան ազգութիւնը իր մէջ պարփակում է աւատատէր զաւը, հոգեռուսականութիւնը, որ ժամանակի մտաւորականութիւնն էր, քաղքենին, որ ունէր մաքի և անտեսութեան շատ նեղ շըրշանակ : Մրանք իրարից անջատած էին իրաւական զասային պատնէներով, հաւաքական աշխատանքի դորձակցութեան սահմանափակ շրջան կար, շահերի շատ քիչ զուգակցութիւն : Միջնազարի երկրորդ կիսից ծնւում է ժամանակակից բուրժուազիայի նախատիպը, որ աստիճան առ աստիճան տեղ է բռնում հասարակական կեանքի ասպարէզում, զրաւում է նոր զիրքեր, գործակցում նոր ծնւող միապետութեանց հետ և զառնում է տնտեսական ու քաղաքական ոյժ : Ամենից

շուտ, որպէս նիւթականապէս ապահով և մտաւորապէս լուսաւոր զաս, նա է, որ հասնում է ազգային զիտակցութեան : Սակայն, նրա ազգային ըմբոնումը գերազանցօրէն տնտեսական էր, ինչպէս միապետութեանը՝ քաղաքական : Այս երկրութ՝ տնտեսութեան ու քաղաքական ազգութիւնը՝ գունաւորում են 15-18րդ դարերի պատմութիւնը : Միապետութիւնը հուաքելով մէկ պետականութեան սահմաններում՝ մէկ լեզով խօսով բազմութիւնները՝ անչուշտ, չի հետապնդում ազգային նպատակ, բայց այդ հաւաքումը ստեղծում է նպաստաւոր պայմաններ մէկ ազգութիւն ստեղծելու համար : Սրդի պետութիւնը վերացնում է միջնազարեան չատհաստաւութիւններ՝ քաղաքական, վարչական, օրէնսդրական . բուրժուազիայի վրա կրթնած հետամուտ է լինում մէկ տնտեսական քաղաքականութեան, ջնջում մաքսային ներքին պատնէնները, բոլիանդակ երկրից ստեղծում է մէկ տնտեսական մուտքիւն : Այս քաղաքականութիւնը մօտիկ բարբառներով խօսով տարրերին միացնում է, ձուլում . յաճախակի շփումը՝ վաճառականութեան, արտազրութեան, բանակի, գրականութեան միջոցով ստեղծում է գաղափարակցութիւն, շահակցութիւն . միասին պայքարը օտարի դէմ առաջ է բերում փոխադարձ ճանաչութիւն, բախտակցութիւն : Այս բոլորի հետեւանքով ստեղծում է հոգեռոր մօտիկութիւն, հոգեկցութիւն, զիտակցութիւնը մէկ հաւաքական-ազգային մարմնի պատկանելու թեան : Այս հոգեկցութիւնը, մշակութային ընդհանրութեան զիտակցութիւնը ծաւալում է յատկապէս 19րդ դարում, շնորհիւ հալորդակցութեան միջոցների կատարելագործութեան : Յատկապէս քաղաքը՝ որպէս տնտեսական և պետական կեանքի և հոգեռոր մշակոյթի կենարոն, հսկայական գեր է կատարում մշակոյթի ընդհանրացման գործում : Ազգու-

թիւնը ընդգրկում է աշխատաւոր խաւը, ուամիկը ստունում է արժեք, բերում է իր հետ նոր գոյներ, նոր երանգներ, հանդիսանում է անսպառ ազբիւր ստեղծագործութեան : Ազգութիւնը ուամիկավարանում է միաժամանակ ստանալով չեշտւած մշակութային բընոյթ : Եթէ առաջւայ ազգութիւնը քաղաքական երանգունի, բուրժուականը՝ տնտեսական, արդի ուամկավարական ազգութիւնը՝ մշակութային է . անտեսութիւնը և «քաղաքական անօթը» լինելով մշակոյթի քաղաքրիչ մասերը՝ ծառայում են որպէս լաւագոյն միջոցն ու հիմքը՝ հոգե-մտաւոր մշակոյթի յղացումների և կերտման համար :

Ազգութեան գաղափարի և նրա կերպարանաւորման վերոյիշեալ ձեզ մշակուել և կառուցւել է մեծ չափով բուրժուազիայի ստեղծագործ ուժերով և դրամատիւրութեան խորունկ ազգեցութեան տակ : Անկարերի է ուրանալ այն դերը, որ նա խաղացել է ազգութիւնների հաւաքման, այդ գաղափարի ժողովրդականացման տարածման հաւաքական աշխատանքի գործում : Որքան որ մարքսիզմը նկարագրում է բուրժուազիայի ունեցած գները ազգութեան կազմակերպման գործի մէջ, նա արտայացում է որոշ ճշմարտութիւն, բայց երբ փորձում է հաւասարութեան նշան դնել ազգութիւն, բուրժուազիայի և դրամատիրութեան միջև, սխալում է չարաչար : Փոխանակ ասելու, որ նոր տնտեսական ձեերի ստեղծումով և նոր բուրժուական գասակարգի ծագումով ազգութեան գաղափարը գարաւաւ աւելի յստակ, ստացաւ աշխարհիկ բնաւորութիւն, ճոխացաւ և անհատականացաւ, արտայայւեց այնպէս գունազեղ ձեռվ, որ նախորդ գարերին բնաւ ծանօթ չէր, մարքսիզմը և նրա հետ չաս ոչ-մարքսիստներ ազգութիւնը համարեցին մի նոր, դեռ գոյութիւն չունեցող երևոյթ, որ նոր էր ծնունդ առնում : Նախորդ

և նոր գարաշրջանները բնութագրելիս նրանք որակի տարբերութիւն տեսան և ոչ քանակի, Բուրժուազիան իր էութեամբ գարձաւ ազգային, ազգութիւնը իր էութեամբ՝ բուրժուական :

* *

Այսպիսի սխալների մէջ չենք ընկնի, եթէ մենք կանգ առնենք այն տեսակէտի վրա, ըստ որի ազգութիւնը մշակոյթի զարգացման միտի և անհրաժեշտ ձեն է, որ ազգութիւնը մշակութային միութիւնն է, ընդհանրութիւնը : Սրա եղրակացութիւնը պիտի լինի այն, որ ուր կայ մշակոյթ, այնտեղ կայ և ազգութիւն, մարզկանց որոշ հաւաքականութիւն, որ ունի արտայացութեան ընդհանուր ձեւ : Ուրեմն, մենք մեր ուշագրութիւնը գարձնում ենք մշակոյթի առարկայացման ձեի վրա, որը միշտ ազգային է, իւրայատուկ համագրութիւնների արդիւնք, իսկ մարքսիզմը ելակէտ ունի մշակոյթի բովանդակութիւնը, որը որոշ չափով ընդհանուր է, միջազգային : Տւեալ մշակոյթի ազգային ձեը պայմանաւորած է որոշ ժումանակի և տարածութեան, նաև նախնիքներից ժառանգած հոգեմտաւոր, հասարակական ու քաղաքական ձեերի իւրայատուկ, եզակի ու չկրկնւող համազրութիւններով : Ազգութիւնն այն ձեն է, որի մէջ մշակութային արժեքներն առարկայանում են . ազգային ձեից զուրս մեզ ծանօթ չէ մշակոյթի արտայայտութիւն : Նա, այդ ձեը, բնաւ կապւած չէ մշակոյթի բովանդակութեան յարափոխիս ընթացքի հետ, ընդհակառակն, իրենով պայմանաւորում և ձեաւորում է այն : Նա նոյնիսկ կապւած չէ այս կամ այն ապրող ազգութեան հետ : Ազգութիւնները կարող են ծնւել և մեռնել, կարող են համաշխարհային մշակոյթի մէջ ձգել իրենց լուման, ապա այս կամ այն վլուզումի հետեանքով դիմել զէպի անկում,

«որպէս անպիտանոցեալ որդիք ժամանակի», սակայն, ազգութեան սկզբունքը մնայուն է: Արա մէջ է խնդիրը: Մարգարիղմի սխալը հէնց նրանումն է, որ ազգութեան գաղափարը, որպէս մշակոյթի առարկայացման ձև, նոյնացքեց տւեալ, եղակի, չօշափելի ազգերի գոյութեան հետ, որով ի հարկէ, պիտի հասնէր սխալ եղակացութիւնների:

Սաացինք, որ մշակոյթի բովանդակութիւնը պիտի արտայայտուի որոշ ձեերի մէջ, այդ ձեր անհրաժեշտ մասն է մշակոյթի, որովհետեւ չկայ որիէ մարմին, որիէ բովանդակութիւն, որ արտայայտութիւն գտնէ և ձե չունենայ: Արտայայտուել, մարմնուորուել՝ նշանակում է ձեւորուել: Սաացինք նուե, որ մշակոյթի առարկայացման ձեր ազգութիւնն է, իսկ ազգութիւնը պատմական զարգացման արդիւնք է, հետեւապէս՝ ազգութեան խնդիրը պատմագիտութեան է վերաբերում: Այդ զիտութիւնն է, որ կարող է լրիւ և ծամարտապատում պատասխան տալ նրա հետ կապւած բոլոր խընդիրներին: Եթէ մշակոյթի զարգացման ձեր ազգութիւնն է, նշանակում է նա է, որ կարող է լինել պատմութեան ուսումնասիրութեան առարկայ: Մինչ այժմնան մշակոյթային արժէքները առարկայացել են ազգութիւնների միջոցով, ուրին պատմութիւնը մինչև այժմ գործ է ունեցել ազգերի հետ, որոնք ծնւել են, ստեղծագործել ապա կամ անցել պատմութեան գիրը՝ ժառանգութիւն թողնելով հետառդներին իրենց երկնած մշակութային արժէքները, կամ ապրում են այժմս էլ ու ստեղծագործութեան ազգիւր հանդիսանում: Այս առումով պատմութիւնը մշակոյթի բազմազան ձևելերի, տարրերի զարգացման մի չընդմիջող շղթայակցութիւնն է, որ հանդէս է զալիս ազգային ձեր մէջ: Ճիշտ է, մարդկային զարգացման նախնական ըլլաններում մննք ազգութիւն չգիտենք, սակայն, զրա-

հետ միասին, մարդկային համակեցութեան այդ շըբաջանում մշակոյթի տարրերն էլ այնքան հասարակ էին, այնքան անգոյն, որ գեւար էր նրանց գունաւորող, անհատականացնող, բնորոշչիչ մասերը գտնելու մատնանշել: Անդէմ, անորոշ զանգւածները բարձր քաղաքակրթութիւն չեն ստեղծում: Պատմական կեանքի զարգացումով՝ զարգանում է, բարգանում և բազմերանգ զոյն է ստանումնակ մշակոյթը: Առաջ է զալիս արւեստը, մարգն սկսում է փիլիսոփայել, ստեղծում է գիտաբանութիւնը, որ միաժամանակ նախնական մարդու և՛ փիլիսոփայութիւնն է և՛ կրօնը և՛ բանաստեղծութիւնը: Հիմնաւորում են քաղաքական աւելի բարյ ձեեր, մարդկանց համակեցութեան խմբակները մեծանում են, շփումը՝ խաղաղ և ռազմական՝ զառ նում է յաճախակի և յարատե: մարդիկ ցրում են այլ ցեղերի հետ, անտեսական կեանքը շերտաւորում է՝ ստեղծում է մշակոյթի և նրա ձեերի բազմազանութիւնը, որ աստիճան առ աստիճան աւելի խորանում է, չեշտում և, ի վերջոյ, հասնում է ազգային ձեերի տարրերութեան: Եւ մարդկութեան ամբողջ պատմութիւնը եթէ մշակոյթի զարգացումն է, ճոխացումն, ապա միաժամանակ է՛ և նրա ազգայնացումն՝ նա երեան է զալիս ազգային ձեր մէջ, շերտաւորման է ենթարկւում ըստ ազգութեան, ստանում է ուրոյն գունաւորում, տեղային, ազգային բնոյթ, ստեղծում են տարրերի իրայացուուկ համագրութիւններ, ազգային մտածելակերպ, սկանածք, նկարագիր, զրականութիւն, արւեստ, երգ, սղանակ, լեզու, խօսւածք, կենցաղ: Այս ձեով մշակոյթը որքան զարգանում, բարգանում է, նոյնքան և ազգայնացում է: Կայ մի ներքին կապ մշակոյթի և ազգութեան միջեւ: Նախնական մշակոյթը պարզ էր, որովհետեւ զեր ազգային չէր: արդի մշակոյթը բարդ էր,

է, հարուստ, որովհետև զերազանցօրէն աղքային է: Եւ պատմութեան ընթացքն այն իմաստն ունի, որ անդէմ անգոյն զանգւածներին դիմաւորում է, գունաւորում, անհատականացնում, դարձնում է եղափի, չըկրկնող երեսյթ, ազգ է դարձնում: Եւ միայն ազգութիւն զառնալով է, որ այդ զանգւածները տեղ են դրաւում պատմութեան մէջ:

Մեր տեսակէտը թէ ազգութիւնը մշակոյթի, ընդհանրութեան ձեն է, ունի նաև այն առուելութիւնը, որ զերծ է պահում մարքսիստների կոպիտ սխալից՝ ժխտելով պատմական զարգացման յաջորդականութիւնը: Պատմութեան նիւթը կարող է լինել, ըստ մեր տեսակէտի, մի մնայուն երեսյթ, որ իր էութեան մէջ յարափոխի՝ մնում է նոյնը — այդ ազգութիւնն է: Ուստի և այդ մնայուն երեսյթի համար — ծնունդի և վախճանի խնդիրը սովորական իմաստով առած՝ իր նշանակութիւնը կորցնում է: Այս ելակէտը ունենալով՝ մենք ազգութիւնը կորոնենք նաև հին և միջին դարերում: Ի հարկէ, այդ դարերի ուսումնասիրութիւնը մեզ գեռ ևս չի ընձեռում այնքան առատ և ուզզակի նիւթեր, ինչպէս նոր դարի ուսումնասիրութիւնը՝ ազգութեան գաղափարը պարզ, յստակօրէն ցուցահանելու համար: Հին ազգերի պատմութիւնը և ազգութեան գաղափարը ուսումնասիրելիս, մենք պէտք է մեր ժամանակակից չափանիշներից զերծ մնանք, որպէսզի կարողանանք թափանցել այն ինքնատիպ, յաճախ տարօրինակ համազրութիւնների մէջ, որ ստեղծել է ույատուկ հին քաղաքակրթութիւններին: Կրկնում ենք՝ քաղաքական և, մանաւանդ, կրօնական զրութիւնների ուսումնասիրութիւնը անվիճելիօրէն հաստատում են, որ հին աշխարհը կազմակերպւած էր ազգայնօրէն և ազգային պայքարը աւելի ծաւալուն էր ու խորը, քան, գուցէ, նոր դարերում: Ազգութիւնների զարթօնացութիւնը շահագործ էր անվիճելիօրէն հաստատում են, որ հին աշխարհը կազմակերպւած էր ազգայնօրէն և ազգային պայքարը աւելի ծաւալուն էր ու խորը, քան,

ուժեղ խթանւում է քրիստոնէութեան վարդապետութիւնից, մանաւանդ, արեւելքում, Հռովմէական ու Բիւզանդական կայսրութեանց չրջանակում: Շատ հետաքրածական և չնորհակալութեան արժանի գործ կը լինէր, եթէ մէկը ուսումնասիրէր ազգութիւնների պայքարը Մէրձաւոր Արեւելքում Քրիստոսի առաջին դարերում: Այս աշխատանքը դժւար է, և է՛լ աւելի զբժւարանում է նրանով, որ վերոյիշեալ դարերում ազգութիւնը հանդէս չի գալիս անխառն, անհարազատ գունաւումներից զերծ, այլ միշտ ենթակայ է դարի իշխող գաղափարին:

Մի կէտի վրա էլ պէտք է ուշազրութիւն դարձընենք: Ազգային հարցի բոլոր հետազոտղները համաձայն են, որ ազգութիւնը արտայայտւում է մշակոյթի տարրերի մէջ՝ լեզուի, արեսատի, գրականութեան, գիտական-փիլիսոփայական զրութիւնների, քաղաքանատեսական ձևերի: Այս բոլոր հոգե-մտաւոր և նիւթական ստեղծագործութիւնները՝ իրենք են ծնունդ տալիս, ստեղծում են ազգութիւնը, սակայն, մէկ անգամ ձեւառուելով՝ ազգութիւնն իրենով արդէն կաղապարում է մշակոյթի բարդ կառուցւածքը: Եթէ այս ձիչտ է, եթէ ազգութիւնը միենոյն պատմական միջավայրում ու պրոզ մարդկանց ընդհանրութեան մի ձեն է, միենոյն է՝ ինչ էլ որ լինի նրա «ներքնաշէնքը», ապա, ուրիմն, պէտք է ապացուցանել, որ հին և միջին դարերում մշակոյթ չկար. ու եթէ կար էլ, չէր համախմբում որոշ թիւ մարդկանց և չէր ստեղծում մշակոյթի ընդհանրութիւն, որ այնքան անհարաժեշտ է ազգութեան ստեղծման գործում: Ասկայն, այսպիսի անհեթեթ եղբակացութիւններ ոչ ոք չի անում: Բայց եթէ նման եղբակացութիւններ ոչ ոք չի անում, ապա նոր դարերի մշակոյթին վերագրում են այնպիսի առանձնայատուկ բնոյթ, որից զուրկ է նախորդ դարա-

շրջանների մշակոյթը՝ կապում են այն մէկ դասակարագի՝ բուրժուազիայի ծագման ու զարգացման հետ, ու պնդում են, որ միայն նրա յառաջանալով է, որ մշակոյթը գառնում է ազգային։ Մենք տեսանք այս տեսակէտի սխալը. մշակոյթը ամենուրեք և ամէն ժամանակ ազգային շրջանակի մէջ է կազմակերպւում։ Մօտաւոր հաւասարութեան նշան կարելի է դնել բուրժուազիայի և մշակութային արժէքների ժողովրդականացման մէջ, բայց ոչ երբեք բուրժուազիայի և ազգութեան։ Բուրժուական ազգայնութիւնը լոկ մի հանգրւան է, մի փուլը ազգութեան դադախարի յաւերժական զարգացման, և, որպէս այդպիսին, հանդիսանում է պատմական երեոյթ։ Ազգութիւնը, բնաւ պատասխանատու չէ այն յոռի, բիրտ, ազգայնամոլ բնոյթի համար, որ, յաճախ, ստացած է բուրժուականը։ Այդպիսի ձեերը մաքուր առումով վերցրած ազգութեան դադախարի հետ չեն հաշտում։ Ազգութիւնը ստեղծագործութիւն է, մտքի, հոգու, նիւթական ու քաղաքական ստեղծագործութիւն, իսկ զրա համար անհրաժեշտ է աղատութիւն, ազգային ուժերի լիակատար աղատութիւն։ Ազգութիւնների աղատագրութեան գործը գերազանցօրէն երաշխաւորում է ընկերվարական հանրակարգը, որը մխտումը չէ ազգութեան դադախարի, այլ ստեղծումը նրա զարգացման համար աւելի կատարեալ, նպատակայարմար պայմանների։

II

Բոս մարքսիդ մի՝ ազգութիւնը որպէս պատմական երեոյթ պիտի գագարի գոյութիւն ունենալուց այն վայրկեանից երբ պատմութեան ահեղ գատավճիռը կը հնչի, երբ «անհրաժեշտութեան» սահմանից հասարակութիւնը կանցնի «ազգատութեան» սահմանը։ Այդ վայրկեանից պատմութիւնն այլիս դործ չի ունենալու ազգութիւնների հետ, հասարակութիւնը կը կազմակերպւի միջազգայնօրէն կամ գերազգայնօրէն։

Մարքսիզմի համար ազգային հարցը և ընդհանրապէս ազգութիւնը սկրաօրէն կապւում է այն տնտեսական քաղաքական հարցերի հետ, որոնց չու թը և որոնց համար բանուրութիւնը պայքար է մղում։ Ե՛ւ աւելի. — մարքսիստական վարդապետութեան մէջ ազգութիւնը երբէք երևան չեկաւ որպէս պատմական՝ կեանքի ուրոյն գործօն։ սրանից հետեւում է նաև, որ նրա ազատազրումը երբէք նպատակ չդարձաւ։ Նա յարակցւեց տնտեսական ուժերին, դարձաւ «վերնաշչնք» և որպէս այդպիսին համարեց լոկ անդրագարձումն տնտեսական արտագրական ձեւերի ու նրանց շուրջը ստեղծւած հասարակական ուժերի փոխյարարերութեան։

Մարքսիզմը ազգութեան խնդիրը երբէք չըմբռնեց որպէս մշակոյթի ուրոյն խնդիր. ուստի և ազգութիւնը եր իսկական մաքուր առումով՝ նրա ուսմունքի մէջ հանդէս չեկաւ և տեղ չըրաւեց ապագայ՝ ընկերվարական հանրակարգում։

Նախորդ դարի վերջին, Լիբկնիխաց հրապարակային մի ճառում ասում էր. «Մեզ, սոցիալիստներիս համար ազգութեան հարցը գոյութիւն չունի։ Մենք ճաշում ենք միայն երկու ազգ՝ մի կողմից կապիտալիստների, բուրժուազիայի, տիրող դասակարգի ազգը, իսկ միւս կողմից՝ պրոլետարիատի, զրկւածների, աշ-

իստաւոր դասակարգի ազգը»։ Այստեղ ազգութիւնը նոյնացել է դասակարգի հետ։ Դասակարգն ու դասակարգին պաշտառը չեն, որ գանւում են ու աեղիու նեն ազգային կենդանի մարմնի մէջ, այլ ազգութիւնն է, որ գունաւուրւում է դասի ու դասակարգի ազօտ ձառագայթներով։

Հստ «Կոմունիստական Մանիքհստի», բանւորը ոչ ազգ է ճանաչում, ոչ հայրենիք։ Բուրժուազիայի պատմական դերը նրանումն է, որ չափանւած չափով նպաստեց անտեսական ու քաղաքական ուժերի կենտրոնացման։ Այդ փաստը ունեցաւ այն հետեանքը, որ «բուրժուազիայի դարձացումով առեարի ազատութեան, համաշխարհային շուկայի ընդլայնումով, արդիւնաբերական ձեռքի միանմանութեամբ և նրանց համապատասխան գոյութեան պայմանների հետ զուգընթաց՝ աւելի ու աւելի կորչում են ազգային առանձնաց վիճակները և ժողովուրդների մէջ եղած հակամարտութիւնը։ Բանւորութեան տիրապետութիւնը էլ աւելի էր նպաստէ նրանց չքանալուն»։ Տրամարանօրէն մտածելով պիտի սաենք, ինչ որ սկսել է բուրժուազիան, պիտի շարունակի բանւորութիւնը։ Պատմութեան թեմ ազգութիւնն իջաւ նորագոյն՝ կապիտալիստական անտեսութեան հետ, սակայն նրա աստիճանական կենտրոնացումով վերանում են ազգային «առանձնայացակութիւնները»։

Շարունակելով ընթանալ Մարքսի և կիբեկնեխտի գծած ուղիով՝ Կ. Կառուցին իր սկզբնական աշխատանքների մէջ՝ նւիրւած ազգային հարցին՝ պնդում էր, «որ տնտեսական մոնիզմը պիտի սաեղծի և ամրող մշակոյթային մոնիզմ»։

Թէ իիրկնեխտի «ազգ-դասակարգը», թէ Կ. Մարքսի առանձնայանկութիւնների կորնչիլը, թէ Կ. Կառուցին «մշակոյթի մոնիզմը» ոչ այլ ինչ են, եթէ ոչ

յոնդայն պնդելը, որ ազգութիւնը մէկ ժամանակաւոր պատմական երեսոյն է, որ գալիք, աւելի կատարեալ հանրակարգութիւնը ունենալ չի կարող։ Այնտեղ յդկում են բոլոր յատկանշական կողմերը։ «Բանւորութեան իշխանութեան» օրով ազգային հարցը մարդկանց յուղել չի կարագ։ Ճի յուղելուու, ոչ թէ նրա համար, որ աւելի կատարեալ և լաւապէս լուծւած էր լինի, այլ որովհեակ ազգութիւնը սրպէս փաստ գոյութիւն չի ունենալու։

Մարքսի և նրա հետեւորդների այս մտածողութիւնը մշակւեց 19րդ դարի կէսին, ազգային ուժեղ պայքարների շրջանում։ Այդ ժամանակի ազգութիւնը խորապէս գունաւորւում էր քաղաքական ու անտեսական ազգային առանձնաց վիճակները և կառուցւում էին նորագոյն ազգային պետութիւնները և յաճախ ազգութիւնների այդ կառուցման պրոցէսը երեան էր գալիս թունոա, հիւանդաղին ձեռով։ Նա հանդէս էր գալիս սրպէս շուղէն, կլանող, հալածող ազգայնամոլութիւն (նացիոնալիզմ)։ Եւրոպական կեանքի այդ խոր վերիվայրումների մէջ, փոքր ազգերի իրաւունքը բոնազատուում էր, զոյութեանը վտանգ սպասնում։ Հէնց նման փաստերի զիառողութիւնն հետեանք էր, որ Կ. Մարքսը ազգային հարցը համարեց «ժողովուրդների մէջ եղած հակամարտութիւն», ի հարկէ, այդ հակամարտութիւնն էլ ըմբռնելով սրպէս նիւթական ու քաղաքական հակալութիւն։

Մարքսը չթափանցեց հարցի խորքը և չըմբռնեց, որ այդ ահաւոր պայքարների մէջ, որոնք շատ յաճախ երեան էին գալիս հիւանդաղին ձեռով, ժողովուրդները կաղմակերպւում էին որպէս ազգեր, ձգտում էին գըտնելու կայուն յինարաններ իրենց «ազգային առանձնաց յատկութիւնը» յաւերժացնելու համար։ Այդ պայքարների ներքին իմաստը ազգութեան յարատե զարձնելու

մեծ ինդիրն է: Ուստի և զարմանալի չէ, որ Մարքսի համար աղջութիւնը հէնց այդ չոփէն, նեղ, աղջոյնաշմոլ, հալածիչ արաւայայտութիւնն է, որ յաճախ տեղի էր ունենում բովանդակ նախորդ գարում: Արաւայայտութեան այդ կոպիտ եղանակներ Մարքսիքմը նոյնացրեց աղջութեան հետ, համարեց նրաներքին էութիւնից բխող մի երեսի:

Սակայն, աղջութիւնը որպէս մշակոյթային երեւոյթ, բնաւ պատասխանառու չէ այդ աղջայնամոլարատայայտութիւնների համար, մի աղջայնամոլութիւն, որից այնքան տառապում էր հէնց ինքը կ. Մարքս:

Ենթատական գերման աղջայնամոլութիւնը նրան թելադրում էր պահանջել ոչնչացումն ալաւոնական աղջերի: Նա ծալըել, արհամարհել է այդ փոքր աղջերի աղատադրական փորձերը, համարել է նրանց պատամութիւնից դուրի աղջերը: Նրանք լո՛կ աղջագրական տարրեր են, որոնք դատապարտած են վաղ թէ ուշ ձուլւելու գերման աղջութեան մէջ: Եւ այս բոնքներացան կութիւնն է ու թելադրանքը և այդ բոլոր... յանուն ընկերվարութեան:

Շատ մարքսիստներ համաձայն են, որ աղջային հարցը արտակարգօրէն հրատապ հարց է և որ նրա լուծումը ընկերվարական չարժման մէկ շատ կարեւոր խնդիրն է: Յատկապէս նոր մարքսիստները, աղջային պայքարների աղջեցութեան տակ, նախորդ գարի վերջին փորձեցին շտկումի ենթարկել իրենց ուսուցչի տեսակէտները: Սակայն, նրանք թէպէտ ընդունեցին հարցի կարեւորութիւնը և նրա լուծման անհրաժեշտութիւնը՝ շատ չհուացան Մարքսի պատմահամարակառ գիտական տեսութիւնից:

Նրանց հայեցողութեամբ, աղջային հարցի լուծումը նախապայմանն է յաջող և զուտ դասակարգային պայքարի: Աղջային զգացումը մթափնում է, աղջա-

տում բանւորութեան դասակարգային զիտակցութիւնը, շաղկապում է նրան իր աղջութեանը, որի գաղաւիարախութիւնը անյարի է նրա շահերին: Բանւորութիւնը ընթանում է իր դասակարգային հակառակորդի՝ բուրժուազիայի զեկավարութեամբ: Վերջինս շահագործում է նրա աղջային զգացումը և ուղղութիւն տալիս իր իսկ ցանկութեան համաձայն: Որպէսզի այս շահագործումը տեղի չունենայ՝ պէտք է լուծել աղջային հարցը՝ տալով նրան աղատ զարգացման բալոր հնարաւորութիւնները: Այդ պայմաններում դասակարգային պայքարը է՛լ աւելի ցայտուն կը լինի, զուածզերծ ամէն օտար և խորթ տարրներից:

Անգամ Բրունի Խորհրդագողովի որոշումները, որոնք շատ հետաքրքիր էշ են բանում աղջային կաղափարի զարգացման համար մարքսիստական աշխարհում, այլ բան նկատի չունեն իրենց հիմնաւորումների մէջ, քան այդ. «Աչքի առաջ ունենալով, որ աղջային կարի շարունակուիլը հանդիսանում է իրը լաւագոյն միջոց, որի օգնութեամբ աիրող դասակարգերը ապահովում են իրենց տիրապետութիւնը և խանգարում են իսկական ժողովրդական շահերի արտայայտման...» Ըստ այսմ, ուրեմն, աղջային հարցի լուծումը դառնում է ոչ թէ ընկերվարական-փիլիսոփայական աշխարհայեցողութիւնից բխող սկզբունքային պահանջ, այլ յոկ գործնական կեանքի թելագրանք: Նա ոչ թէ մշակոյթային արմէքների ուսմունքէ, այլ մի միջոց բուրժուազիայի կամ բանւորութեան դասակարգային շահերը իրացնելու: Նա խանգարում է «քաղաքական յառաջդիմութեան», որը միայն առաջնորդում է զէպի լաւագոյն հանրակարգը:

Հարցի այսպիսի ձեսկերպումով, Բրիւնի Խորհրդագողովը մնաց մարքսիստական գետնի վրա: Այսուղ նպատակն ու միջոցը իրենց տեղն ու գերը փոխել են:

Ազգութիւնը որպէս մարդկային մշակոյթի մի տնհրաժեշտ ձև չի ըմբռնւում, հետեւապէս, հանդէս չի գալիս որպէս պատմութեան մնայուն, յարատեւ փաստերից մէկը, այլ նա միայն գործնական խնդիր է կապւած բանւորութեան դասակարգոյին պայքարի հետ, և արժեքաւոր է այնքան, որքան խանգարում կամ նըպաստում է նրա վերելքին:

Այստեղ մենք չենք ուզում նսեմացնել թրիւնի Ասորհրդաժողովի որոշումների արժեքը, որոնք մօտ երկու ասանամեակ գարձան լւազոյն բանաձեած գործնական թելազրանքները ազգային հարցի լու ծման խընդորում, Մեզ հետաքրքրում է լոկ այդ որոշումների մեկնակէաը: Իսկ քննելով այդ մեկնակէաը մենք յանդեր ենք այն եղրակացութեան, որ կանգնած մնալով մարքսիզմի պատմա-հասարակազիտական հիմունքների վըրա, անկարելի է ըմբռնել ազդային հարցը իր իսկական առու մով և համապատասխան գործերակերպ ընդդեմ:

Մարքիզմի պատմափիլիսոփայական ուսմունքի մէջ շատ մեծ զեր է խաղում քաղաքա - տնտեսական կեանքի կենտրոնացման փաստը: Քաղաքական ու տընտեսական կեանքի կենտրոնացումից Մարքսն այն եղրակացութեան եկաւ, որ դա ոչ միայն միակ ուզին է զէպի ընկերվարութիւնը առաջնորդող, այլ և միակ ձանապարհն է, որով մարդկութիւնը աստիճանաբար միջազգայնանում է, կորցնելով ազգային յատկանչական կողմերը: Նա այդ եղրակացութեան հասաւ նոր գարերի, յատկապէս 19րդ դարի պատմութեան ուսումնասիրութեամբ: Կ. Մարքսը ընկերվարութեան և քաղաքա-տնտեսական կեանքի կենտրոնացման մէջ զից մի սերտ պատճառական կապ, որով ընկերվարութիւնը դառնում էր առարկայական երեսյթների զարգացման հետեւանք: Նա մեր բարոյական կամքի ու մեր գաղափարական պայքարների որդիւնքը չէ, այլ հասարակա-

կան կեանքի առարկայական բնուշըման հետեւանք: Ընկերվարութիւնը բարոյա-փիլիսոփայական ուսմունք չէ հանդիսանեում, այլ միայն քաղաքա-տնտեսական մի սիստեմ: Տնտեսական ու քաղաքական կենտրոնացումը Մարքսի համար ոչ միայն պատմութեան խոչըր փաստերից մէկն է, այլ և աւետարերը ապագայ հանրակարգի:

Այն ժամանակաշրջանում, երբ գործում ու հեղինակում էր Կ. Մարքսը, դրամատիրութիւնը որպէս տնտեսական զարգացման նորագոյն հանդրւան, զարգանում էր Երոպայի մի քանի երկրներում: Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում: Այս պետքիւնների մէջ առաջանում էին դասակարգային նոր շերաւորումներ, որոնց հետեւանքը լինում է բանւորութեան դասակարգային գիտակցութեան գալը և ապագայ ընկերվարական հանրակարգի իդէալի մշակումը: Դրա հակառակ, Եւրոպայի միւս երկրներում զիս ևս հին անտեսական ձեւերն եւս պահում: Նրանք անհաղորդ են մնում դրամատիրութեան յեղափոխիչ ազգեցութիւններին: Եթէ դրամատիրական երկրներում բանւորութեանը վիճակւած էր, դասակարգային հակամարտութեան հետեւանքով, ազատարարը հանդիսանալ բոլոր ազգերի ու ժողովուրդների, ապա այդ ազատագրական պայքարի մէջ ոչ դրամատիրական տնտեսութեամբ ապրող ժողովուրդները մաս չունեն, որովհետեւ նրանց մէջ չեն հասունանում նորագոյն դասակարգերը, իրենց յեղափոխական արամազգրութիւններով: Նրանց մէջ զերես միջնադարեան ծանրաշարժ դասերն են իշխում — զիւղացիութիւնը, մանր արհեստաւորութիւնը, հոգեսորականութիւնը և աղնւականութիւնը:

Երկու անտեսական ձեւերի այս հակադրութիւնից Կ. Մարքսը չհանեց այն եղրակացութիւնը, թէ տնտեսապէս յետամեաց ժողովուրդներն էլ աստիճանաբար

ընկնելու են դրամատիրական կարգերի մէջ, այլ կանդառաւ այն տեսակէտի վրա, թէ այդ ժողովու րդները անհրաժեշտաբար պիտի կլանւեն մեծ պետութիւնների և ազգերի կողմից և այդ միջոցով միայն դառնան պատմութեան աղջակ ու նպաստեն ընկերվարական հանրակարգի արագացման։ Ուստի և 19րդ դարի փոքր ժողովուրդների աղջային շարժումները ոչ միայն Կարլ Մարքսի բարեցակամ ուշադրութեան չարժանացան, այլ ընդհակառակն հալածանքի և ծաղրի ենթարկեցին։ Այդ աղջային շարժումների ներքին իմաստն էր վերականգնել երթեմնի քաղաքական անկախութիւնը, մի բան՝ որ կը նշանակէր՝ մեծ քաղաքական կենտրոնացումները փլուզումի ենթարկել։ Կ. Մարքսը չնկատեց, որ իր ժամանակի քաղաքական ու տնտեսական կենտրոնացումները բռնութեան գործ են և ոչ թէ ժողովուրդների գործակցութեան արդիւնք։ Այս պարագան չնկատեց Կ. Մարքսը, ուստի և փոքր աղջերի քաղաքական ու մշակոյթային վերածնութեան փորձերը և նրանց աղատագրական ձգտումները դատապարտեցին Մարքսի գրչի տակ՝ որպէս յետաղէմ, հակայեղաւ փոխական գործեր։

Քաղաքական ու տնտեսական կենտրոնացման խընդիրը Կ. Մարքսը չէ, որ առաջին անգամ քննութեան նիւթ է զարձնում։ Որպէս պատմագիտառութեան տեսութիւն, նա աւելի հին է։ Տնտեսական կենտրոնացման ուսմունքը կայ Աէն-Սէմոնի վարդապետութեան մէջ, քաղաքական կենտրոնացման ուսմունքը շատ ուժեղ ձեւով երեան եկաւ յատկապէս Գերմանիայում, ուր աղջութիւնների ծագման ու զարգացման խնդիրը սերտօքն յարակցւեց գերման աղջութեան քաղաքական զարգացման հետ։ Միայն, այսուղ պիտի շեշտել, որ Մարքսը տարբեր ըմբռնում տւեց քաղաքական աղջակն։ Մինչ նախորդ զարի գերման պատմութեաների

տառմասսիրութեան խնդիրն էր՝ սկսած Բանկէից և վերջացած Մայէրովով ու Լամպրեխաուով՝ թէ ի՞նչ ազգակաների տակ, ցեղային, հասարակական ու քաղաքական ինչպիսի պայմաններից է ստեղծւում ազգն ու ազգութիւնը, Մարքսի ու մարքսիսների քննութեան ասարական է թէ ի՞նչ բնոյթ ստացաւ ազգութիւնը նոր ժամանականերում և թէ հասարակական զարգացման պրոցեսում ինչ ապագայ է սպասում նրան։ Սերտօքն յարակցելով ազգութեան խնդիրը հասարակական այլ ուժերի հետ՝ նրանք յանդեցին այն եղբակացութեան։ Թէ ազգութիւնը որպէս ընկերային-պատմական մի երեսոյթ, որի ծագումը պայմանաւորւած է նոր զարերի տնտեսական ուժերի զարգացումով անվերապահօրէն զատապարտած է մահւան՝ նոյն քաղաքական և տընտեսական ուժերի կենտրոնացման օրէնքով։

Սակայն, այս պնդումները ակնբախ կերպով հակառում են պատմական իրականութեանը։ Պատմութիւնն ազգութիւնների ստեղծւումն ու ինքնահաստատումն է։ Եթէ տնտեսութեան ու քաղաքականութեան կենտրոնացումը նպաստած լինէր միայն մի քանի խոշոր, մեծ աղջ-պետութիւնների ստեղծման, որոնք աստիճան առ աստիճան կենտրոնացնէին աշխարհն ու նրա պատմութիւնը։ Կթէ նորագոյն զարը զնար այն լնութացքով, որ Անգլիան, Գերմանիան, Ռուսաստանը զանային հաւաքող, ձուլող, զօդող քաղաքական ու մշակոյթային ուժերը ու նրանց շուրջն ու ներսն ապրով «բազում ազգ և աղինք» աստիճանաբար կռւլ գնային նրանց ջրապոյտի մէջ, զեռ կարելի կը լինէր ընդունել Կ. Մարքսի աղջային ուսմունքի ճշմարտութիւնը։ Սակայն, ոչինչ այնքան չնպաստեց փոքր աղջերի վերագարթօնքին, մշակոյթային շարժման, ազգային գիտակցութեան հորիզոնի ընդլայնման, քաղաքական իշխալի մշակման, որքան նոյն քաղաքա-տնտեսական

կենտրոնացումը, որը և պատճառ դարձաւ մեծ պետական միութիւնների վլուգումին։ Պատմութիւնն ուսուցանում է, որ ազգերը չեն ձուլում, չեն ոչնչանում, այլ բաղմանում են քանակով և խորանում որակով։ Պատմութիւնը ցոյց է տալիս, որ ազգերի շերտաւորման այդ պրոցեսը տեղի է ունենում դրամատիրական տնտեսութեան գորացրջանում էլ աւելի արտգունքոյժ, քան նախորդ ժամանակներում։ Պատմութիւնը ցոյց է տալիս, որ բազմաթիւ այլազգակներին զուգակից՝ դրամատիրութիւնը իր գերն ունի ազգային զարթօնքի, նրա ինքնազիտակցութեան գոլուն և քաղաքականապէս ձեւորելու մէջ։

Ահա այս է ցուցահանում պատմութիւնը, եւ չկայ հակառակը պնդող մի փաստ, չկայ մէկ լուրջ ուսումնասիրութիւն, որ համոզէր մոզ, թէ ազգը որպէս փաստ, և ազգութիւնը որպէս սկզբունք անկման են դիմում։

Պատմութեան մէջ տեղի է ունենում ոչ թէ «մշակոյթի մոնիկմ», այլ մշակոյթի շերտաւորումն ու երանգաւորում։ Եւ կրկնում ենք, ազգութիւնների բազմացումն ու ազգային մշակոյթի գունեղօրէն դրսերւիւը տեղի են ունենում նտեայն քաղաքական ու տնտեսական ուժերի ազգեցութեան տակ, որոնցից կ, Մարքսն ու մարքսիստները հակառակ հետեանքներ էին սպասում։

Սակայն, սա պատմական կիսնքի մի դէմքն է — անհատականացնող գէմքը։ Ինքնահաստատող և անհատականացող ազգերը չեն մեկուսանում, չեն ամփոփւում իրենք իրենց մէջ, այլ աշխատակցում են իրարհետ, ազգում են իրար իրար և ազգում են իրար իրարից։ Ստեղծում է միջազգայնութիւնը, որ զուգընթաց է ազգայնութեանը։ Չկոյ մի գորացրջան, որ ազգերի մէջ փոխազարձ կալ, ազգեցութիւն, խաղողու ուղղ-

մական յարաբերութիւն եղած չլինի։ Նորագոյն շըրջանում միջազգայնութիւնը դառնում է աւելի ներոյժ, աւելի ազգեցիկ։ պատմութիւնը դառնում է համաշխարհային պատմութիւն։

Նորագոյն միջազգայնութիւն բնորոշիչ կում այն է, որ նա զօգում է գարի լաւագոյն զադափարների՝ ընկերվարութեան և ուսմիավարութեան հետեւ ձգտում է գոտնալ համերաշխատութեան, զործակցութեան և յառաջդիմութիւն արտայայտութիւն։

Սակայն, Մարքսն ու մարքսիստները այս խնդրում ևս իւրայատուկ տեսակէտերեան բերին։ Ելակէտ ունենալով քաղաքական ու անտեսական կենտրոնացման ուսունքը՝ նրանք յանդեցին, եթէ կարելի է այսպէս ասել, «ազգութիւնների կենտրոնացման» ուսմունքին, կամ «մշակոյթի մոնիկմին»։ Բայց սա նշանակում է նաև, որ ազգութիւնը հակադրում է միջազգայնութեան, որ սրանք պատմական կեանքի զարգացման տարբեր էտապներ են համարւում և անյարիր իրար։ Մարքսիստների մօտ միջազգայնութիւնը հաւասարագոր է զառնում ապազգայնութեան։ Հստ այսմ փոքր ազգերը դրամատիրութեան կենտրոնացման պրոցեսում կորցնում են իրենց առանձնայատկութիւնները։ Կորցնում են լեզուն, ձուլում մեծերի մէջ, ապայգայնանում։ Դրամատիրութիւնը ապազգայնացնող ուժ ունի։ Արդիօք այդպէս է։

Ենք արդէն տեսանք այդ տեսակէտի սխալ լինելը պատմութեան տեեալների տեսակէտից։ Այժմ տեսնենք թէ արամաբանական ինչ հետեանքների է հասնում Մարքսի այդ ուսմունքը։

Ենթազրենք, թէ ազգութեանց ձուլումն անխուսափելի է։ Սակայն, մի ազգ ձուլում է որեւէ ուրիշ ազգութեան հետ։ Ապազգայնանալ նշանակում է կապւած չզգալ իրեն ծնող ազգային հաւաքականութեան հետ,

չզգալ իրեն ազգային մարմնի անդամ, չհամարել իրեն մի որոշ մշակոյթային հաւաքականութեան մասնիկը, կապւած չինել իր ազգութեան հետ լեզով, հոգւով, ապրումներով, պատմուկան աշցեալով։ Ապազգայնացուղը կախւած չէ մնում օդի մէջ. մէկ ազգային մարմնից կորեկով, նա պիտի մասնիկը գառնայ մէկ ուրիշ հասարակական համակեցութեան, որ նորէն ազգային է։ մշակոյթային ապազգայնացումն կատարում է միշտ որևէ ազգութեան օգտին, որն ընդհանուր առմամբ մշակոյթով աւելի բարձր է, քաղաքական ու անտեսական տեսակետից աւելի զօրաւոր։ Այսպիսով, ապազգայնացումը տեղի է ունենում ազգայնանալու համար։ այլ խնդիր է, թէ ինչպիսի «ազգային» է դառնում նայս նոր միջավայրում։ Ու երբ առում ենք, որ տնտեսութիւնը և քաղաքականութիւնը առաջ են ըերում «մշակոյթի մոնիզմ»՝ սրա իրական իմաստն այն է, որ ազգութիւնների ապազգայնացումն տեղի է ունենում յօդուած մէկ կամ մի քանի զօրաւոր ազգութեան։ Ուրիմն, գարձեալ ազգութիւնն է, որ մնում է, գարձեալ յանուն ազգութեան է, որ կատարում է ապազգայնացումը։ Նա է, որ մնում է, որպէս փաստ, որպէս մնայուն իրականութիւն։

տարելութեան վրա։ Անհատի բարձր բարոյականից էլ նա հետեւցնում էր հասարակական բարենորոգումները ողորմածութեան և բարեգործութեան սկզբունքով։ Նա ջանում էր այս կեանքում նւազագոյն արդարութեան իշխանութիւնը հաստատել։ Նրա սկզբունքների համար որոշ պատրաստի հող կար յունահռոմէական աշխարհում, ուր յոյն վիլլիսոփայութիւնը մշակել էր արդէն բարձր բարոյական գաղափարներ։ Մենք որ և է փաստ չունինք, որ յոյն մտածողութիւնը, որպէս բարոյական ուսմունք, անդրադարձում ունեցած լինի մեր երկրում, իսկ քրիստոնէութեան սկզբունքները հայ կեանքում ամուր արմատներ չըռնեցին։ Չորրորդ գարում եկեղեցին տեղ գրաւեց մեր հասարակական կեանքում ու քաղաքական իշխանութեան կից գարձաւ ամէնէն ազգեցիկ հաստատութիւնը։ Նոյն չորրորդ գարում նա տղատագրում է նաև արտաքին կախումից։ Պապի օրով հայոց կաթոլիկոսը այլևս չի գնում կեսարիա օծւելու, այլ օծւում է հայ եպիսկոպոսների ձեռքով։ Առաջ էլ որոշ չէր այդ կապը. հայ եկեղեցին հասկանում էր այդ որպէս բարոյական կապ, կեսարիան որպէս իրաւական, և բողոքում էր Պապի նորմուծութեան գէմ, որպէս իր իրաւունքների ինախտումն։ Բայց անկախանալով օտարից՝ հայոց եկեղեցին ինքնավար չի դառնում, այլ մնածապէս կախում է հայ քաղաքական իշխանութիւնից։ Սակայն ոչ եկեղեցու պետականացումը, ոչ արտաքին ուժերից անկախանալը՝ չէին կարող նրան դարձնել մեր ընկերային կեանքում մնայուն ազգակ, եթէ նա չներչնչէր քրիստոնէական վարդապետութեամբ, եթէ եկեղեցին չդառնարխողովակը նրա կրօնաբարոյական աշխարհահայեցողութեան։ Եղածը բաւական չէր ապահովելու համար հայութեան անկաշկանդ զարգացումը։ Եղածը լոկ արտաքին յեղաշրջում էր. նա չէր թափանցել հոգիների մէջ։

Սա հոգիների բեկու մն չէր։ Քրիստոնէութեան հիմքերով չստեղծեց նոր կենցաղ. մարդկանց մէջ նոր, աւելի կատարեալ յարաբերութիւն։ Մէկ զարի ընթացքում քրիստոնէութիւնը մեր երկրում ստեղծեց մէկ նոր մըտառական դաս, որ կրթւում էր փոքրասիսկան յոյն գիտութեանց կենտրոններում, կարդում էր յոյն և ասորի լեզուները, որոշ նորութիւն մտցնում իր կենացդի մէջ։ Յուն երկրումն էլ քաղաքական և կրօնական կենտրոններում յոյն, ասորի և հայ քարոզիչը բերեց իր հետ և որոնք որ, որ Գրիգոր Լուսաւորիչը բերեց իր հետ և որոնք տաւորականն-հոգեւորականների նոր խմբեր։ Սրանք Ս. տաւորականն-հոգեւորականների նոր խմբեր։ Սրանք Գրիգոր կարդում էին յունարէն կամ ասորերէն, ասկա թարգմանում էին հայերէն իրենց ունկնդիրների համար ու մնկնաբանում կարդացածի խմաստը։ Ստեղծւել էր բանաւոր թարգմանիչների մի դաս, որ խորապէս զգում էր իր գործի կարեսորութիւնը, բայց և զժուաց զգութիւնը։ Ամբողջ չորրորդ գարում հայ եկեղեցին և բութիւնը։ Ամբողջ հայութիւնը ծանր աշխատանք կատարեցին մտաւորականութիւնը ծանր աշխատանք կատարեցին նաև կայութելու օստար լեզվի միջոցով հայութիւնը ստեղծելու, Երիսոնեկուրի նեղի հայացնելու։ Սակայն անյաջող. օտար լեզվի քրիստոնէութիւնը կառուցանել միայն օտար ազգութիւնը։ Ուստի և հայութեան զանգւածները անմասն մնացին ուժի քրիստոնէութեան հոգեւոր հազորդակցութեան։ Ու եթէ միջոցով ու նրա վրա պիտի կերտւէր հայութիւնը, որպէս աղքային-մշակութային միութիւն՝ չեղաւ։ Քրիստոնէութիւնը պետականացաւ, բայց չազգայնացաւ։ Ստեղծւել էր եկեղեցականների, մտաւորականների մէկ փոքրիկ խաւ, որ օտար լեզու խմանալու պատճառով կարգում էր Ս. Գրիգոր, եկեղեցական հայրերի երկերը, աշխատում իր կեանքն ու մտածումը ձեւել նոր կրօնի սկզբունքների վրա։ Հայութիւնը իր ճնշող միծամասնութեամբ մնաց կառչած հին աւանդութիւնն-

ներին, կենցաղին, ոգուն: Եւ այդ կենցաղը իշխում էր հայ արքունիքում, նախարարական միջավայրում, ժողովրդի մէջ: Միայն փոքրաթիւ կղերականներ, հաւաքւած Գրիգոր Լուսաւորիչի տան շուրջը, յամառօրէն պայքար էին մզում հին կենսահայեցողութեան, բարքի, սովորութեանց դէմ: Այդ պայքարը յաճախ ողբերգական բնոյթ էր ստանում. կաթողիկոսների բրածեն անելը, սպանելը, քաղաքական ահաբեկումը սովորական բաներ էին:

Ճիշտ է, մեհեանները քանդւեցին, նրանց տեղը նոր տաճարներ կառուցւեցին, քրմութիւնը որպէս դաս վերացւեց, նրա տեղը քրիստոնէական հոգևորականութիւնը ծնւեց, բայց հոգեւոր մարդը մնաց հոյնք: Հայութիւնը, որպէս հոգեւոր միութիւն ստեղծւած էր հեթանոսական կրօնի վրա, մնւել էր նրա երգերով, նրա տօնտկան հաւաքոյթներով, նրա ներշնչած կենցաղով և այդ բոլորը խտացնող հայ լեզով: Եւ շատ բնական է, որ հին, հեթանոս հայը մէկ անդամից փոխւել, ինքն իրենից հրաժարւել չէր կարող: Քրիստոնեութեան ազգայնացումը նոր հայ մարդ ստեղծելու հարց եր դառնում: Հեթանոս մարդք պէտք էր փոխել, քրիստոնեայ մարդու նկարագիրը պէսք եր կերտել: Հեթանոս հայով քրիստոնէութիւնը հաստատել Հայաստանում անկարելի էր: Որքան հայը հոգեբանորէն և կենցաղով չէր փոխւել, իր կապերը չէր կտրել հին աշխարհահայեցողութիւնից, այնքան քրիստոնէութիւնը մնալու էր մեկուսացած, կրթւած, գլուխից մարդկանց սեփականութիւն, հետեւապէս հասարակականորէն անարժէք: Նա կը գառնար մեր կեանքի մեծագոյն յեղափոխութիւնը, եթէ դառնար հոգեկան յեղաշրջում: Հին և նոր կենցաղի, կենսահայեցողութեան բաղիսումն է չորրորդ դարի մեր պատմութիւնը: Եթէ քրիստոնէական կենցաղի, բարոյական ըմբռնումների նւազագոյն տարրերի

կրողը հայ հոգեորականութիւնն էր, որի գլուխը կանգնած է Գրիգոր Լուսաւորիչի տունը, ապա հին հեթանոսական կենցաղը, կարդը ղարդանում էր հայ Սրբակունիների արքունիքում: Նրանց վարք ու բարքը ու չինչ չունէր քրիստոնէական, նրանք իրենց կեանքը անց էին կացնում խնձոյքների, զւարձութիւնների, խարդաւանսնքների, կոհենների և արքեցութեանց մէջ: Խայ աշխարհիկ և հոգեւոր իշխանութեանց պայքարը չայ աշխարհիկ և հոգեւոր իշխանութեանց պայքարը ոչ միայն քաղաքա-տնտեսական հիմքեր ունէր, այլ և երկու հակադիր կենսահայեցողութեանց պայքարն եր: Լուսաւորիչ տան կաթուղիկոսները յանդիմանում էին ծնաւորներին, նախարարներին իրենց հեթանոսաթագաւորներին, կամ կենցաղի համար, իսկ թագաւորները գանակոծում և սպանում էին կաթողիկոսներին:

Այս պայքարի մէջ հայ նոր ստեղծւող կղերականութիւնը ոչ միայն մեկուսացած պիտի մնար, այլ և վասնդւած՝ աշխարհիկ իշխանութեան դէմք՝ եթէ լայն յեթանունների չունենար: Բայց ի՞նչ միջոցներով. — միայն և միայն քրիստոնէութիւնը ազգայնացնելով. միայն այդ գէպքում հայ եկեղեցին կը հաւաքէր իր ըուրջը հայ այդ գէպքում հայ եկեղեցին կը լայն զանգվածները, կը լինէր առանցքը նոր կերտուլ լայն զանգվածները, կը փրկւեր ինքնիւրբանի ել: Հայ հոգեւոր միուրբանի եւ այդ ձեռվկ կը փրկւեր ինքնիւրբանի գետականացրին քրիստոնէութիւնը, Արշակունիները պետականացրին քրիստոնէութիւնը, նրանց այդ էլ պէտք էր, սակայն այդ քիչ էր — քիչ նրանց այդ էլ պէտք էր, սակայն այդ քիչ էր — քիչ մարտաքին գանդին դէմ պատնէշ ունենալու տեսէր և արտաքին գանդին դէմ պատնէշ ունենալու հասակէտից, քիչ էր և կրօնը հայկական դարձնելու հասակէտից, քիչ էր և կրօնը հայկական դարձնելու հասակէտից, այդ էր հայութեան քրիստոնէացումը այդ աստիմար: Եթէ հայութեան քրիստոնէացումը այդ աստիմար մանի վրա կանգ առնէր, նա ոչ մէկ հիմք կունենար մանի վրա կանգ առնէր, մտածութեան գագացումի: Եթէ զականքն տեղ գրաւեր հայի հոգեկան կեանելում, լինէր կիսինքն տեղ գրաւեր հայի հոգեկան կեանելում, լինէր կիսինքն տեղ գրաւեր հայի հոգեկան պետականացումի: Եթէ զականքն տեղ գրաւեր հայի հոգեկան պետականացումի դեֆիստներեան պետականացումի դեֆիստներեան կավարենի գործն եր, ապա երա ազգայնացումը հայ կավարենի գործն եր,

հռոմէական աշխարհից, որ դառնում էր Բյուզանդիոն, իւրացրել էր քրիստոնէութիւնը, պատւաստել էր այն յունական մշակոյթի վրա, տեսլ էր նրան իր լեզուն, որը կրօնի միջոցով գարձել էր համաշխարհային, միջազգային լեզու, նոյնացել էր քրիստոնէական արժէքների տարածման հետ։ Քրիստոնէութիւնն ինքը Բյուզանդիոնում պահում էր ազգային բնոյթ, յունականանում էր։ Կայսրներն էին հրաւիրում տիեզերական ժողովները, նրանք էին քրիստոնեայ եկեղեցու պետերը։ Աշխարհիկ իշխանութիւնն էր որոշում արևելեան քրիստոնէութեան դաւանանքը։ Յոյն լեզւի, դաւանանքի միջոցով, Բյուզանդիոնի ազգեցութիւնը տարածւում էր իր քաղաքական սահմաններից դուրս։

Զպէտք է մոռանալ որ չորրորդ դարի վերջին տեղի ունեցաւ մեր պատմութեան մեծագոյն դէպերից մէկը։ Պարսկաստանը եւ Բյուզանդիոնը փոխազարձ համաձայնութեամբ Հայաստանը բաժնեցին իրենց մէջ, ըստ որում մեծագոյն մասը՝ քաղաքական և կրօնական կենտրոնով մնաց Պարսկաստանին։ Արեւելքում երկու նւաճողական պետութեանց մէջ իսաղալութիւնը պիտի վերահաստատէր ի հաշիւ Հայաստանի։ Մեր մատողները այլեւս հայ քաղաքական մարմնի հետ որ եւ է յօս կապել չին կարող։ Հայ Արշակունիները կատարել էին իրենց պատմական գործը՝ կրօնապէս բաժանել իին հայութիւնը Պարսկաստից, կազմակերպել ինքնուրոյն հայոց եկեղեցին։ Այժմ հայութիւնը մտնում էր պայքարի երկրորդ փուլի մէջ։ Վտանգը սպառնում էր մըշակութապէս շատ բարձր Բյուզանդիոնից՝ նրա լեզւից, նրա դաւանանքից, մանաւանդ որ Հայաստանի մի մասն էլ նրա իշխանութեան տակն էր։ շուտով այնտեղ քաղաքական անկախութեան ստերն էլ վերացաւ։ Հայաստանը մտաւ կայսրութեան վարչութեան մէջ եւ կառավարւեց կիւրապաշտով։

հովեւորական-մտաւորականութեան գործը պիտի լիներ։ Բայց այդ մեծ գործը կարելի էր կատարել միայն հայ լեզւի միջոցով։

Հայ լեզուն էլ հիմք կարող էր լինել նոր ազգայնութեան, եթէ նա դառնար գրի, գրականութեան լեզու։ Այդ արտօնութիւնը ունէին մեզ մօտ յոյն և ասորի լեզուները, ուստի և հայ լեզուն նրանց հանդէպ ստորագաս էր. պէտք եր բարձրացնել մեր լեզուն մարդկային լաւագոյն յոյզերը եւ մտելը բարգմանելու աստիճանին։ Գիր ունեցող հայ լեզւի վրա միայն կարող էր կառուցւել քրիստոնէութիւնը։ Այս նշանակում է, թէ լեզւի տեսակէտից նա պիտի ազգայնանար, գուրս ձգէր լեզւի ասորի միջազգայնացած լեզուները, որպէս ներյոյն և ասորի միջազգայնացած լեզուները, ունեցներին հոգեւոր հազորգակցութեան միջոց և բոնէր նրանց տեղը։ Օտար լեզուները պիտի լինէին հայ մտաւորացանի համար օժանակ լեզուներ՝ վերահասու լինելու ժամանակի բարձր մշակոյթի պառզներին։

Լեզւի և կրօնի ազգայնացման այս գործը սկսւել էր Արեւելքում շատ առաջ։ Նա հանդէս էր գալիս որպէս գաւանական վէճ՝ աթոռների առաջնութեան պայքար, որոնց հետեաննքով՝ Մերձաւոր Արեւելքում քրիստոնէութիւնը շատ վաղ ազգայնացաւ կազմակերպելով տեղական եկեղեցիներ՝ սիրիական, դպտական, յունական լեզուների հիմքով։ Հայ եկեղեցու ազգայնացումը և հայ լեզւի եկեղեցականացումը այդ ընդհանուր երեւոյթի մէկ արտայայտութիւնն էր։ Զորրորդ գարի վերաւորից մեր լաւագոյն մտածողները, հոգեւոր և աշխարշներից զեկավարները զգում են հայ գրի կարիքը և իրենց հիկ զեկավարները զգում են հայ գրի կարիքը և իրենց մտերը նւիրում նրա բաւարարումին։ Գիրը մէկ համարական անհրաժեշտութիւն էր, որովհետեւ հինգերորդ րային սկզբին հայութիւնը նոյնքան անապահով էր իր գարի սկզբին հայութիւնը նոյնքան անապահով էր իր պատմամշակութային զարգացման մէջ, որքան չորրորդ գարի սկզբին։ Այս անգամ վտանգը գալիս էր յունակառավարւեց կիւրապաշտով։

Պարսկա-Հայաստանում էլ պարսիկներն էին հաւլածանք հանում հայերի դէմ, որովհետեւ հայ-քրիստոնիայի մէջ նրանք տեսնում էին քաղաքականապէս և մշակոյթով բիւզանդացուն, քաղաքանապէս պարսիկների վասալ հայը այդտեղ քրիստոնեայ մշակոյթի կրողն էր - յոյն լեզւի, յոյն գրականութեան, եկեղեցու: Եթէ պարսիկները հաշտէին էլ հայի քրիստոնեայ մնալու հետ, ապա նրանք պիտի ջանային վերացնել յոյն ազդեցութիւնը իրենց հովանու տակ եղած շրջաններից:

Հայ քաղաքական մարմինը անկման էր զիմում: Արդ՝ նրան փոխարինելու էր միայն հայ գիրը. որ մայրենի լեզուն պիտի բարձրացնէր համահայկական լեզւի աստիճանին և քրիստոնէական միտքը տարածէր ամէնից խոնարհ խաւերի մէջ: Եւ միայն գրի, տւելի ճիշդ գրի աստիճանին բարձրացած հայ լեզւի միջոցով հայոց եկեղեցին կը դառնար հաւատքի եւ իմաստութեան տուն, կը հաւաքէր իր շուրջը ցրւած հայութիւնը և կը դառնար ազգապահպանման մեծագոյն գործօնը: Հայոց պետականութեանը պէտք է փոխարինէր հայ լեզւի վրա կառուցւած հոգեւոր մշակոյթը. հայ բաղաբական գործի տեղը պէտք է բռնէր հայ հոգեւորական գործիը, մտաւորականութիւնը: Արշակունիները ընձեռեցին մէկ հայութիւն կերտելու գործը, բայց չվերջացրին. նրանք գործի լրացումը յանձնեցին նոր կազմակերպւած միութեան՝ հայոց եկեղեցուն եւ հայ կղերին: Մեր հասարակական ուժերի զարգացման մէկ շատ հետաքրքիր փուլն է այս փոխանցումը — մեր պատմութեան հական փաստերից մէկը, բաղաբական հայութեանը յաջորդեց մեակուրային հայութիւնը: Եւ ինչպէս Բիւզանդիոնում հեթանոսութիւնը, որպէս պատմա-մշակութական գաղափար է հաստատութիւն, վերջնականապէս տեղի տեսն չորրորդ գարի վերջին և յայտա-

րարւեց հակապետական ուսմունք և կաղմակերպութիւն, այնպէս էլ միայն հինգերորդ զարում քրիստոնէութիւնը մեր երկրում ազգայնացաւ, հայացաւ գարձաւ հայկական կրօն: Եթէ բաղաբական հայութիւնը մի քանի դար կառուցւել էր հայոց ներանուսութեան վրա, մշակութային հայութիւնը հինգերորդ գարից սկսած կառուցւում է քրիստոնէութեան վրա: Նա իր կնիքն է գնում հայ մտքի, արւեստի, երգի, ճարտարապետութեան, եկեղեցու վրա՝ երկար գարեր չարունակ՝ հայութիւնը գարձնելով կրօնա-դաւանական ազգայնութիւն: Հինգերորդ գարի սկզբին ծնունդ է առնում հայ գիրը՝ ինչպէս չորրորդ գարի սկզբին, նման պայմանագիրը՝ ինչպէս չորրորդ գարի սկզբին, նման պայմանաներում, ծնունդ էր առնում հայ քրիստոնէութիւնը: Երկուսն էլ միեւնոյն գործողութեան՝ հայութեան ազգայնացման տարբեր աստիճաններն են: Հայ գիրը դուրս եկաւ հայ եկեղեցու կղերական միջավայրից, որ ամէնից նից շատ էր զգում գրի, լեզւի կարիքը, որ ամէնից բանիմացն էր, ամէնից կաղմակերպւածը: Գրի միջոցով դասային և հանրային գոյութեան ամուր պատւան: Գրի միջոցով հայ լեզուն, որ մինչև այդ դասագան: Գրի միջոցով հայ էր, հայ արքունիքի, նախարարների, եկեղին լեզու էր, հայ բարձրական, ապագասաղեցու լեզուն՝ դառնալու էր ժողովրդական, ապագասաղեցու լեզու. նա քրիստոնէութեան միջոցով յին, ազգային լեզու. նա քրիստոնէութեան միջոցով ընդգրկելու էր աւելի լայն զանգվածներ, նաև խոնարի շատերը: Հայ գրական լեզւի վրա պիտի հիմնէր հայ խաւերը: Հայ գրական լեզւի վրա պիտի հայմնէր հայ ուստականորէն թուլացող և ուամկավար ազգութիւնը: Պետականօրէն թուլացող և մեռնող հայութեանը, որ դասայնօրէն կաղմակերպւած, աւելի սեղմ շրջանակ ունէր, յաջորդեց գրական-լեզւակ. հոգեւոր հայութիւնը, որի հասարակական յենարանը հոգեւոր հայութիւնը, որի հասարակական հայութիւնը, ընդգրկում էր և խոնարի խաւը: շատ աւելի լայն էր, ընդգրկում էր և խոնարի խաւը: Քրիստոնէութեան և հայ գրի միջոցով հայութեան դաշտական կազմակերպութիւնը տեղի տւեց ազգային կազ-

մակերպութեան։ Նոր կրօնի միջոցով ամէնքը դարձան մարդ-անհատ, եկեղեցու անդամ և իրենց կարողութիւնները հանդէս բերեցին հարստացնելով հայ մըշակոյթի բոլոր ճիւղերը։

Հայոց պետականութիւնը կատարել էր իր գործը։ Հինգերորդ դարի սկզբին, զգալով իր վախճանը, նա մեր երկրի և ժողովրդի բախտը յանձնեց հայոց եկեղեցուն, որ և կերտեց հոգեոր հայութիւնը։ Եւ վերին աստիճանի խորհրդանշական է, որ հայ գրերի գիւտի վրա աշխատում էին հայոց թագաւորը՝ Վումշապուհ, որ պայծառ գիտակցում էր իր գահի ժամանակաւոր լինելը, հայ եկեղեցու պետը՝ Սահակ, դարի լաւագոյն մտաւորականը և առաջին հայ գիտունը և մեր պատմութեան մեծագոյն դէմքը՝ մեր բոլորի հոգեոր հայրը Ա. Մեսրոպ։

ԱՏ. ՆԱԶԱՐԵԱՆ

I

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՒԱՆԱՆՔԸ

Ստեփիանոս Նազարեանի փիլիսոփայական աշխարհահայեցողութիւնը և քաղաքական դաւանանքը կազմակերպւել է Հեղելի և Իդէալիստական դպրոցի խոր ազդեցութեան տակ։ Այդ փիլիսոփայական դպրոցի միշտ ազգեցիկ կենարոնն էր նաև Դորպատը, ուր ուսել է Նազարեանը և անմիջական ազգիւրից վերահասունեղել նախորդ դարի առաջին կէսի ամենամեծ և ազգեցիկ իմաստասիրական դրութեան (սիստէմին), Ուստի, Նազարեանի քաղաքական դաւանանքը հասկանալու համար անհրաժեշտ է մի քանի խօսք ասել Հեղելի պետական ու պատմական ուսմունքի մասին։ Եւս առաւել այդ անհրաժեշտ է, որովհետեւ մեր մեծ վերածնիչի ընկերային ուսմունքը ընդհանրապէս սերտորէն յարակցւում է իր ժամանակի՝ Եւրոպայում գոյութիւն ունեցող հասարակական գաղափարների հետ։ 1840-60 թ. ազգային հարցը այդ գաղափարների մէջ բռնում է առաջին տեղը։ Նազարեանի հասարակական ու գրական աշխատանքի միջուկն էլ հայոց ազգութեան խնդիրն է։ Մեր ազգային հարցը, աւելի ճիշտ ոռւսահայոց հարցը նա քննում է Եւրոպական ազգերի պատմութեան, գիտական տեսալիքով՝ հիմնաւորելով այն ժամանակի մեծագոյն իմաստասիրական ուղղութեան վրա։

Մենակ Ստ. Նազարեանը չէր, որ ենթարկւել էր Հեղելի փիլիսոփայութեան։ այդ իմաստասիրական կառուցւածքը յատկապէս շատ մեծ ընդունելութիւն գտաւ Արևելեան Եւրոպայի ազգերի նոր ստեղծող աշխար-

հիկ մտաւորականութեան մէջ։ Մասնաւորապէս ոռւս ընկերային-քաղաքական միտքը դարբնուում էր Հեգելի ուսմունքի հիման վրա, և ստեղծուում էին հոսանքներ— զապադնիկները (արևմտականներ) և սլավեանոփիլները, որոնք քննութեան նիւթ ունէին, ի վերջոյ, ոռւսաց ազգութեան խնդիրը։ Ի հարկէ, Հեգելի վարդապետութեան բոլոր մասերը նոյն ուշազրութիւնը չէին զրաւում։ Եթէ Գերմանիայում նրա աշակերտները և յատկապէս ձախ հեգելեանները իւրացրին նրա մեթոդաբանութիւնը՝ տալով Հեգելի ուսմունքից շատ հեռացած նոր բովանդակութիւն, ապա արևելեան Եւրոպայի բազմաթիւ ազգերի մտաւորականութիւնը հետաքըրքրւեց նրա պատմափիլիսոփայութեամբ, որի մէջ ոգու ստեղծադործող կարողութիւնը և նրա առարկայացումն առաջնակարգ նշանակութիւն էր ստանում։ Հեգելի պատմագիտական և պետական ուսմունքը ձնշւած ու անազատ ազգերի մտաւորականութեան համար սոսկ ձեմարանական ուսումնասիրութեան նիւթ չէր, այլ մի ուժեղ զէնք քաղաքական-հասարակական պայքարի համար։

«Բացարձակ ոգին» իր ինքնութիւնը, «իրենը» արտայայտում է պատմութեան մէջ։ այստեղ նա հասնում է ինքնագիտակցութեան, ձանաչում է ինքն իրեն։ Իւրաքանչիւր դարաշրջանում այս կամ այն ժողովուրդը, աւելի ճիշտ, ազգը հանդիսանում է ոգու կրողը և որպէս այդպիսին դառնում է պատմական ժողովուրդ։ «Ընտրեալ» ազգը բացարձակ ոգու իրացնողն է, ձեւուրողը պատմութեան մէջ։ Ոգու գործն է՝ ձգտել հասնելու անսահման ազատութեան, այդ նրա ներքին էութիւնն է, որը իրականանում է աստիճան առ աստիճան։ Ըստ այսմ պատմութիւնը զառնում է ազատութեան գաղափարի յարատե ամման մի սրոցես։ Հին արևելքում ազատ էր մէկը, Յունաստանում և Հոռմում նա

զառնում էր բոլոր քաղաքացիների ազատութիւնը, նոր զարերում և յատկապէս նորագոյն շրջանում ազատութեան սկզբունքը կապւում է մարդու գաղափարի հետ։ մարդն ազատ է ու ազատ պիտի լինի հէնց նրա համար, որ մարդ է ծնւած։ Այս առումով ազատութեան գաղափարը սրբագրւեց ամէն նիւթական տարրերից և ստացաւ բարոյական հիմնաւորում։ Բացարձակ ոգին, որպէս անսահման ազատութիւն և վերջինս էլ որպէս բարոյական սկզբունք լաւապէս առարկայանում և հաստատում է պետութեան մէջ, ուր ոգին, գաղափարը լիակատար ու ամբողջական արտայայտութիւն և բարոյական իմաստ է ստանում։ Պետութիւնը բանականութեան իրացումն է, այն աշխարհը, որ դարձել է ոգի, ազատութիւնը իր կատարելութեան մէջ։ Եթէ այս է պետութիւնը, ապա ուրեմն նրա նպատակը չի կարող լինել մասնակի շահը, նիւթական հոգազոցութիւնը, այլ միայն ազատութեան երաշխատորումն ու պահելը։ Այս ըմբռնումով պետութիւնը դառնում է պատմութեան մեծագոյն հաստատութիւնը։ Սրանից՝ որպէս հետեւանք բղնում է, որ այն ազգերը, որոնք պատմութեան զարգացման մէջ կերտել են իրենց ազգային պետութիւնները, խտացրել են կամ ունակութիւն ունեն խտացնելու իրենց մէջ բացարձակ ոգին, ունեն խոշոր պատմական և քաղաքակրթական արժեք։ Պետականութիւնն է, որ ապահովում է մշակութային արժեքները, որոնք Հեգելի վարդապետութեան մէջ բացարձակ ոգու առարկայացման մասնակի ձեերն են։ Այսպիսով պատմութիւնը դառնում է պետութեան՝ քաղաքական դրութիւնների պատմութիւն։

Հեգելի պատմափիլիսոփայական և պետական ուսումունքը ոչ թէ վերացական մտքի մէկ հանճարեղ մարդագանք էր, այլ ունէր գերազանցօրէն իրական հիմք և զանք մէկ պատմութեան արժեք։ Նա զուգակցւում էր եւրոպական

ազդութիւնների գարթօնքին և նպատակ ունէր տեսա-
կան հիմնաւորում տալու պրուսական բիւրոկրատիզ-
մին։ Բացարձակ ոգու վերջին հանգրւանը, ըստ Հեղե-
լի, գերման ազգն է ու պրուսական քաղաքական ու ըն-
կերային կազմակերպութիւնը։ Հեղելը զաղափարախոսն
է գերման ազգութեան, որն անցնելով նապոլէոնեան
արշաւանքի ու աւերների ահեղ փորձերից՝ կանգնած էր
մէկ ազգային պետութիւն ստեղծելու ճանապարհի
վրա։

Ոգին՝ իրականութիւն է դառնում ազգայնօրէն
կազմակերպւած պետութեան մէջ։ Իր նպատակով պահ-
պանողական, սակայն, տրամաբանօրէն յեղափոխիչ՝
Հեղելի ուսմունքը թէ Գերմանիայում և թէ Արևելեան
Եւրոպայում հսկայական նշանակութիւն ունեցաւ։
Չնայեած իր վերացական ձերին և մութ ու ծանր ար-
տայայտութեան եղանակին՝ Հեղելի վարդապետութիւ-
նը ինքնաճանաչութեան հասած ազգային հաւաքակա-
նութեան և նրա պետականօրէն ձեւաւորելու ուսմունքն
է։ Ազգութեան դաղափարն է, որ ընկած է Հեղելի պատ-
մագիտական ուսմունքի հիմքում։ ազգն է պատմու-
թեան ուսումնասիրութեան նիւթը։ Ի հարկէ, սրանից
չի բղխում, որ նրա ուսմունքը կարող է զրւել այն տե-
սութիւնների շարքում, որոնք գարձան ճնշւած ազգերի
գաղափարախոսութիւնը։ Ընդհակառակը, Հեղելը ար-
համարհոտ ակնարկներ ունի սլաւոնական ազգերին, ու
րոնց համարում է պատմութիւնից զուրկ ժողովուրդ-
ներ։ Նա գերման ազգայնական է, որի համար իր ժո-
ղովուրդն է միայն ոգու ընտրեալը։ Սակայն, նրա ուս-
մունքը, նրանից հանած տրամաբանական հետեւութիւն-
ները ընդգրկում էին աւելի հեռուն։ Ուստի ճնշւած,
փոքր ազգերի առաջաւոր մտածողները իւրացրին նրա
գաղափարը՝ մաքուր առումով, ոչ նրա գործնականը։
Եթէ Գերմանիան կարող է բացարձակ ոգու կրողը հան-

դիսանալ, ինչու նոյնը չի կարող լինել լեհաստանը,
Ռուսաստանը, Զելինան, Հայաստանը։ Եւ ելակչա-
նենալով Հեղելի ուսմունքը՝ այդ ազգերի մտաւորակա-
նութիւնը ջանում է հաստատել իր ազգային հաւաքա-
կանութեան ապրելու և ստեղծագործելու իրաւունքը։
Եւ զարմանալի չէ, որ վերոյիշեալ ազգերի քաղաքա-
կան մտքի զարգացման էական խնդիրն է՝ ազգութեան
գաղափարը։ Եթէ Հեղելը գերման ազգն է համարում
բացարձակ ոգու կրողը — սա նշանակում է, որ գեր-
ման մշակոյթը՝ արւեստ, կրօն, քաղաքական ձև՝ ար-
ժէքաւոր է, կատարեալ է, որքան, ի հարկէ, կատար-
եալ կարող է լինել ոգու առարկայացումն սահմանա-
փակ ձևերի մէջ։ Սակայն, Արևելեան Եւրոպայում ապ-
րող ազգերի մտաւորականութիւնն էլ ջանում է կերտել
իր ազգային-մշակութային արժէքները, հաստատել այն
մի կողմից իր պատմական անցեալի վրա, միւս կող-
մից՝ ժամանակի առաջաւոր ազգերի օրինակը ի նկատի
ունենալով։

Նազարեանը իր քաղաքական տեսակէտները ար-
տայայտել է ցան ու ցրիւ՝ տարբեր ժամանակներում և
տարբեր յօդւածների մէջ։ Սակայն և այնպէս հաւա-
քելով ի մի այն ամենը, ինչ որ նա գրել է քաղաքական
հարցի մասին, կը ստանանք մի լրիւ և ներդաշնակ
կառուցւածք։ Մի բան, որ աչքի է ընկնում նրա եր-
կերի մէջ ամենուրէք՝ այն մեծ պատկառանքն է, որ
նա ունի քաղաքական ոյժի հանդէպ։ Լինելով իր ժա-
մանակի պատմագիտօրէն և փիլիսոփայօրէն ամենից
պատրաստւած գէմքը՝ նա խորին ճշմարտութեամբ կարո-
ղանում է որոշել պետութեան առաջնակարգ նշանակու-
թիւնը նոր ազգութիւնների ստեղծման գործում։ Նա այդ
համոզմունքին եկած էր, ոչ միայն Եւրոպական ազգերի
անցեալի ուսումնասիրութեամբ, այլ և իր ժամանակի,
իրական կեանքի դիտողութեամբ։ Նա ապրում էր մի
ժամանակ և ուսանում էր մի վայրում, ուր և երբ տե-

Ղի էին ունենում ազգային պետութիւններ կառուցանելու փորձեր և կառուցւած պետութիւններին ուամկավարական ձեւորում տալը։ Դեռ ևս իր հասարակական ու գրական աշխատանքի սկզբում նա ազգային հարցի մասին խօսելիս արտայայտում է այսպէս «Մի ազգի համար իր կրօնը, իր լեզուն և իր քաղաքականութիւնը այն մեծախորհուրդ և խորախորհուրդ անօթներն են, որ ընդունելով իրենց մէջ աստւածեղէնը և մարդկեղէնը պիտի աճեցուցանէին, ծաղկաղարդէին և պտղաբեր շինէին»։ Այսպէս որոշելով ազգութեան գործոնները՝ նա միաժամանակ հանդիսանում է ելակէտը հայ հասարակական կեանքում յետադայում առաջացող հոսանքների։ Եթէ պահպանողականները կառչեցին կրօնի գաղափարին՝ որպէս ազգութեան պահպանման ազգակ, հայ քաղաքական կուսակցութիւնները ազգութեան զոյցութեան ամենէն կարեւոր ազգակներէն մէկը համարեցին պետութիւնը։ Նազարեանը ոչ միայն որոշումէ «քաղաքական անօթի» գերը, այլև նրա բնոյթը։ Մեկնելով հեգելեան դպրոցից՝ նա պետութիւնը համարում է մէկ հաստատութիւն, որ պիտի աճեցնէ նաև «աստւածեղէնը»։ Պետութիւնը դառնում է ամենէն կարեւոր հաստատութիւնը ազգութեան զարգացման։ «Թագաւորութիւն, քաղաքական կեանք, ազգային պատիւ ու փառք ասած բաները չեն միայն սնոտի, արտաքին աշխարհական փայլողութիւն, որից կարելի էր հարածարել անվես, ո՛չ, այդպէս չէ։ Թագաւորութիւնն ասած բանը է մի ազգի խելքն ու բանականութիւնը տեսանելի ու զգալի կացուցած նրա քաղաքական կարգերի մէջ, նրա օրէնքների, կառավարութեան և դաստիարակութեան եղանակի մէջ»^{*)}։ Այս տողերի

^{*)} Ս. Նազարեանի Երկեր, Թիֆլիս, 1914 թ. հատոր I էջ 90։

մէջ շատ որոշ երեւան է զալիս նազարեանից ոչ միայն գաղափարապաշտութիւնը, այլ և բանապաշտ միտքը, իր պատմափիլսոփայութեան մէջ նա բանապաշտ է— խնտելեկտուալիստ, այդպէս է և իր հոգեբանութեան մէջ։ Սրա աղբերները պիտի որոնել Արևմտեսն Եւրոպայի փիլիսոփայական ու հասարակական ուսմունքների մէջ։ Եթէ պատմութիւնը «խելք է ու բանականութիւն», նրա բովանդակութիւնն է զիտութեան զարգումը իր բոլոր կողմերով և նրա ժողովրդականացումը, պայքարը խաւարի, նախապաշարումների դէմ, ապա քաղաքականութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչիրացումն այդ բանականութեան մարդկային համակեցութեան օրէնքների, դաստիարակութեան և սովորութեան մէջ։ Սա նրա գաղափարատապաշտութիւնն է և հեղելաբանութիւնը։ Միայն մի տարբերութիւն կայ երկուսի միջև։ Հեղելի մօտ այդ խելքն ու բանականութիւնը բացարձակ ողու արտայայտութիւններից մէկն է, նա զարեանի մօտ «ազգինն է»։ Սակայն, ի վերջոյ, Հեղարեանի մօտ հեղին նոյնանում է ազգութեան հետ, նազելի մօտ էլ ողին նոյնանում է ազգութեան հետ, նազարեանի մօտ էլ ազգութիւնն ընդունում է իր մէջ աստւածեղէնը։ Թագաւորութիւնը կազմակերպչական նշանակութիւն ունի և պարզ ու որոշ հանրային նպանչականութիւն է պարզ ու որոշ հանրային նպանչականութիւնն է, որոշ ուղղութեամբ և որոշ նպաստակով դեկավարողը։ «Թագաւորութիւնն է, որ իրեւ մարմարակարգի և սահմանի տակ է պահում և ցանուցիր զօրութիւնը ազգի միաւորելով և բոլորելով մի ամբողջութեան մէջ ուղեցուցանում է զէպի մի հասարակական նպատակ»։ Ուրեմն, պետութիւնը մի գործիք է, կան նպատակ։ Ուրեմն, պետութիւնը մի գործիք է, կամ անօթ, «ազգի թէ նիւթական և թէ իմացական բախտաւորութեան համար։ Թագաւորութիւնն է, որ ամենայն բան ազգի մէջ կարգի և սահմանի տակ է պահում և ցանուցիր զօրութիւնը ազգի միաւորելով և բոլորելով մի ամբողջութեան մէջ ուղեցուցանում է զէպի մի հասարակական նպատակ»։

տաւորութեան համար»։ Պետութիւնը այս առումով նոյնանում է ազգութեան հետ՝ դառնալով նրա գոյութեան «անչափելի մեծակշիռ անօթը»։ Եթէ նրա հոգացողութիւնը նիւթականն ու իմացականն է, ինչպէս և բարոյականը, ապա նշանակում է պետութիւնը ազգային մշակոյթի մեծագոյն ազգակն է։ «Խշանական գաւազանը» «ազգաշինութեան» պատճառ է լինում։ Նամի «բարոյական կարգ» է, «անխզելի իրաւունք», որով պայմանաւորում է և՛ կրօնը, և լեզուն և ընդհանրապէս յառաջդիմութիւնը։

Կերպելով քաղաքական տարրին այսպիսի արժէք՝ նազարեանը հիմնովին բաժանում է այն մտածողներից, որոնք 18րդ դարում և էլ առաջ պետութիւնը նոյնացնում էին թափաւորական հարստութեան հետ և ծառայական յարաբերութեան մէջ դնում վերջինիս նկատմամբ։ Նա ընդհանուր ոչինչ չունի նաև նոյն դարի վերջին հանդէս եկած այն տեսութիւնների հետ, որոնք պետութեանը լոկ գիշերապահի դեր էին տալիս։ Ըստ այսմ, նա չպիտի միջամուխ լինէր ընկերային մարմնի մէջ տեղի ունեցող եռուցեսին, պայքարին։ Նրա ազգացութեան շրջանակը որքան կարելի է պէտք է վերածել նւազագոյնի։ Նախորդ գարի առաջին քառորդին այս տեսակէտը ուժեղ հարւած ստացած հեղեղեան դպրոցից, որի պետութեան բարոյական ըմբռնումը և նրա զաղափարապաշտ նպատակ դնելը աղատագրեց պետութիւնը ամէն նիւթական պատկերացումից։ Նազարեանն ևս դէմ է այդ տեսակէտին։ պետութիւնը «մարմնացած հոգի» է, ուստի և պարտականութիւն ունի ազգի անդամների հանդէպ։ Նրա հոգացողութեան առարկան մէկ անհատը չէ, թափաւորական տունը չէ, ոչ էլ մէկ գասակարգ, այլ բովանդակ «ազգն» է։ Եւ եթէ ի նկատի ունենանք, որ ազգը նրա գրական վասակաների մէջ նոյնանում է «հասարակի», խոնարհ խա-

ւի հետ, ապա կը տեսնենք, որ պետութիւնն ևս առաւել մեծ արժէք է ստանում՝ որպէս ներգործօն ազդակ ազգային մշակոյթի պահպանման և զարգացման և այդ արժէքների համազգայնացման ինդրում։ Ի հարկէ, նրա հասարակական ուսմունքը այսօրւայ իմաստով ուամկավարական չէր։ Նրան անձանօթ էր հայ գիւղական աշխատաւորութիւնը։ Իրեն նախորդող Արովեանը աւելի ուսմկավար միաք էր, նրա ուսմունքի հասարակական յենարանը աւելի լայն էր։ Եթէ նազարեանի «հասարակը» քաղաքային արհեստաւորութիւնն էր ու համքարութիւնը, Արովեանինը զի՞ զն էր, իսկական հայ գիւղը, որի գունագեղ պատկերը այնքան տաղանդաւոր նկարել է նա։

Լայն գործունէութեան շրջանակ գծելով պետութեան հանդէպ և համարելով այն ոչ միայն մշակոյթի կերտող ու պահպանող միջոց, այլ և «բարոյական կարգ»՝ նազարեանը տարբերում է նաև 50ական-70ական թւականներին մեծ տարածում գտած քաղաքական տնտեսական այն ուսմունքից, որի հիմնաղիրը Կարլ Մարքսն էր։ Հետաքրքրի է համեմատել նազարեանի և Կ. Մարքսի ուսմունքները։ Երկուսն էլ գուրս են եկե, Հեգելի դպրոցից, սակայն, ընթացել են բոլորովին հակառակ ուղիներով։ Կ. Մարքսը իր պատմափիլիսոփայութեան և բնադանցութեան մէջ նիւթապաշտ է։ Կարլ Մարքսը հանրային կեանքում մերժեց կրօնի և բարոյականութեան արժէքը և զրանք ուրոյն, նիւթական ուժերից անկախ ազգակ չհամարեց։ Նազարեանը հասարակական կեանքի յառաջդիմութիւնը ոչ միայն հետեւանք է համարում գաղափարների, այլ և բարոյական սկզբունքի կիրառման կեանքի մէջ։ Այդ բարոյական սկզբունքները սերաօրէն յարակցւում են կրօնի, աւելի որոշ, քրիստոնէութեան վարդապետութեան հետ, որպէս ամենից կատարեալ կրօնի։ Պետութիւնը

ըստ Մարքսի իշխող դասակարգի դաժան շահագործածան լաւագոյն զէնքն է և, որպէս այդպիսին, գուրկ է ամէն բարոյական հիմունքից: Նա պայքարի դործիք է ձնչողի և ձնչողի միջև և յալթողը չանում է տիրանալ նրան իր դասակարգային շահերի համար ծառայեցնելու նպատակով: Շահագործումի միտումը ինքնընստինքեան կապւած է պետութեան հետ, հետեւապէս և «ազատութիւնը» բնաւ հաշտւել չի կարող նրա գաղափարի հետ. ու այն վայրկեանին, երբ պետութիւնը կը լինի, վախճան կունենայ, կը սկսի իրական ազատութիւնը ժողովուրդների: Նազարեանի համար պետութիւնը խելքի, բանականութեան, բարոյականութեան մարմնացումն է. նա ազգային ուժերի հաւաքողն է և հանրային նպատակով գործադրողը: Նա քաղաքացողն է իմացական ու նիւթական արժէքների, «բախտաւորութեան»: Մինչ կ. Մարքսի պատմափիլիսոփայութեան հիմքում ընկած է դասակարգը, Սահազարեանի մօտ ազգն է, ազգային ամբողջութիւնը, որի ուժերի վարդացմանն էլ նւիրում է պետութիւնը: Կ. Մարքսը ելնելով հեգելեան գվրոցից պահեց միայն նրա մեթոդաբանութիւնը՝ տալով ծանր հարւածներ Հեգելի ուսմունքին, Սա. Նազարեանը ամբողջապէս մնաց հեգելեան գաղափարների աշխարհում:

Եթէ ազգային արժէքների զարգացման համար պետութիւնը մեծ անհրաժեշտութիւն է, ապա պետական կազմակերպութիւնից զուրկ լինելը բախտորոշ նշանակութիւն կարող է ունենալ: Ըստ Նազարեանի «ոչինչ ազգի մէջ ուսմունք և գիտութիւն ծաղկած չեն, ուր չէ եղել նոցա վերայ մի կարողիչխանական գաւազանի հովանաւորութիւն, ուր չէ եղել մի ազատ քայլաքական կեանք» (էջ 91): Բննելով մեր պատմական անցեալը՝ նա գտնում է նրա մեծագոյն չարիքը այն բանում, որ քայլաքական կեանքը այստեղ եղել և շատ քիչ զարգա-

ցած, հայութեան պետականութիւնը՝ թոյլ, աւատական, կարճատեւ: Այս հանգամանքը որոշիչ նշանակութիւն է ունեցել թէ մեր քայլաքական դաստիարակութեան և թէ մեր ազգային մշակոյթի համար. «Հայոց ազգը ըստ մեծի մասին օտար թագաւորութեան լծի տակ, ուրեմն ստրուկ և ծառայ, ի հարկէ պիտոյ է անմասն մնար այն պարծանքից, որ ծարել է յունաց ազգը աւելի յաջող հանգամանքների տակը. և առանց ազգատութեան անկարելի է մատենագրութիւն, անկարելի է գիտութիւն, յառաջադիմութիւն և բարգաւառութիւն (էջ 19):

Ազգութեան ազգակներից մէկն էլ, ըստ Նազարեանի, կրօնն է, սակայն, ոչ թէ որպէս գաւանաբանութիւն, այլ որպէս բարոյական սկզբունք: Քրիստոնէութիւնը ոչ միայն կրօնական մի ուսմունք է, որ կապում է մարդուն մի գերազոյն, անվախճան էակի հետ, այլև ժամանակակից մարդկութեան բարոյական գաղափարների լաւագոյն խտացումն է: Նա թելադրում է սէր Առ Աստած և սէր առ մարդը և վերջինիս մէջ է նրա ընկերային արժէքը: Այս իմաստով կրօնը ընդհանրապէս և քրիստոնէութիւնը մասնաւորապէս մի անհրաժեշտ գործօն է ընկերային կեանքի մէջ, ուստի և հասկանալի է, որ Նազարեանը շատ անգամ անդրադառնում է այդ խնդրին: Սակայն, կրօնին որոշիչ նշանակութիւն տալը և ազգութեան ազգակ համարելը կունենայ այն հետեւանքը, որ ազգը կրօնական համայնք կը զատնայ: Մնալով որպէս այդպիսին՝ անկարելի է կը զատնայ: Այս ազգը որպէս այդպիսին՝ անկարելի է ստեղծել բարձր հոգեոր մշակոյթ: Կրօնի արժէքը ազգութեան ազգութեան է, իսկ բարոյական կերի կեանքում լոկ բարոյական է, իսկ պահեւում: Միջաներով զեռ «ազգ» չի ստեղծւում և պահեւում: «Կրօնը ազգի համար էր և ոչ թէ ազգը կրօնի համար» (էջ 89): Ուրեմն նա մի միջոց է ազգային ամբողջութիւնը պահելու, սակայն, շատ թոյլ միջոց: Նրա գութիւնը պահելու, սակայն, շատ թոյլ միջոց:

յութիւնը բաւական չէ ազգաշխնութեան համար. «հաւատն առանց իշխանական գաւազանի թեարկութեան, խաչն առանց սրի տկար է և չի կարող ազգաշխնութեան պատճառ լինել» Եթէ սուտ է մեր ասածը, թող ցոյց տան աշխարհի երեսին մի քաղաքացեալ՝ հզօր ու լուսաւորեալ ազդ, որ միայն կրօնի գօրութեամբ, առանց քաղաքական կեանքի և մեծութեան հասած լինէր որեւիցէ ազգաշխնութեան, բարեկարգութեան և ազգային պարծանքի մարդկութեան ազգերի մէջ»։ (Էջ 90)։ Այսինքն կրօնը զեռ բաւական չէ, մանաւանդ բարոյական առումով։ Կրօնը նոր եւ նորագոյն դարերում աստիճանաբար գաղարում է ազգերի կեանքում այն միակ ազգակը լինելուց, ինչ որ էր հին և միջին դարերում։ Ազգութիւնը ստանում է աշխարհիկ բնոյթ եւ պետութիւնն այն կազմակերպութիւնն է, որ ինքը ազատագրւելով կրօնից և եկեղեցուց՝ տալիս է ազգութեան աշխարհիկ և քաղաքական իմաստ։

Ժիտելով կրօնի միակ և բացարձակ արժէքը՝ նազարեանը դուրս է գալիս այն մտածողների դէմ, որոնք նախորդ դարի կէոներին նոյնացնում էին ազգութեան և կրօնի գաղափարները և հայերին համարում էին եկեղեցական ազգութիւն, կրօնական համայնք։ Սրանք մոռանում էին, որ կը նը ազգութեան դործոն եղած է այն ժամանակ միայն, երբ իշխողն ինքը ներկայանում էր որպէս կրրնական համայնք և զեռ ևս չէր որդեգրել ազգութեան սկզբունքը։ Բաժանման զիծը ոչ թէ ազգութեան պատկանելիութեամբ էր, գծում, այլ կրօնագաւանական պատկանելիութեամբ։

Եթէ «քաղաքական անօթը» մի «անչափելի մեծ» գործիք է ազգաշխնութեան գործի համար, ապա ի՞նչ արժէք են ստանում նրանք, ովքեր պետական կեանքի դեկապարութիւնը ունեն իրենց ձեռքին։ Պատմա-քաղաքական դէմքերը գործակից են ազգի նիւթական ու ի-

մացական հարստութեան կուտակման։ «Մեծատունների, իշխանների ու թագաւորների կոչումը, վերին ու գեղեցիկ կոչումը այն, է որ նոքա արդէն ծլածն ու կանաչածը ազգային հոգու հիմքից՝ իրենց կարող ձեռքով հովանաւորէին, մեծափոյթ խնամակալութեամբ ջուր տային և սնուցանէին և այսպէս հասուցանէին ցանկալի պաղաքերութեան» (Էջ 281)։

Ասել է, եթէ պետական կազմակերպութիւնը իմաստաւորում է որպէս ազգ՝ մշակութային միաւորի ուոճացումն ու պահպանումը, եթէ նա փորձաւած ու լաւագոյն միջոցն է ոչ միայն ազգային դիմագծի անազարտ պահպանման, այլ և անկաշկանդ զարգացման, ապա պետական նաւի զեկավարները չեն կարող ունենալ մասնակի՝ տոհմային, գասային կամ անձնական նպատակներ, ինչպէս կը թելազրէր 18րդ դարի մտածողութիւնը։ Նազարեանը պետութեան վերագրում է զրական զեր. նա կազմակերպող ոյժ է, նա մի զրական գործօն է ազգերի կեանքում, մինչ կ. Մարքսը պետութեանը վերագրում էր միայն բացասական դեր. մէկը տևմանում էր նրա գալիք անելիքը, միւս նրա ստերոտ կողմերը։

Եթէ նազարեանը այսպէս է որոշում և անդամ գերագնահատում է քաղաքական գործօնի դերը, ապա չափանց հետաքրքիր ինդիր է, թէ ինչ քաղաքական պահանջներ է անում նա հայութեան համար։ Նախ ասենք, որ նրա հրապարակախօսական քննութեան նիւթը ուուսահայութիւնն է. տամկահայութիւնը ընդամենը մէկ-երկու անգամ է գրաւում նրա ուշադրութիւնը։ Ընդհակառակն, ուուսահայկական ինդիրը գուցէ ոչ ոք իր ժամանակակիցներից այնքան լայն չի ըմբռնել ու իր ժամանակի համար այնքան իրական միջոցներ չի առաջարկել, որքան նազարեանը։ Իր քաղաքական աշխարհահայեցողութիւնը թելազրում էր, որ հայութիւ-

նը նոյնպէս ըմբռնւի քաղաքականօրէն, այսինքն՝ որպէս ուրոյն պետական միաւոր: Նազարեանի օրով հայութիւնը կրօնա-դաւանական համայնք էր. նրան կազմակերպող հայոց եկեղեցին էր. ըստ Նազարեանի ուսմունքի հայութիւնը պիտի թողնէր կրօնի սկզբունքը, դառնար ազգ աշխարհիկ իմաստով, և կազմակերպուէր պետականօրէն: Իր քաղաքական ուսմունքի արամաբանական եղբակացութիւնը այս պիտի լինէր: Սակայն նա իր ուսմունքից համապատասխան եղբակացութիւն չհանեց: Իր քաղաքական մտածողութեան չենք կառուցանելիս նա ամբողջապէս հիմնեւում էր այն տւեալների վրա, որ ընձեռնում էր արևմտեան Եւրոպայի պատմութիւնը: Սակայն, հայոց քաղաքական բախտի մասին խորհրդածելիս նա անում է մէկ շեղում: Այդ շեղման հիմքն ու պատճառը ոչ թէ Նազարեանի զաղափարների շեղումն է, այլ պայմանաւորւած է այն իրական-պատմական տւեալներով, որոնց մէջ ապրում էր հայութիւնը 19րդ դարի առաջին կիսին: «Հայոց ազգը Աստուծոյ աթոռի առջեւ անարժան էր գտնւած թագւարական պատւի շքեղութեան»: Սա է Նազարեանի հանած տիսուր եղբակացութիւնը մեր անցեալից, Մեր պետական կեանքը «մեր և օտարի մեղքով ոչնչացել է ու չկայ այլեւ»:

Եթէ այսպէս է անցեալը, ապա ինչ գործելակերպ պէտք է ընդգրկել այժմ՝ ջանա՞լ արդեօք ստեղծելու հայոց պետականութեան չենք, թէ՝ ընդմիշտ հրաժարւել նրանից, որքան և այդ ծանր լինի հայ ազգային-մշակութային բախտի տնօրինման համար: Նազարեանը գնաց երկրորդ ուղիով, այսինքն՝ մերժեց հայոց քաղաքական անկախութեան սկզբունքը: Այս է այն շեղումը, որ անումէ նա իր քաղաքական ուսմունքի մէջ: «Հայերս քաղաքական մտքով ոռուս ենք, այսինքն ոռուսաց կայսեր հպատակը և անդամք այդ տէրութեան

մարմինի և ունիմք նոյն օգուտաքը և մնասը ինչ ունի թագաւորութիւնը ներքուստ և արտաքուստ (Էջ 334): Սա գասական բանաձեն է, որ մշակեց հայութիւնը նախորդ դարի 60ական թվին, որ մնաց երկար ժամանակ իշխող, զեկավար սկզբունք հայ հասարակական մտածողութեան մէջ: Հայութիւնն աղդութիւն է առանց քաղաքական անօթի, հետեւարար ուսմահայոց հարցը, ըստ Ստ. Նազարեանի, քաղաքական հարց չէ, այլ միմիայն մշակոյթի խնդիր: Զանուցանելով ուրոյն քաղաքական իդէալ՝ հայութիւնը պիտի ջանայ ապահով կացուցանել իր աղքային կարողութիւնները, ինքնատիպ զիմազիթը և արտայայտութեան ուրոյն ձեր: Եւրոպական իմացական նւաճումների պտուղները պիտի պատւաստեին հայոց մէջ՝ ստեղծելով նոր զեկավար գաս՝ աշխարհիկ մտաւորականութիւնը: Նազարեանի խորհրդածութեան նիւրը հայ մշակոյթի ստեղծման պայմանների ու պահպանման խնդիրն է: Որով նա առաջին մեծ մշակութային գործիչն է ուսմահայոց մէջ:

Յեղափոխական խառնւածք շունի Նազարեանը, ինչպէս իր կրտսեր ժամանակակիցը՝ Նալբանդեանը, ուստի և քաղաքական անկախութեան հարցը չի գնում: Եթէ մշակոյթի խնդիրը նրան դարձնում էր խաղաղ մտաւորական աշխատաւոր, ապա բռնադատւած հայրենիքի աղատազրման հարցը նրան պիտի դարձնէր յեղափոխական, ինչպէս Մ. Նալբանդեանին: Նազարեանը հայրենիքի հարցը քննութեան նիւթ չի դարձրել: Հայութեան պատմական անցեալը քննելիս նա գրում էր: «առանց կամքի, սրտի և ձեռքի միութեան, առանց մի ընդհանուր գաղափարի, որ պիտոյ է լինէր հայրենիքի պաշտպանութիւնը, ոչինչ կարողացել չէ և կարող չէ յառաջանալ» (Էջ 168): Եթէ հաւաքական գործակութիւնը այդքան անհրաժեշտ էր մեր պատմու-

թեան նախարարական շրջանում, ապա ևս առաւել անշարժեցտ է այժմ։ միւայն մի ատրբերութեամբ։ Այժմ եան հայութեան գործակցութիւնը, միասնական հանրային աշխատանքը չունի նպատակ հայրենիքի փրկութիւնը։ Հայ հայրենիքը, ըստ նազարեանի, ազատագրւած է, ոռուսները եկել գրաւել են Պարսկաստանից հայկական հողերը։ — «Ժողովրդի հայրենիքն այժմ ազատւած է սարկութիւնից։ Նա կապւած է մի եւրոպական լուսաւորութիւնն ընդունող տէրութեան հետ։ Սարկութեան կապանքները հանւած են հայերի վրայից իրենց հայրենիքումը» (էջ 92)։ Ուրեմն, հայրենիքի խնդիրը լուծւած է, նրա հետ և քաղաքական հարցը — հայը քաղաքական պահանջ չունի, նա հայ է, բայց ոռու քաղաքացի։ Ոչ թէ հայրենիքն է նրա տքնածան աշխատանքի առարկան, այլ ազգը։ ոչ թէ հայրենասիրութիւն, այլ ազգասիրութիւն։ Ազգ ասածը մշակոյթն է։ Որով, հայրենիքի խնդիր չկայ։ կայ մշակոյթի խնդիր։ Նազարեանի ուսմունքի մէջ այս երկուսը չեն համադրւում։ ի հորկէ, չեն էլ հակադրւում, այլ պատմական իրադարձութեանց հետեանքով բաժանւում են։ բաժանւելով դառնում են հայ հասարակական ու քաղաքական մեջի տարբեր փուլեր՝ կազմելով մեր ընկերային զարգացման մի շատ ինքնատիպ արտայատութիւնը։ Ազգասիրութիւնը զատւում է հայրենասիրութիւնից, ազգը հայրենիքից։ Պիտի անցնէր երկու սերունդ — Նազարեան-Արծունի — մինչև որ ազգն ու հայրենիքը համազրեէին ու քաղաքական լուծում ստանային յանձին Բաֆֆիի, ու մինչև որ հայոց յեղափոխութիւնը դարձնէր իրականութիւն։

Եթէ հայրենիքի հարցը նազարեանին չի զբաղեցնում, ապա ազգութեան խնդիրը, աւելի ճիշտ, հայ մշակոյթի հարցը նրա հոգացողութեան գլխաւոր խընդիրն է։ Ազգային մշակոյթի հարցը նայում է ոռու ազգութիւնը և առաջարկութիւնը մշակութիւնը և առաջարկութիւնը աշխարհիկ իմաստով, աշխարհիկ մտաւորակա-

պետականութեան սահմաններում։ Մեր մշակութային վերածնութեան նկատմամբ ոռուս պետականութիւնը ոչ մէկ կասկած չպիտի ունենայ, քանի որ Յօական թւականներին Աղեքասնդը Բ. իսկ հնչեցրել և մշակել է յառաջադիմութեան սկզբունքը՝ գործի կանչելով հանրային բոլոր ուժերը։ Հայութիւնը պիտի օգտւի «լուսաւորեալ» պետութեան ընձեռած միջոցներից և վերանորոգւի։ Մեր քաղաքական պահանջ չունենալու հետեւանքով՝ «Ծուսաստանը կարող է բոլորովին աներկարայից լինել հայոց ազգի գէպի նա անդրժելի հաւատարմութեան մասին, և զրա ապացոյցը միշտ և հանապաղ տւել է նա։ Տաճիկները որպէս մահմեդականք իւրիանց յարաբերութեան մէջ գէպի ի Ծուսաստան թէ շատ և թէ փոքր միշտ կասկածելի են։ Վրացիք թէպէտ և կաշրող չէին պահպաննել իւրեանց զրութիւնը պարսիկների երեսից, այնուամենայնիւ տրանջում են և անգոն են Ծուսաստանից, որ սա բաւականացել չէ մի պաշտպանողական իշխանութեամբ, այլ ստորագրել է նրան իւր ստոյգ հրամանատարութեան տակ։ Բայց հայը ճշմարտապէս չնորհակալ է Ծուսաստանից, որ ազատել է նրան մի սնտանելի, անարգական ստրկութիւնից և բացել նրա առջև մի նոր քաղաքական կեանքի ասպարէց» (էջ 96)։

Սակայն, որպէս ոռուսական քաղաքացի, ինչպիսի պահանջներ ունի և ի՞նչ ձեռով պիտի ապահովի նա հայ մշակոյթը։ Հայ մշակութային միաւորը պիտի ստանայ որոշ ձեաւորում և օժտւի որոշ իրաւունքներով, պիտի ի մարմին և նախորդ գարի Յօական ինքնավար մի մարմին և նախորդ գարի Յօական թւականներին հայ կրօնա-դաւանական մարմինը ճանաչւած էր որպէս այդպիսին և ստացել էր որոշ ինքնավար իրաւունքներ յանձին Պոլոժենիէի։ Այժմ, երբ Ստ. Նազարեանը ջանում է ստեղծել նոր ազգութիւն՝ աշխարհիկ իմաստով, աշխարհիկ մտաւորակա-

նութեան զեկավարութեամբ, այլ խօսքով՝ կրօնա-գա-
ւանական սկզբունքը փոխարինում էր ազգային-մշա-
կութայինով, ի՞նչ կազմակերպութիւն էր տալիս նրան։
Ըստ նրա՝ պատմա-մշակութային ուրոյն միաւոր մնա-
լու համար անհրաժեշտ է «մի նիւթական կամ բարո-
յական բոնագատութիւն, մի փայտակայ կամ հոգեոր
գաւազան»։ Հայերը չունին այդ նիւթական գաւազա-
նը։ «Հայոց ազգը չունի թագաւորութիւն, ուրիմն և
մը Պետրոս Մեծ կարող չէ վերկենալ նրա մէջ և ինք-
նիշխան գաւազանը ձեռքին հրամայելով՝ առաջ մղել
ազգաշինութեան գործը։ Հայոց զրութիւնը այլ է։
Նրա կարող մարդիկը, մանաւանդ ազգի հոգեոր գլուխը
պարտական է գործ գնել մի բարոյական գաւազան
կեանք և կենդանութիւն յառաջացնելու ազգի մէջ»
(էջ 127)

Ուրիմն, «նիւթական գաւազանը չկայ. գոնէ լինի
«բարոյականը», իրաւունքի սահմաններից նազարեանն
անցաւ բարոյականի սահմանը։ Նա չհիմն աւորեց հայ
մշակոյթի իրաւունքը, և չէր էլ կարող հիմնաւորել,
որովհետեւ նուսասատանը չէր ճանաչում հայութիւնը
որպէս ազգ, և որպէս այզպիսին էլ իրաւունքներ չէր
տալիս։ Յօական թւականներին ազգային իրաւունքի
պահանջը յեղափոխական գործ էր, իսկ նազարեանը
յեղափոխական գործիչ չէր։ Եթէ հայ մշակոյթը իրա-
ւական հիմունք չունի, ապա նրան պաշտպաննելը գառ-
նում է լոկ բարոյական պարտք։ Սա նշանակում էր
կոչ անել հայ մշակութային միութեան պատկանող
մարդկանց խղճին և գիտակցութեան։ Երկուսն էլ շատ
թոյլ էին ու պակասաւոր նախորդ գարի կէսերին։ Ի-
րականութեան մէջ նազարեանն ստիպւած է բաւարա-
ւելու 1836 թ. Պոլստենիէի գծած սահմաններով,
որը հայ հոգեոր ականութեան գարձնում էր իրաւական
տէրը հայ մշակութային-կրթական հաստատութեանց։

Բայց եթէ նազարեանը իրօք բաւարարւում էր զրանով
և մարդկասիրական հաստատութիւններով, սա նշանա-
կում է, որ իրականութեան անյազթ պարագաները
սահմանական նրան հրաժարւելու իր քաղաքական ուս-
ունքից, որ այնքան արդիական էր չնչում, և նորից
կառչած մնալ հայ հոգեոր իշխանութեան, «բարոյա-
կան գաւազանին», գործել եւրոպական լուսաւորութեան
անունով, չանալ ստեղծելու աշխարհիկ աղգութիւն,
հայ կեանքի զեկավարութիւնը յանձնելու նոր ստեղծ-
ւող մտաւորականութեան, սակայն, այս բոլորը կա-
տարել կրօնական - գաւանական հաստատութիւնների
ծածկոցի տակ։

Եւ հայը երկար ժամանակ այդպէս էլ արաւ, մին-
չև որ իր ազգային պահանջներին համապատասխան
իրաւական ձեւակերպում տւեց։

II

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՎԱՐԻՉԸ

Սաեղիանոս Նազարեանը XIXրդ դարի ռուսահայութեան մեծագոյն հրապարակախօսներից մէկն է: Իր կրտսեր ժամանակակցի՝ Մ. Նալբանդեանի հետ միասին 50-60 թուականների հայոց առաջաւոր աղատական և արմատական մտածողութեան առանցքն են կազմում: Որքան էլ տարբեր լինեն նրանք թէ՛ որպէս նկարագիր, թէ որպէս հասարակական աշխարհայեցողութիւն, թէ որպէս գործունէութեան միեռող, նրանց միացնողը, յատկանշականը մի ձգում է՝ կերտել ապակրօնական, աշխարհիկ հայութիւնը, ցուցահանել նրա գոյութեան հիմքերը: Նազարեանը խոր և ընդարձակ գիտական — ֆիլիսոփայական պատրաստութեան տէր անձ էր: Լինելով խորունկ մտածող և ամէն ինչ խորհրդածութեան նիւթ դարձնող՝ նա ջանում էր իր տեսութիւնից բխեցնել իր գործնական ուսմունքը՝ ստեղծելով տեսութեան և գործի մէջ մէկ ներդաշնակութիւն, համագրութիւն: Նրա հոգե-մտաւոր կեանքը ձևաւորուել և կառուցուել էր գերման բողոքական միջավայրում՝ Դորպատում՝ նախորդ գարի 30ական թուերին, այն ժամանակ, երբ գերման աղքային շարժումը իշխում էր թէ՛ քաղաքագէտի, թէ գիտնականի մտքերին, թէ հասարակական բոլոր խաւերում, և թէ մշակում էր որպէս տեսութիւն: Գերազանցօքէն բողոքական - լուտերական միջավայրումն էր որ ծնւռում էր և ուսմանում գերման աղքութեան գաղափարը, որը XIXրդ դարի առաջին երրորդին չեղելի մետափիզիք ուսմունքի մէջ ստացաւ նոր ձեւակերպում և ունեցաւ իոր աղքեցութիւն գերման աղքային պետութիւնը կառուցողների վրայ:

Նազարեանի հրապարակախօսութեան առանցքը հայութիւնն է, աւելի ճիշդ՝ ռուսահայութեան ապա-

գան: Դարի առաջին կիսում ստեղծուած էր տերիտորիալ ու ուսահայութիւնը: Պարսկաստանից և Տաճկաստանից ուսւաները զրաւել էին մէկ մեջ տարածութիւն: Կազմուել էր Ռուսահայաստանը. Այդ սահմանում կար արգէն հոծ հայկական բազմութիւն, ստեղծուել էր և հանգրածիկ Ռուսահայաստանը: Բնդպարձակ տերիտորիայի վրայ՝ ազգագրական այդ տարրը միացած էր մեկ լնդիանուր կրօնով (գաւանանքով), ունենալով էջմիածինը որպէս կեղրոն: Հայութիւնը, որպէս հոգեւոր միութիւն, կառուցւած էր կրօնական-դաւանական հիմքերով. իսկ որպէս ազգ-մշակութային միութիւն, աշխարհիկ իմաստով, գոյութիւն չունէր: Նրա միացնողը էջմիածինն էր. կամ տեղական վանքը, սուրբը: Նրա հաւաքական ոյժը երևան էր գալիս ծխական ժողովներում: Կրօնական այս համայնքը էջմիածնի կաթողիկոսի միջոցով նաև իրաւակեր էր — նրա կրօնական-կրթական իրաւունքը ձանչցուած էր համապետական օրէնքներով և մտած էր ռուսական «օրէնքների ժողովածուի» մէջ: Նազարեանը ջանում է հայութիւնը ստեղծել մեակրյի հիմքերով: Հստ նորա՝ կրօնական աղքութիւնը նրա զարգացման մէկ փուլն է միայն, որ համապատասխան մէր անցեալ պատմական կեանքին: Նոր ժամանակը առաջարել է աղքութեան նոր սկզբունք՝ ապամական, աշխարհիկ մեակրյային աղքութեան սկզբունքը:

Այդ է, որ հայ միջավայրում չկար: Սակայն եւ րոպան ընթացել էր այդ ուղիով: Նազարեանը իւրացրել էր այդ, զարձրելի իր աղքային-քաղաքական ուսմունքի մէկ շատ անհրաժեշտ մասնիկը, և կ'ուզէր գործադրել, կիրառել այն ռուսահայ միջավայրում: Ինչպէս ինքն է ասում իր ամբողջ կեանքում նա հայերին քարոզել է աղքութեան սկզբունքը: Հայութիւնը աղք պիտի դաւանանքի սկզբունքը, նա պիտի թողնի կրօնի, դաւանանքի սկզբունքը:

բունքը և որդեգրի մշակոյթինը։ Նազարեանի համար պատմութեան առարկան ազգի է, ամէն ինչ տեղի է ունենում նրա շրջանակում։ Իսկ նրա ըմբռնած ազգութիւնը՝ մշակոյթի գաղափար է, օժտուած «քաղաքական անօթով»։ Ազգութիւնը մէկ հզօր ոյժ է, նա իրենով պայմանաւորում է և՝ տնտեսութիւն և՝ քաղաքականութիւն և՝ բովանդակ հոգեոր կեանքը։ Ուստի և նրա գոյութեամբ, անկաշկանդ աճումով շահագործուած են նրա մէջ ապրող բոլոր գասերը, խուերը։ Ազգութեան մէջ չկայ տէր և ծառայ, բոլորը հաւասար անդամներ են, ազգութեան չենքի կառուցումը բոլորի գործը պիտի լինի։ Հայ հրապարակախօսի այս պայծառ և ճիշտ գաղափարները Եւրոպայում մթագնուեցին մարքսիզմի անկենդան միջազգայնութեան և զասակարգային պայքարի քանդիչ ուսմունքով։ Անհրաժեշտ էր սպասել աւելի քան 60 տարի, անցնել համաշխարհային պատերազմի և յեղափոխութեան փորձութեան բովից, հասնելու այն յստակ և հաստատ սկզբունքին, ինչ քարոզում էր Նազարեան նախորդ դարի 50—70 թ. և որը իւրացրեց նոյն դարի 90ական թւերին՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Նազարեանը Եւրոպայից բերում էր ոչ միայն ազգութեան սկզբունքը, այլև նրա քաղաքական ըմբռնումը։ Ազգութիւնը որպէս գաղափար ձևեր է որոնում իրականանալու, դառնալու փաստ, հաստատութիւն։ այդ ձեւը պետութիւն է, ինչպէս Նազարեանն է ասում «քաղաքական անօթը»։ Գաղափարը պիտի իրանայ հաստատութեան մէջ։ Եւրոպական փորձից մեր հրապարակախօսը լաւապէս ծանօթ էր «քաղաքական անօթ»ի արժեքին։ Նա այդ տեսել էր նաև Հեղեղի, Ֆիխտէի և Բանկէի ուսմունքների մէջ։ Բատ նրա՝ պետութիւնը ազգութեան կառուցման, կազմակերպման եւ հոգեւոր անումի մեծ, «անչափելի անօրն» է։ Այս տեղից էլ նրա

բարոյական, ընդհանրական և աբսոլիւտ արժէքը։ Որքա՞ն հեռու է այս ուսմունքը Նազարեանի զերմանացի ժամանակակցի Կարլ Մարքսի սկզբունքներից, թէպէտ երկուսն էլ զուրս են եկել միեւնոյն պատմա-փիլիսոփայական դպրոցից՝ Հեղեղականութիւնից։

Բայց չնայած իր ընկերային ուսմունքի քաղաքական ձեռւորման Նազարեանը հայութեան համար քաղաքական պահանջներ չի յարուցանդում։ Այս մէկ բեկումն է նրա տեսակէտների մէջ, և այդ անշուշտ այն պատճառով, որ նախորդ դարի կէսերին հաւաքական հայութիւնը պատրանտ չէր քաղաքական խնդիրներ զնելու և գործնական լուծում տալու։ Նա թոյլ եր որպէս որակ, իր ընդհանուր, համազգային շահերին անգիտակից, թոյլ էր եւ որպէս քանակ, որ կարողանար «հսկայ կռոնոսի» զէմ պայքարելու։ Նրա աչքաբաց, բանիմաց տարրը իր գոյութեան նիւթական հիմքերն է ամրացնում, իսկ զանգուածը ընդհանուր շահերով և գաղափարներով չէր ապրում։ Այս տարրերով քաղաքական նպատակների մասին մտորել անկարելի էր։ Ուստի զարմանալի չէ, որ Նազարեանը ուստանայոց հարցի լուծումը ուստական կայսրութեան սահմանեցում է որոնում։ Այս չի նշանակում, որ ուստանայ հարց չկայ։ Նա չկայ իր քաղաքական ձեռակերպումով, բայց գոյութիւն ունի որպէս պատմա-մշակութային ուրոյն գոյութեան հարց։ Բատ Նազարեանի հայը քաղաքականապէս ուստի է։ Այս նրա բանաձեի միայն մէկ մասն է։ — գրանով որոշում է հայ-ուստ յարաբերութեան քաղաքական կողմը։ Կայ և երկրորդ մասը, եթէ հայը ուստ քաղաքացի է, տպա նա պիտի մնայ հայ ազգային մշակոյթի անդամ։ Այս էլ հայ և ուստ կուլտուրաների յարաբերութիւնն է։ Քաղաքականապէս ուստ, մօակուրապէս հայ, — ահա Նազարեանի բանաձեը ուստանայ հարցի լուծման։ Նրա բանաձեի այս գուալիզմը՝ երկար

ժամանակ մնաց հայ մտաւորականութեան շրջանակում
իշխող, մինչև որ ՀՀ դարի սկզբում՝ երեսյթների
նոր կապակցութեան մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը նոր
բանաձեռում տուեց հայ և ոռւս յարաբերութեան:

Եթէ ոռւսահայութիւնը անկարող է պետականօրէն
պաշտպանել իր հոգեոր արժէքները, ի՞նչ միջոցներով
պիտի ապահովի իր ազատ, անկաշկանդ զարգացնեմք:
Նազարեանը պատասխանում է. եթէ չկայ հաստառ-
քիւր, այդ գործը պիտի յանձն առնեն հայութեան մար-
մնի մէջ ապրող դասերը, խաւերը: Նրանք պիտի կանգ-
նեն մեր վերածնութեան զլուխը: Ազգակառուցման
գործը նա կապում է ոչ հայ պետութեան, ոչ հայ հայ-
րենիքի, այլ հայ մարդու, հաւաքական հայ մարդկանց
հիե: XI Կրդ դարի հէսին հիմնաւորուում էր նոր աշխար-
հիկ հայ մշակոյթը, հայոց նոր ազգութիւնը: Նազար-
եանի առաջ հարց էր դրում՝ «ո՞ր դասը կարող է, ըն-
դունակ է և փորձ ունի քառնալու հայութեան վարիչը
այդ բախտորոշ ժամանակում: Դիրանով նա ո՞չ միայն
իր զիրքն է որոշում մեր ընկերային կեանքում գոյու-
թիւն ունեցող գասերի նկատմամբ, այլ և տալիս է
այն տեղը և զերը, ինչ որ կարող են ունենալ նրանք
մեր կեանքի զարգացման մէջ: Այս խնդրում Նազար-
եանի հայեացքները մի քանի տարուայ մէջ մեծ փո-
փոխութեան են ենթարկուում: Իր որոնումների մէջ նա
ամենից առաջ կանգ է առնում հայ հոգեւորականու-
թեան վրայ, որ ստեղծել էր մեր պատմութեան մէջ
մէկ ամրակուռ հաստատութիւն՝ հայոց եկեղեցին: Նա-
զարեանը իր հրաժարակախօսութեան սկզբում շատ
դրական արժէքաւորում է տալիս այդ հաստատութեան
և դասին: — «Ազատ հայեական եկեղեցին եղել է մըշ-
տապէս նեցուկը և՝ փառաւոր և՝ տխուր անցեալում,
ազատ հայեական եկեղեցին պիտի լինի և ներկայումս
մեր ամուր լուսաւոր ապաւէնը:» Նրա համար ուրեմն

հայոց եկեղեցին, որպէս հաստատութիւն անցեալ չէ
իր կատարած խոշոր քաղաքական և մշակութային գե-
րով, այլ մի փաստ, մէկ ոյժ, որ կարող է կազապարել
բով, այլ մի փաստ, մէկ ոյժ, որ կարող է կազապարել
հայութեան գոյութիւնը ներկայում: Եթէ չկայ «քա-
զաքական անօթը», չպէտք է կորցնել «եկեղեցականը»:
Վերապրելով հաստատութեան այսպիսի զեր, նա մեծ
յոյսեր է կապում եկեղեցական, հոգեոր զասի հետ. —
Կ'ուղէ, որ հայոց վերածնութեան զլուխը կանգնի հայ
հոգեւորականութիւնը. «հոգեոր դասը պիտոյ է լինի
համեմիչ ազը ժողովրդի համար»: Խնչո՞ւ է նազարեանը
հայ հոգեւորականութեան այսքան որոշիչ զեր տալիս
մեր կեանքում: Թէ զրա պատճառը երկու
տեսակի են, առարկայական և ենթակայական: Հայոց
հոգեւորականութիւնը և եկեղեցին ոռւսաց տիրապե-
տութեան ժամանակ դարձան իրաւական տերը հայ կր-
քական հաստառութեանց: Ռուս իշխանութիւնը ուրիշ
իրաւատէքր չէր ձանաչում. գրանով իսկ օտար տիրողը
մեզ զարձնում էր դաւանական համայնք, մերժելով մեր
ազգութեան սկզբունքը և որպէս այդպիսին իրաւատէքր
ալիսէլ: Ուրեմն մեր կեանքում ստեղծուած էր մէկ ի-
լինելը: Ուրեմն մեր կատարում էր կատարել մեր
բաւունակ դաս, որ խոշոր զեր կարող էր կատարել մեր
գործոցական կրթական կեանքում, եթէ հակուէքր հա-
յոց մտաւոր վերածնութեան կողմը: Կար և մէկ այլ
յոց մտաւոր վերածնութեան կողմը: Կար և մէկ այլ
պատճառ: Ըստ Նազարեանի հայոց պատմութեան տե-
սաւթեամբ՝ մեր պատմական անցեալում երեսն բեր-
ութեամբ, մեր պատմական անցեալում երեսն բեր-
ութեամբ, արժէքաւորը ստեղծուած է հայ հոգեւորա-
ւած լաւը, արժէքաւորը ստեղծուած է հայ արժէքը այն է եղել, որ
կանութեան ջանքերով: Նրա արժէքը այն է եղել, որ
հոգեոր կերպով միացըներ է հայութեան իր ժամանակի
Արեմուտքի բարձր՝ հելլենիստական - քրիստոնէական
ուսմունքներին և արժէքներին: Հայութիւնը զոյտ
իւ-ընթացել դարի բարձր հոգեոր արժէքների հետ, իւ-
ընթացել դարի բարձր հոգեոր արժէքների հետ, իւ-
ընթացել դարի բարձր հոգեոր արժէքների հետ:

Բայց այդպէս լինելու համար՝ թէ՛ եկեղեցին, թէ՛ հոգեորը պիտի բարեփոխուեն, պիտի յեղաշրջուեն ներքոնապէս, այսպէս ասած «թօթափին հնութեան փոշին»։ Հայոց եկեղեցուն և նրա սպասաւորներին մէկ րէփորմէ պէտք ոտից մինչեւ զլուկու։ Այդ եկեղեցին դառել է ծէս. նա այլևս խորհրդանիշ չէ կրօնա - բարոյական հաւաքականութեան, այլ անիմսստ նիւթապաշտութիւն, սրտին և մտքին ոչինչ չասող։ Հայ կղերը ո՛չ իր վարքով, ո՛չ բարոյականով, ո՛չ մտքով՝ բարձր չէ իր հօտից։ Նա յետ է մնացել զարի առաջաւոր շարժումներից։ ո՛չ միայն այդքան, այլև իր կեցութեամբ և մտածութեամբ՝ հակամիտ է այդ շարժումներին։ Վե հետագայ դարերի հոգեորականութիւնը աշակերտում էր դարի լուսաւոր գաղափտորներին, իւրացնում և պատուաստում հայ կեանքում։ Նա էր, որ գրի և գրականութեան հոգեւոր կապերով կերտեց հայոց հին ազգութիւնը։ ԽIХրդ դարի հայ կղերը գաղափար անգամ չունի իր ժամանակի նոր շարժումների, հոսանքների մասին, ոչ միայն չի կերտում հայոց նոր ազգութիւնը։ Նոր լեզուի, նոր գրականութեան վրայ, այլև ամէն արգելք յարուցանում է նոր մարդկանց դէմ։ Անցեալում հայ մտաւորականութիւնը դուրս եր գալիս հայ հոգեւորականութեան շարքերից, իսկ այժմ նոր ստեղծուող աշխարհիկ մտաւորականութիւնն է, որ հալածանքի է ենթարկելում հոգեորականութեան կողմից։ Ուստի և հայոց պատմական անցեալում մեր հոգեորականութեան շարքերից դուրս եկան Ս. Սահակ, Ս. Մեսրոպ, ընտիր պատմագիրներ, մեծ բանաստեղծներ, իսկ նորը չառւեց մէկ Հուս, մէկ Լութեր, Կալվին։ «Գայլը տանում է ոչխարը, ըստ որում հովիւը քնած է մնացել, ըստ ուրում երկար դարերով անհոգ է եղել գաստիարակելու իր ոչխարը և բարոյական ամուր կապերով կապել նորան իր տան հետ» (137) Հայ եկեղեցին և կղերը պի-

տի յեղաշրջուեն ներքնապէս, բարոյապէս, եկեղեցին պիտի լինի իմացական և բարոյական կրթութեան պարզութիւն, նրան պէտք է ամեն «բարեկարգութիւնք՝ ներքին և արտաքին»։ Միայն բէմօրմի ենթարկուելով՝ նա կը կառուցանի իր նոր դէմքը, կ'ընթանայ ժամանակի, հոգեւոր շարժման հետ և կը դառնայ հայ նոր ազգութեան ամենէն կարեւոր ազգակը, նրա օրգանական մասնիկը։ Հայ եկեղեցու մէջ պիտի խտանայ «իմացական կերպարանագործութիւնը, քրիստոնէական էթիկան», գործնական կրօնքը, կրթութիւնը և բարոյականութիւնը կատարելապէս համաձայն միմեանց հետ փոխագարձաբար զօրացնելով, ամբապնդելով մինը միւսին» (117)։ Եթէ հայ հոգեւոր անհատի, դասի և հաստատութեան մէջ՝ այդ ներքին յեղաշրջումը տեղի չունենայ, ապա հետեանքը կը լինի այն, որ ժողովուրդը և կղերը կը բաժանուեն իրարից, կ'ընթանան վոյսի իր գոյութեան իմաստը, նրանք կը դառնան «անարժան ժառանգներ իւրեանց նախահարց»։ «Եթէ չկամէին գոքա ուղղել իւրեանց անձը՝ այսօր կամէգուց չկամէին գոքա ուղղել աղքը, ինչպէս այդ բանը եղած է եւրոպ բաժանուի աղքը, ինչպէս այդ բանը եղած է յառաջ գնա, և այսուհետեւ յետ մնալ կարող չէ, բայց երկուքը ընկերակից լինել միմեանց նոյն շաւզի վերայ կարող չեն, ըստ որում մինը յառաջաշարժ է և միւսը յետամնաց» (144)։ Նոր դարերում տեղի ունեցաւ հասարակութեան անհատի աղատագրումն ։ Նա անցաւ մի քանի փուլով, իտալական վերածնութիւնը, գերմանական բէմօրմասինը, անգլիական յեղափոխութիւնը ԽVIIրդ փորմասինը, անգլիական յեղափոխութիւնը ԽVIIIրդ գարում, ֆրանսականը ԽVIIIրդ գարում այդ մեծ աղատագրական փորձի աստիճանական փուլերն են։ Միշնագարի մեծագոյն հաստատութիւնից՝ կաթոլիկ եկեղեցուց աղատագրական գրականութիւնը, լեզուն,

պետութիւնը, աղքը, արուեստը և կրօնը։ Կրօնը ապահեղեցական է դառնում, որպէսզի ստեղծի մէկ նոր եկեղեցի աւելի պարզ, աւելի մարդկային։ Նոր դարերում մէկ ճեղք բացուեց գիտական-աշխարհիկ և սխուլաստիկ-կրօնական մտածողութեանց մէջ։ Նոր դարը երկու աշխարհայեցողութեանց մետափիզիք, և գրական իմացութեանց պայքարն է։ Մյդ պայքարը փիլիսոփայական երկու սկզբունքների հակադրութիւնն է՝ Մարդու և Ասծու։ Ո՞րն է մեր աշխարհայեցողութեան ելակետը։ մա՛րդը, որի որոնումները ի վերջոյ կարող են յանդել և յանդում են յաձախ Աստծուն, որպէս վերջնական և աբսոլիւտ ստիճանի, թէ Աստուած, որի տեսութիւնը, գաղափարը մշակուել է և սրբազործուել պատմական ամենամեծ հաստատութեան՝ կաթոլիկ եկեղեցու մէջ և որի ուժի ծանրութեան տակ մարդը մեռնում է, ոչնչանում, զրկում իր ամենէն կարեռը արժէքից անհատականութիւնից։ Նազարեանը XIXրդ դարի դրական-գիտական մտածողութեան ներկայացուցիչն է մեր կեանքում, որ ցանկանում է ոչ միայն զրական իմացութիւնները պատուասել մեր մէջ, այլ և կրօնը անհատականացնել, կապել ո՛չ քէ հաստատուեան, այլ անհատի նետ։ Նրա կարծիքով՝ կրօնի աղբիւրը ո՛չ թէ արտաքին՝ հաստատութեան մէջ է, այլ ներքին՝ հոգեկան աշխարհում։

Հայկական կեանքում նազարեանի այս փորձը հանգիպեց հայ հոգեորականութեան բուռն ընդդիմութեան ճիշդ այնպէս՝ ինչպէս Եւրոպայում ընդդիմութեան էին հանդիպել զրական մտածողութեան, նոր գիտութեան ներկայացուցիչները և կրօնական մեծ րէֆորմատորները։ Հայ հոգեորականութեան արմատական րէֆորմը հնարաւոր չէր։ Նա կազմակերպուել էր միջնադարում իր մտաւոր հետաքրքրութեամբ, իր բարոյական վարքագծով, իր աշխարհիմացութեամբ՝ նա մէկ դաս էր,

որ անցեալին էր պատկանում և ներշնչումի նոր աղբիւրներ չունէր։ Իր իսկ անցեալի աւանդութիւնները, գարաւոր փորձը թոյլ չէին տալիս նրան նոր գաղափարների կրողը լինել։ Գաղափարները, որոնք մերժում են նրա կրօնական իմացութիւնը, նրա հասարակական գոյութեան հիմերը։ Հայ հոգեորականը ինքն իրենից հրաժարուել չէր կարող։ Նրանից անկարելի պահանջներ անել ի գուր էր։ Ու եթէ հետագայում ու մինչեւ այսօր էլ նա պահեց իր աղղեցութիւնը՝ զրա պատճառը այլ է։ 50—60 թուականներին պարզ էր, որ հայ հոգեորականութիւնը մեր մատոր-մշակուրային շարժման մէջ դեր չունի, որ մեր հոգեւոր կեանքը զնում է այլ ուղղութեամբ՝ քան կ'ուզէր հայ եկեղեցու ներկայացուցիչը, ու զնում է առանց երան եւ երան դէմ։

Կար և մի այլ, կարեռ հանգամանք, հայ կղերի և նոր ստեղծուող աշխարհիկ մտաւորականութեան բաժանումը ցայտուն գունաւորում ստացան լիզլի ուլցը մղուող պայքարում։ Հայ հոգեորականութիւնը պաշտպան կանգնեց անցեալի մեծագոյն արժէքի՝ զրաբար լեզուի, որ և պաշտօնական լեզուն դարձաւ եկեղեցու, կոնդակների, աղօթքների։ Պահպանողական մամուլը լրջօրէն պնդում էր, որ Աստուած Աղամի հետ խօսել է հայերէն, այն էլ գրաբար լեզուով — ուրեմն նրա գարաւոր իրաւունքներին ձեռք կպցնել՝ սրբապղծութիւն է։ Լեզուի շուրջը մղուող այս պայքարը արեման եւրոպայում անդի էր ունեցել XV—XVIրդ դարում այնտեղ միջազգային լատիներենի դէմ ծառանում էին նոր կառուցուող ազգերը՝ իրենց ազգային լեզուներով։ Կրօնական պառակտումը նաև լեզուի պառակտում էր։ ազգային չեխերէնը, գերմաներէնը, անգլերէնը բոնում են լատիներէնի տեղը, ինչպէս Հուասական, լութերական, Անգլիկան և Պրէսբիտորեան եկեղեցին բանում էր կաթոլիկ եկեղեցու տեղը։ Մեղ մօտ այդ

արտայայտուում էր՝ որպէս գրաբարի եւ աշխարհաբարի կորիւ՝ հանրային կեանքի հաղորդիչը լինելու։ Բատ Նազարեանի՝ գրաբարի իրաւունքները անցեալին են պատկանում։ Նրա ստեղծողները, նրանով խօսողները այլևս չկան։ նա առօրեայ, խօսակցական, կենդանի լեզու չէ, այլ «գրաբար», մեռած լեզու։ Իւամիկը մշակում է իր լեզուն, Մեռածին կենդանութիւն տալ ի գուր յոյս է։ կենդանի, մշակուող լեզուն պիտի հիմք ընդունել նոր կազապարուող ազգութեան, ճիշդ այնպէս ինչպէս մեր նախորդները՝ երբեմնի կենդանի գրաբար լեզուն հիմք ընդունեցին իրենց գրականութեան համար։ Նա կար գրից առաջ, կային նրանով խօսողները։ Գրաբար լեզուի պաշտպանութիւնը և գործածութիւնը մի մեծ անգունդ բացեց հայ եկեղեցու և հայ զանգուածների մէջ։ Անհասկանալի լեզուով եկեղեցին նրան ոչինչ չէր տալիս։ Աստծու խօսքը միայն դատարկ հնչիւն էր և ոչ կենդանի խօսք խաչուած Վարդապետի։ Լեզուի ըուրջը մղուող պայքարը՝ մեկ մեծ ապացոյց էր, որ հայ կիերը իր զործը բաժանել է նոր ազգութեան կերտողներից՝ աշխարհիկ մտաւորականութիւնից։ Ահա ինչո՞ւ Նազարեանը յուսահատ և դառնութեամբ ասում է 1859 թ. «Այժմ ժողովրդի և հոգեորականների մէջ օրէ օր աւելի լայնանում է բաժանող խարոցը։ Ժողովուրդը հետեւելով ժամանակի ստիպողական ընթացքին և յառաջ գնալով, բայց հոգեորը մնալով միշտ տղիտութեան և խաւարի մէջ, ուրեմն և բնական էր տեսնել այստեղ մի ողբալի պատերազմ լուսի և խաւարի մէջ»…… Ապա «հոգեոր դասը, որ պիտոյ է լինէր համեմիչ աղը ժողովրդի համար, անհոգութեամբ անհամացել է» (117)։ Երբեմն հայ վանքերը եղած են լուսաւորութեան փարուները, այժմ «հայ վանքերը գարձել են միայն խաւարի օթևանք» (123)։ Եթէ երբեմն հայ կղերը եղել է «արդարե լուսատու ճրագ հայոց ազգի համար»,

ուզա այժմ հայ արեգաները «ինքեանք ծոյլ և դանդաղ, պարարում են իրենց պորտերը, ոչինչ չեն ուսանում, ոչինչ չզիտեն և ազգի գիտնականներին հալածում են գատարկ բամբասանքներով» (144)։ Այս բոլորը հետեւղականորէն պիտի տանէր հայ հոգեորականութեան աշենքի եւ դերի միաւումին մեր վերածնութեան մէջ եւ գրան էլ յանզում է Նազարեանը։ 1860 թ. նա իր վերաբերումը զէսի այդ գասը ձեւակերպում է այս խօսքերով։ «Արեղաներին գործ չկայ այլիս ազգային խրնդիրների մէջ, ժողովուրդը կարոտ է այժմ այլ ուսուցիչների, քան թէ տալ կարող են նրան խուցերի մէջ փակուած, մարդկութիւնից ամենելին օտարացած մի հասարակութիւն» (134)։ Այսպէս ուրեմն հայ արեղան ոչ միայն զրական ազգակ չէ մեր նոր ազգութեան, այլ և ժառանգորդը չէ իր անմահ նախորդների։ Նա մի ժամանակավրէպ է, անախրոնիզմ։

Եթէ հայ եկեղեցին, որպէս պատմական աւանդութիւններով պարուրուած մէկ հաստատութիւն, և հայ կղերը՝ որպէս իրաւատէր և խոչոր անցեալ ունեցող մէկ զաս, անկարող են իրենց չուրջը հաւաքել նոր ստեղծուող հայութիւնը, ապա ո՞վ է տանելու այդ գործը, ո՞վ պիտի հիմնաւորի հայոց հոգեոր արժէքները։ Այս խնդիրը նորէն դրում է Նազարեանի առաջ, որովհետեւ հասարակական կենդանի ուժերի և մշակոյթի մէջ կայ մէկ սերտ կապ։ «Մարզս է, ազգերն են որոնց հայրենասիրական աշխատութեամբ յառաջ է գիմում աշխարհ հը...» (137)։ Ազգութեան օրկանիզմի մէջ միշտ մէկ զաս՝ շնորհիւ իր տնտեսական ուժի, կազմակերպութեան, իրաւունակութեան, բարձր մշակոյթի կանդնում է շարժման գլուխը, որով և տալիս է այդ շարժմանը իր գունաւորումը, իր նպատակները, ձեերը։ Նազարեանը հայ կեանքում որոնում է նոր խաւ, որ զեկավարը հանդիսանայ հայութեան զարգացման դործի։

Եթէ հոգեորականութիւնն անընդունակ է այդ գործի համար, ապա կայ հայ մեծատունը, «հարստականք»:

Այստեղ նրա ելակէտն է ոչ թէ հայ հարուստի ազդային գիտակցութեան չափը, այլ նրա նիւթական կարողութիւնը, որ նա ու զումէ ծառայեցնել հայոց կըրթական – մշակութային գործին: Բայտ նորա՝ հայոց «մեծատունը» պէտք է հոգանաւորի հայ հոգեոր շարժումը, իր նիւթականը պիտի տայ նրան: Մեծատուն կոչումն էլ հէնց այդ է. – «Մեծատունների, իշխանների, թագաւորների կոչումը մարդկութեան մէջ այն է, որ նոքա արդէն եղածը և կանաչածը աղջային հոգու հիմքերից՝ իւրեանց կարող ձեռքով հովաննաւորէին, մեծափոյթ խնամակալութեամբ ջուր տային և սնուցանէին և այսպէս հասուցանէին ցանկալի պայտաքերութեանը» (281): Հայ մեծատունը իր նիւթականից բաժին պիտի հանի հայկական ընկերութիւններին, գպրցներին. գրչի մշակներին, մամուլին: Բայց ո՞վ է ինքը՝ հայ մեծատունը: Դա հայ հարուստն է, որ ոռւսական և Անդրկովկասի խոչոր քաղաքներում՝ ներելի և աններելի միջոցներով դրամ է հաւաքել: Ոռւսահայ բուրժուազիայի ծագումը կապւ ում է ոռւս – պարսկական և ոռւս – տաճկական պատերազմների հետ, երբ կապալառուի գերում նա հսկայական հարստութիւն հաւաքեց: Այդ հայ «նախնական կապիտալի կուտակման շրջանն» էր. 50-60 թ. այդ կապիտալը մտնում է Անդրկովկասնան և ոռւսական արետուրի մէջ, իսկ նոյն տարի 70ական թ. գործադրութեան է մտնում խոչոր արդիւնաբերութեան մէջ: Հայ ծագում ունեցող բուրժուազիան գառնում է մեծ անտեսական ոյժ ամբողջ Անդրկովկասում՝ աղջերով նաև այդ երկրի աղջամիջեան յարաբերութեանց վրայ: Այդ բուրժուազիայի անդամներից շատերին նազարեանը ճանաչում էր անձամբ, ծանօթ էր նրանց հոգեոր կեանքին և նիւթական աղ-

բիւրներին: Նազարեանը չի տախս նրանց ղեկավարի դեր, այլ օժանդակողի: Իր հոգեկան հարստութեամբ, հետաքրքրութեան չափով՝ նա գործի գլուխը կանգնել չէր կարող, բայց նիւթապէս օժանդակողի գերումկարող էր լինել, որովհետեւ, առանց նիւթի, առանց արծաթի ոչինչ կարելի չէ գոյացնել աշխարհի վրայ: Այդ նիւթն է, որ պիտի տայ հայ մեծատունը: Բայց այդպէս լինելու համար «հայ մեծատունը» պիտի լինի հայ՝ ո՞չ միայն իր ծագումով, այլ հոգեով, մշակոյթով, շահերով: Նրա առեւտրա-արդիւնաբերական կեանքի կենդրոնը պիտի լինէր ոչ թէ ոռւսական և Անդրկովկասի միջազգայնացած քաղաքները, այլ բուն հայկական գաւառը, ուր նրա կապիտալը յեղափոխէ գեր կը խազայ, ստեղծելով դասակարգային նոր յարաբերութիւն, շարժման մէջ զնելով մեր գաւառական քնած միջավայրը: Սակայն այդպէս չեղաւ. հայ կապիտալը բռնեց Հիւսիսի ուղին – ապազգայնացաւ, ապա – հայրենացաւ ինքը, և մեր ընկերային կեանքի համար դարձաւ անպտուղ ոյժ. նրա տեր տեղ եւ դիրք չունեցաւ մեր հասարակական շարժումների մէջ: Իսկ հայ գաւառը երկար ապրեց իր բնատնտեսութեան շրջանը. նա չգարձաւ ցանկալի շուկայ հայ բուրժուազիայի համար: Անդրկովկասնան և ոռւսական միջավայրում այդ բուրժուազիան ոչ միայն իր տնտեսութեամբ, այլ և մշակոյթով ապազգայնացաւ. իր կապիտալի հետ ընթացաւ և նրա հոգեոր հետաքրքրութիւնը: Հայ յեղուն, գըպրոցը, գրականութիւնը նրան ոչինչ չէին տալիս: Լեզուն ընկերային մեծագոյն զենքն է տնտեսական նուանումի համար: Հայոց լեզուն այդ բարձրութեան չէր հասած, ուստի հայ «մեծատունը» փոխարինեց այն ոռւսերէնով, որ տնտեսական բարգաւաճումի, քաղաքականութեան և մեծագոյն կուլտուրայի լեզուն էր:

Այս բոլորը տեղի էր ունենում և նազարեանի ժա-

մանակ և նրա աչքի առաջ: Խուսացումը սկսվում է Անդրկովկասի գրաւման հետ միաժամանակ: Նազ ու ենթանը տեսնում է այդ. «ազգի հարստականքը միշտ հեռի են մնացած ազգային լուսաւորութեան գործերից և միշտ սառնասիրա կամ անսիրա են դէպի այդ խնդիրները» (281): Հայ հարուսալը չունի հասարակական բնազգներ. նա միայն նիւթական հարստութեան յիշելից է ընկած. աւելի խոր և հոգեոր նպատակներ չի դնում իրեն: Նիւթը դարձել է նրա համար նպատակ, ոչ միջոց: 1868 թ. Նազարեանը գրում էր. «Բայց դոքա շատ անգամ կուրացած անձնասիրական և փառասիրական ախտերով, չկամին ևս գիտել, թէ աշխարհի երեսին հայ ազգ կայ, ազգային յառաջադիմութեան կարիք: Այդպիսիների ազգը և ազգային օգուտը իրենց անձն է, իրենց փառքն ու վայելչութիւնը» (281): Սյա որակումները, որ տուեց 60-ական թ. Նազարեանը հայ «մեծատունին», մնաց իր ուժին մէջ և հետազում, որովհետեւ սկսած 80-ական թ. նրա ապազգայնացումը աւելի արագութեամբ տեղի ունեցաւ և հայկական գործերից մեկուսանալը աւելի սիստեմատիք: Նա չունեցաւ հայկական քաղաքականութիւն, իր բախտը չկատեց ոչ մեր վերածնութեան, ոչ մեր յեղափոխութեան հետ, ուստի և չզարձաւ հայ ընկերային մարմնի բաղադրիչ մասը: Նազարեանն այդ լաւ գիտէ, ուստի և յիշեցնում է նրան, «բայց եթէ մեծատունը, ինչպէս մինչեւ այսօր եղած է, կը բաժանուի ազգից ուրիշ առանձին օգուտ և պատիւ խնդրելով իրեն համար, քան թէ ազգայինն է, այսուհետեւ Տէրը նոցա հետա» (282): Հայ մեծատունը այդ «օգուտը» վազուց գտել էր գրեթէ իր ծագման օրից. ուստի իր և հայութեան միւս դասերի մէջ գործակցութիւն, աշխատակցութիւն չստեղծեց. նրանք մնացին խորթ, անծանօթ և բաժան: Հայ բուրժուազիայի լաւագոյն դէմքերն անգամ մնացին մեր

հաստատութիւններին միայն նպաստներ տուող, իրենց յաւելեալից նրանց բաժին հանող, ուրիշ ոչինչ:

Այսպիսով՝ թէ՛ հայ հոգեւորականը, թէ՛ հայ բուրժուազիան, որոնց հետ Նազարեանը այնքան յոյսեր էր կապել, անկարող են լծուելու հայկական ազգային գործին: Մէկը իր անցեալից աղատագրուել չի կարող, միւսը օտարի պալատների մէջ է գտնում իր գոյութեան իմաստը, լքելով հայրենի խրճիթը:

Արդ, ո՞ւմ ջանքերով պիտի տեղի ունենայ մեր ազգային գարթօնքը և ո՞ւմ համար: Եթէ հայութեան հոգեոր և նիւթական ուժերի զեկավարները հարժարում են իրենց մասնակցութիւնը բերելուց մեր ընդհանուր գործին, միթէ պիտի կանգ առնի՞ մեր ազգակերտման գործը: 60-ական թուերին այս հարցը շատ գրամատիկ ձեռվ գրւում է Նազարեանի առաջ: Կարծէք նա տեսնում է իր ամբողջ կեանքի իմաստ գարձած գործի փլուզումը. «Աստուած իմ, միթէ ազգը չգտնելով իր մէջ համախոն մեծատունը՝ պիտի բոլորովին ուրանա՞յ իր անձը, հրաժարուի՞ ամենայն բարեկարգութիւնից և այզպէս գատապարտէ՞ ինքն իր անձը դէպի տգիտութեան խաւարը» (281): Նազարեանի հայութեան հետ ջերմ սիրով կապուած՝ որոնող հոգին միայն մի պահ երկնարանքի, կասկածի մէջ է, ապա նոր հիմքեր է որոնում մեր ազգային գոյութեան: Եթէ հայ մեծատունը որ «Աստուծոյ չտուածից այնքան չքաւոր է բանականութեամբ և բարոյականութեամբ», հրաժարում է իր պատմական գերից, ապա կայ մէկ աւելի մեծ խաւ, գաս, որ գործակցելով նոր ստեղծուող մատուրականութեան հետ՝ կարող է կառուցանել հայոց նոր ազգութիւնը: «Ինքը ժողովուրդը պարտական է վեր կենալ և գործ գնել իր վերայ մի բարոյական գաւազանի զօրութիւն: Ինքը պիտոյ է լինի իւր իմաստուն սաստող և պատմող և խրատող դաստիարակիչը,

ինքը պարտական է հոգալ իւր միջից իւր ուսուցիչքը և զպրոցքը» (127): Ճիշդէ «ազգը հաւասարապէս պատշաճնում է մեծատան և հասարակին» բայց եթէ մեծատունը հրաժարւում է, ազգութեան խոնարհ խաւերը պիտի վերցնեն ընդհանուր գործը իրենց ձեռքը: Սրանից էլ բխում է նազարեան ազգութեան դեմոկրատիկ ըմբռնումը: Նա հրաժարւում է այդ զաղափարի բուրժուական բնորոշումից, որն անպատճուռ կատարուել է հայ հասարակական մարմնի մէջ գործող ուժերի մանրազնին ուսումնասիրութիւնից: «Ազգը և եկեղեցին է ժողովուրդը և ոչ թէ մի քանի մասնաւոր անձինք, աշխարհականք կամ հոգեորք, որ ինչպէս կամէին կարող են ուղղել ազգը, քարշել և տանել նորան դէպի ո՞ր կողմը հաճոյ է նոոն...» (84): Բայց ո՞վ է այդ «ժողովուրդը»: Գա՞ ինչպէս նազարեանն է բանաձեռում «հասարակն» է: «մի ազգի զիմաւոր ոյժը հասարակի մէջ է, որովհետեւ հասարակի բազմութիւնը հարիւր հազարաւոր է, իսկ մեծատունների թիւը տասն և քսան է» (282): Բայց «հասարակը» ոչ միայն թիւ է, բանակ, այլ և որակ. «աշխարհիս ըոլոր ականաւոր գործերը իմաստութեան և ձշմարտութեան մէջ յառաջացած են ժողովրդի միջակ և չքաւոր դասակարգերից» (նոյն էջը): Ազգութեան այս դեմոկրատիկ ըմբռնումը յամենայն դէպս շատ հեռու է բուրժուական զաղափարախօս դարձնելու նազարեանին, ինչպէս բոլցերկեան նորերս հրատարակուած «Հայոց Դրականութեան Պատմութեան» մէջ տրուած է: Այդ աշխատութեան մէջ ամէն ինչ կայ, և՝ քաղաքատնտեսութիւն, և՝ մարքսիզմ, և՝ հասարակագիտութիւն, և՝ ամէն տիսակ քաշքուուք, բայց գրականութիւն, հեղինակների գաղափարական աշխարհի առարկայական վերլուծութիւն՝ երբեք: Աղճատուած է բոլորի գէմքը, արուած անյարիր և ծիծաղելի որակումներ, որոնք միայն մէկ եղբակացութեան են բե-

րում, որ մարքսիզմը ամենէն բութ զէնքն է, ամենէն անկատար մեթուոք ընկերային՝ քաղաքական գաղափարների և արևեստի վերլուծութեան, մանաւանդ երբ նա ընկնում է անլուրջ և անպատրաստ մարդկանց ձեռքը: Դառնանք նազարեանին. — իր դեմոկրատիկ ազգութեան տեսակէտից էլ նա նայում է հայոց հասարակին. «այսքանս թող բաւական լինի պարզ և բացայաց հասկացնելու մեր հայոց հասարակին իւր իրաւունքը, իւր կշիռը, իւր խորհրդաւոր կոչումը ազգի մտաւորական և բարոյական վերաշինութեան համար»: ապա մի հոյակապ բանաձեռում է տալիս իր ազգային դաւանանքի. «Հայկազեան ժողովրդի լուսաւորութիւնը պիտոյ է լինի իւր յատուկ ձեռքի վաստակած վաստակը... ինքեանք յատկապէս պարտական էլին ձգել իւրեանց գութանը, ինքեանք պարտական էլին մշակել և սերմաննել իւրեանց անդաստանը, եթէ մի օր կամէին սերմաննել իւրեանց անդաստանը, եթէ մի օրհնեալ հունձ, ուրիշ փրկութեան ճանապարհ չկայ մեղ»: Բայց ո՞վ է այդ «հասարակը»: Սխալ պարհ չկայ մեղ»: Բայց ո՞վ է այդ «հասարակը»: Սխալ կը լինէր այդ խօսքի տակ հասկանալ հայութեան մեծաւոր կոյն զանգուածը՝ հայ գիւղացիութիւնը, որ խոչոր թիւ էր կազմում հայկական գաւառներում: նազարեանը հայ գիւղացիութեան, իսկական հասարակին բնաւ չճանաչեց. նրա գրական-հասարակական գործունէութիւնը, որ խոչոր թիւ էր կազմում հայկական գաւառներում: նազարեանը հայ գիւղացիութեան, իսկական հասարակին բնաւ չճանաչեց. նրա գրական-հասարակական գործունէութիւնը, որ խոչոր թիւ էր կազմում հայկական գաւառներում: նազարեանը հայ գիւղացիութեան, իսկական հասարակին բնաւ չճանաչեց. նրա գրական-հասարակական գործունէութիւնը, որ խոչոր թիւ էր կազմում հայկական գաւառներում:

կովկասեան քաղաքներում հաստատու ած մանր և միջին առևտրականը, «քաղքենին», արհեստաւորը, որոնք դեռ ոռւսացման ձանապարհը չեն բռնած, ապրում են ինքնամփոփի, մեծ խմբերով, պահել են իրենց հայկական շունչը, կրօնը, լեզուն, ունին դպրոցներ։ Ահա, այստեղ մշակում է հաւաքական հայութիւնը, նա է նազարեանի «հասարակը»։ Այդ խաւը ոչ միայն պիտի լինի հայ մշակոյթի օժանդակողը, այլ, որ գլխաւորն է, նրա համար պիտի ստեղծուի այն, որովհետեւ նա է, որ կարիք է զգում հայ լեզուի, հայ գրականութեան, ազգային եկեղեցու։ Եւ պէտք է պատուաստել այն շուտ, քանի ոռւսացման գործը՝ մեծատունից սրան չի հասել։

Հենց այդ խոնարհ խաւերին հայ պահելու համար է, որ Նազարեանը ընդարձակօրէն մշակում է «ընդհանուր հայկական ընկերութիւն» հիմնելու ծրագիրը, ձեւաւորում նպատակը, որոնում նիւթական հիմքերը, ընկերութիւնը պիտի պահի մէկ հայկական «մայր գալոց», որը պիտի հիմնուի «ժողովրդի բազմութեան մէջ։ ուրեմն մի հայաբնակ քաղաքում հարաւային Ռուսաստանի»։ Այդ ընկերութիւնը իր ճիւղերը պիտի ունենայ միւս հայաշատ քաղաքներում։ Նրանց անունների թւարկութիւնը ցոյց է տալիս, թէ ո՞վ է նազարեանի հոգացողութեան առարկան։ բոլոր քաղաքները գտնուում են Հայաստանից գուրս՝ բացի Երևանից։ Նա առաջարկում է, որ «ազգային մայր գալոցը» շինուի Նախիջևանում՝ հիւսիսային Կովկասում։ Նազարեանը՝ պատմական դժբախտանցքերի հետեւանքով՝ Կովկասում, Ռուսաստանում ցրուած հայ միջին եւ խոնարի դաշի, ազգային ինքնուրոյն արժեքների պահ հանման եւ զարգացման ջառագովն է Եւ հաւատարիմ պատպանը։ Բայ նրա հայ մշակոյթի հիմքը ազգային-ժողովրդական աշխատանքն է։ «Բոնադատիչ գաւազանը» չկայ, մնա-

ցնլ է մեր կամաւոր աշխատակցութիւնը՝ մեր հոգեոր արժեքների շուրջը։ Այդ արժեքները պիտի մշակուին, ուոճանան մեր «հասարակի» համար։ Հայ մեծատունը մեր պատմա-կուլտուրական արժեքներով չի հետաքըրքը քըրւում, հայ հոգեորը այլես ազգակ լինել չի կարող նոր մշակոյթի ստեղծման մէջ։ Երկար գարեր նա վարիչը եղաւ հայ մտքի, հայ քաղաքականութեան, բայց նախորդ դարի կէսերին մեր վերածնութեան հիմնական հարցերի վերաբերմաբ բռնեց բացասական գիրք, ուստի և բաժանեց իրեն ազգից, գարձաւ յետագէմ և պահպանողական։ Այս երկոյթների հետեւանքով մեր կուլտուրական շարժումները, մեր հայական յեղափոխութիւնը՝ չհաւաքեց իր ուրցը հանուր հայութիւնը, նա սացաւ շետուած դեմոկրատիկ, աշխատաւորական բնոյթ, բայց չեղաւ համազգային, համադասալին։

Նախորդ դարի կէսերին էլ ստեղծուում է աշխարհիկ հայ մատարական ներինը, որ և բաւարարում է ժամանակի հոգեոր պահանջներին։ Ռուսական տիրապետութեան հետեւանքով առաջ էր եկել մէկ խաւ, նոր շահերով, հետաքըրքութեան նոր և լայն սահմաններ։ ըստ Ռուսական և եւրոպական գալոցները բացել էրն այդ միջին դասի համար նոր հորիզոններ, նոր աշխարհներ։ պիտի մշակուէին հայոց լեզուով նիւթի, մտածումի, զգացումի նոր ձեեր, եղած հոգեոր կարիքը բաւարարելու։ Նազարեանը սկզբում կը կարծէր, որ այդ գործը կարող է կատարել հայ հոգեորական-մտածուրականը, բայց սխալուեց։ «Նոր գինու համար հարցուոր է պատրաստել նոր տիկ։ Նոր հոգին կամի և նոր մարդիկ, ուրեմն և մի նոր կարգ զաստիարակութեան, որով միայն կարող է նա աճել և զօրանալ» (183)։ Այդ նոր մարդը՝ հայ աշխարհիկ մտաւորականն էր, որ Դորպատից, Մուկուայի և արտասահմանի բարձրագոյն գպրոցներից դուրս գալով՝ մեր հասարակական կեանքի

զեկը առնում է իր ձեռքը։ Խ. Աբովեանը առաջինն էր դրանցից, ուստի և դարձաւ իր ժամանակի մենակ մարդք։ Նազարեանը իր գործունէութեան ընթացքում ստեղծեց համակիրների մէկ ստուար խումբ և մենակ չէր։ Նոր ստեղծուող մտաւորականութեան եւ «հայ հասարակի» միացեալ նիգերով է, որ կ սփուն կարող եր մենալ հայութիւնը, որպէս պատմակուլտուրական ինքնաշխակ միաւոր։ Պիտի սաեղծուեր այդ գործակցութիւնը երկու ուժերի մէջ, մէկը պիտի տար իր նիւթականը, միւսը՝ իր մտաւորական ոյժը։ Հայոց նոր ազգութիւնը կառուցւում է այդ ուժերի աշխատակցութեամբ։ Նազարեանը գծում է ապաերկրային և ապաքաղաքական հայութեան գործառնութեան ձեւերը։ Նպատակը և միջոցները։ Այդ հայութիւնը կառուցւում է նրան պատկանող անհատի ազգային գիտակցութեան, ինքնանաշութեան եւ նիւթական զոհաբերութեան վրայ։

Ազգութիւնը պերսոնալ միութիւն է։ Սա ոռւսահայոց ազգային կառուցումի առաջին եւ խիստ կարեւոր փուլն է։ Հետագայում մեր հասարակական միտքը եկաւ լրացնելու, ընդարձակելու, շարունակելու և ամուր պատւանդանի վրայ կառուցանելու այն գործը, որի վրայ աշխատել էր Նազարեանը՝ հայութիւնը։ Հայ քաղաքական միտքը ընդարձակեց «հասարակի» ըմբռնումը։ Նա դարձաւ հայ աշխատաւորը, լինի նա գիւղում թէ քաղաքում։ Ապա այդ «հասարակը» իրաւատէր ճանաչւեց իր հայրենիքում, հայկական գաւառներում։ Նրա շահը, ապագան կապուեց «մի կտոր հողի հետ» — ինչպէս կ'ասէր մեր նալբանդեանը։ Հայ հասարակը հայրենացաւ։ Ոչ միայն այդքան։ Նրա մարդկային և ազգային շահերի պաշտպանութիւնը ընրոնուեց քաղաքական իմաստով, հայութիւնը դարձաւ, երկրային և քաղաքական առումով, ուրոյն մշակութային հաւաքառ կանութիւն։ Նազարեանը առաջիններից մէկն է, որ

խորհրդածութեան նիւթ դարձրեց հայութեան ստեղծումը, հասարակի ապագան, գերագոյն ջանքեր թափեց կերտելու հայի ուրոյն գիմագիծը, անաղարտ պահելու այն, տեղ տալու գոյութիւն ունեցող և նոր ձնուող ազգերի շարքում։ Իր մեղքը չէ, որ հայ ընկերային մարմնի մի մասը չմիացաւ այդ գործին։ Իր մեղքը չէ մարմնի մի մասը չմիացաւ այդ գործին։ Իր մեղքը չէ նոյնպէս, որ հասարակը նա որոնեց գաղութային մինչութեան արագ աշխատանքի, հոգեկան մեծ տաշխագրում։ Իր բոլոր աշխատանքի, հոգեկան մեծ տաշխագրի և զէպի հայ մշակոյթն ունեցած իր հայրառապանքի և զէպի համար նա արժանի է մեր մեծարանքին և կան սիրոյ համար նա արժանի է մեր մեծարանքին և երախտագլաւութեան։ «Յիշատակն արդարոց օրհնեալ եղիցի»։

Ա. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

(ՄԻ ԷԶ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄՏԲԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ)

I

Բերլինի վեհաժողովը դարձակէտ եղաւ հայ հասարակական-քաղաքական մտքի համար։ Հայ զեկավարութիւնը՝ կ. Պոլսում և Ռուսա-Հայաստանում՝ տարբեր գնահատում տևեց 61-րդ յօդւածին, սակայն բոլոր հոսանքների համար նա եղաւ մէկ խթան վերագնահատելու հայութեան ուժերը, նպատակները և գործունէութեան ձեւերը։ 80-ական թւականները այդ վերագնահատումի շրջանն է։ Նրա բովում մշակւում է, ծանըր հիմաթափումներից ու խարիսափումներից յետոյ, հայ յեղափոխական-քաղաքական միտքը և ձեւաւորուում են հայոց քաղաքական կուսակցութիւնները։ Նոյն ժամանակներում ձեւակերպւում էր և մեծ պետութիւնների քաղաքականութիւնը։ Հայկական հարցի նկատմամբ։ Մինչ եւրոպական զիւանազիտութեան ձեռքին 61-րդ յօդւածը նոր միջոց էր Թուրքիայի ներքին գործերին միջամտելու, կամ մէկ գործիք՝ նրա ասիսական նահանգները փրկելու Ռուսաստանի գրաւումից, հայութեան համար նա յոյսի և իրաւոնքի աղբիւր էր, նոր աշխատանքի մղիչ մի ազգակի։ Ամէնից յուսալըքւածներն անգամ, որոնք գործին աւելի մօտ էին կանգնած, գտնուում էին, որ նրանով սկսւում է մէկ նոր շրջան մեր ազատազրական շարժման մէջ։ Բերլինի վեհաժողովը առաջ բերեց յուսալըքւածների մուտքագրութեան հղուարկի ինսդրում, որ նա առաջ ազատազրական շարժման մէջ։ Բերլինի վեհաժողովը կատարուած էր անել, կամ իր ունեցած իրաւունքը նոր եղանակներով պաշտպանել։

Հայ գատի պաշտպաններից մէկը՝ Խրիմեանը լաւագագարձաւ արտասահմանից նրա կարծիքով հայկական հարցի լուծումը միայն գիւանազիտութեան միջոցներով կարելի չէ և, պահանջում է նաև զուգընթաց ձեռնարկներ։ Մեծ պետութիւնների խաչաձեռող շահերը նեցուկ են Թուրքիայի գոյութեան, և ազգերի ազատութիւնը առանց պայքարի, արիւնի երբեք ձեռք չի բերուում։ Հայը պարտած ելաւ միջազգային մեծ

վերիվայրումների միջից, որովհետեւ «անդէն, անեղ-ջիւր, անասպար կապրինք»։ Նա ներկայացաւ թուր-քիայի քրիստոնեայ ազգերի բախտը որոշողներին թըղ-թով, աղերսագրով, որ մի շատ փխրուն զէնք էր իրաւունքի պաշտպանութեան համար։ Հայերի ներկայանալը միջազգային դիւանագիտութեան առաջ այդ-պիսի մի ձեռվ, այսինքն անպատրաստ և մուրացիկի դերում, մի դաս էր գործունէութեան նոր մեթոսներ որոնելու։ «Աշխարհը սորվեցաւ այդ դասը, իր մրցա-նակն առաւ, դու դեռ անուս մանուկ մնացիր», ասում էր Խրիմեանը հայութեան։ «Աշխարհի սորված դասը» Բալկանեան ազգերի գործադրած միջոցն էր՝ ապստամ-բութիւնը։ «Ծերեփների» քարոզիչը այդ էլ ի նկատի ունէր որպէս հետազայ գործունէութեան միջոց։ «Հայ Գոյդի» մէջ նա մշակել էր արդէն հայոց յեղափոխու-թեան սկզբունքը և եղանակները։ «Ահաւասիկ Ս.ստու-ծոյ մատն ու հրեշտակ աշխարհիս յեղափոխութեան աւազանին ջուրը կյուղեն։ ով զէնքը վաղ ձգէ նրա մէջ, — դրում էր Խրիմեան, — նա միայն իր ցաւերէն ազատ կլինի»։ Խրիմեանի մտածողութեան տեսակէտից այս շատ նշանակալից է։ Յեղափոխութիւնը Ս.ստուծոյ գործն է։ Նրա մատը խառն է ազգերի ազատագրութեան գործի մէջ։ Կնշանակէ յեղափոխութիւնը արդար է և իրաւացի, յեղափոխականը Աստուծոյ առաքեալն է, որ կոչւած է արդար կարդ ստեղծելու այս աշխարհում։ Խրիմեանի յեղափոխական մտայնութիւնը մշակւած էր գեռևս 60-70ական թւականներին, երկրում, բուն ժո-ղովրդի մէջ, Մուշում և Վանում, ուր նա տեսել էր զովրդի մէջ, Մուշում և Վանում, ուր նա տեսել էր հայոց հարստահարութիւնները և այն եղաքացութեան եկել, որ հայի ազատազրումն պիտի լինի իր բազկի միջոցով։ Եւրոպական դիւանագիտութիւնը և Բալկան-եան աղղերի ազատագրման փորձը աւելի համոզեցին նրան այդ տեսակէտի մէջ։ Նա հրահրում էր այն միտքը,

որ հայը պէտք է կազմակերպւի, գօրանայ, մտաւոր և զինական ուժ տնօսեսի և առաջ բերի այնպիսի շար-ժումներ, որ հարկազրէ մեծ պետութիւններին միջամ-տելու թուրքիայի ներքին գործերին։ Միայն այդ զէպքում օտարը ի նկատի կունենայ մեր հարցը՝ թէ-կուղ և իր շահերի տեսակէտից։ Խրիմեանը նայութեան ազատագրութիւնը դիւանագիտական նակատից թեկում էր ներքին՝ ազգային նակատի վրա։

Հայոց ազատագրութեան այդ ուղին էր ցոյց տա-լիս և մշակում Բաթֆին իր բազմաթիւ վէպերով, որոնք ցուած էին ուժեղ քաղաքական միտումներով։ Բաֆֆին ամենից աւելի շեշտւած քաղաքական մտածողն է հայ գրականագէտների շրջանակում, գուցէ նրա համար, որ ամենից շատ պատմական հետաքրքրութիւն ու պատ-րաստութիւն ունի։ Նրա պրապառմների շրջանը հայոց պատմութիւնն է, որ նրա համար հանդիսանումէներ-պատմութիւնն է, որ նրա համար հանդիսանումէներ-շընչումների աղքիւր և քաղաքական աշխարհայեցութեան կառուցման միջոց։ Նա ոչ միայն գծեց հայոց ազատագրութեան պայքարի մեթոսները, այլ և ձեւ-կերպեց հայութեան քաղաքական նպատակները, որոշոց նրա ձեւը, տեղը, և այսպիսով եղաւ հայոց յեղափո-խութեան ներենչողներից մեծագոյնը։ Նա զիտակցօրէն մղում էր հային զէպի կազմակերպւած քաղաքական մրբանակութեան միտքը կամանակ, երբ հայ մտաւորակա-լինից ստացած արդիւնքով, երբ անդամ Ծերենցը՝ «Ռ լինից ստացած արդիւնքով, երբ անդամ Ծերենցը՝ «Ռ լինից հոգեկից էր Բաֆֆին վիպագրութեան մէջ՝ այնքան հոգեկից էր Բաֆֆին վիպագրութեան մէջ՝ այնպում էր, որ յուսահատելու կարիք չկայ, («Միթէ պնդում էր, որ յուսահատելու կարիք չկայ»), Բաֆֆին վիւանա-լէնկթեմուրը մեր զու ոն է հասեր»), Բաֆֆին վիւանա-գիտական բոլոր աշխատանքները և նրանից ստացած արդիւնքը համարում էր ոչինչ։ «Դատարկ յոյսերով հնք աղբում...», — գրում էր նա «Մշակի» մէջ, — հնք պարում..., — գրում էր նա «Մշակի» մէջ, — պատկները միայն լուս համբերութիւն ունին։ Ազատու-

թիւն տրւում է այն ազգերին, որոնք իրենց ազատութիւնը սրով պաշտպանել գիտեն։ Սպասել թուրքիայից որ և է բան՝ հայերի գրութիւնը բարւոքելու համար, սպասել թէ նա կը վերածնեի իր հետ բարձրացնելով և հայերին՝ անյօյս բան է։

«Խենքի» մէջ Ռաֆֆին խորունկ ձշմարտութեամբ երեան է բերում հայ - թրքական շահերի հակազրութիւնը և համոզւած է, որ այդ երկու ազգերը գործակցել չեն կարող. ուստի հայութեանը մնում է բռնել միայն յեղափոխութեան ուղին։ Եւ Ռաֆֆին պնդում է իր «Տաճկահայք» աշխատառութեան մէջ, թէ «հայերն այժմ լաւ են հասկացել այդ։ Հասկացել են, որ հասել է մի վճռական բոպէ, երբ կամ պէտք է յանձն առնել ստրկաբար ոչնչանալ, կամ եթէ ցանկանում են իրենց գոյութիւնը պահպանել՝ հարկաւոր է միացած ուժերով ընդդիմազրել քրդերի վայրենի յարձակումներին։ Ուրիշ ձար չկայ։ Այս տողերը նա զրում էր 80-ական թ. կէսերին, բայց արդէն 70-ական թ. վերջերին նա մշակել էր իր վէպերի մէջ այդ տեսակէտը։ Հայոց յեղափոխութիւնը պիտի լինի ժողովրդական, նա պիտի «ցածից զէպի վեր բարձրանայ։ Հստ Ռաֆֆիի յեղափոխութիւնը արդար է և իրաւացի՝ թուրքիայի նկատմամբ, որովհետեւ իր բովանդակ պատմութեան մէջ նա ցոյց չի տւել խաղաղ յառաջադիմութեան մի փաստ, իր պետական մեքենան չի յարմարեցրել ժամանակակից պահանջներին, չի դարձրել այն մշակոյթի, ազատութիւնների, տնտեսական բարգաւաճման մէկ անօթ, այէ միայն բռնութեան, հալածանքների, կոտորածների գործիք։ Եւ ամէն խօսք, քարոզ «հաւատարիմ հպատակութեան»՝ դա ինքնակործանում է, նւասացում, հրաժարումն իր արժանապատւութիւնից։ «Հաւատարիմ հպատակութիւնը, — ասում է Ռաֆֆին նոյն «Տաճկահայք» ուսումնասիրութեան մէջ, — մի այնպիսի պե-

տութեան վերաբերմամբ որպիսին է թուրքիան, նշանակում է կոյր հնազանդութիւն, այսինքն անտրառունջ տանել բռնակալի բոլոր բարբարոսութիւնները։ Եւ հայերը մինչեւ այսօր իրենց հաւատարիմ հպատակութեամբ ոչինչ շահեցին, միայն ծանրացրին իրենց ստրկութեան շղթաները։ Միակ միջոցը թուրքիայի հետ խօսելու մնում է յեղափոխական գործելակերպը։ Եւ Ռաֆֆին իր մեծ տաղանդը նւիրեց հայութեանը յեղափոխութիւն քարոզելով։ Նա կառուցանում էր Խրիմեանի նետ միասին յեղափոխական հայութիւնը։

Այս ձեռով հայոց քաղաքական միտքը երկու տեղումն էլ՝ թուրքահայաստանում և Ռուսահայաստանում մշակուում էր միենոյն ուղղութեամբ՝ հասցնելով միենոյն հետեւանքին՝ յեղափոխական միթուտների կիրառման։ Կար և մի այլ հոսանք, որ զիսաւորում էր ներսէս վարժապետեանը։ Սկլիզը վարժապետեանը հակառակ էր միջազդային դիւանազիտութեան հայկական գործերի մէջ խառնելուն՝ ոչինչ լաւ բան չսպասելով նրանից։ Ներսէս պատրիարքը համոզւած թրքական օրիենքախօն ունէր և նոյնիսկ յատուկ շրջաբերական ուղարկեց թրքահայութեան՝ ուռւ-թրքական պատերազմի ժամանակ՝ կատարելու իրենց քաղաքացիական պատրիարքը պետութեան նկատմամբ։ Նրան զէպի թրքասիրութիւն զրդողը Ռուսաստանի վախն էր, այն Ռուսաստանի որ աստիճանաբար տարածում էր հարաւ և Սան-Ստեփանոյի գաշնազրով միակ հովանաւորն էր դառնում թրքահայութեան։ Դա առաջին քայլն էր գրաւման։ Խսկ այդ գրաւումից սարսափում էր թրքահայ մտաւորականութեան մէկ մասը։ Ռուսահայերի բախտը նրանց համար որոշ էր՝ ուռսահայերը զնում էին զէպի ուռսացում։ Կատել թրքահայութեան բախտը Ռուսաստանի հետ՝ կը նշանակէր զիտակցօրէն մղել թրքահայութիւնը զէպի նոյն ուղին՝ ուռսացումը։ Բայց

երբ հայկական հարցը Բերլինի վեհաժողովից դուրս եկաւ որպէս 61-րդ յօդւած, Ներսէս Վարժապետեանը և իր կողմանակիցները ջանացին լաւագէս օգոստործել այս: Նրանք հաւատում էին, որ այդ յօդւածը իրագործելի է, որ Թուրքը իր յանձնառութիւնը կը կատարի, որ Եւրոպան իրապէս կհսկի բարենորոգումների գործադրութեան վերա, որ այդ բոլորը հայկականնահանգների համար ապահովութեան դուռ կրանան և խաղաղ աշխատանքի համար նոր ասպարէզ կստեզն: Այս հաւատն ու վստանուքիւնը Երանց մղում եր մշակութային - Տնտեսական վերակառուցման աշխատանքի: *) Յիշելով նրանց, ովքեր ամէն բան սպասում էին Բերլինի վեհաժողովից, Վարժապետեանը ասում էր. «Այսպիսի գործ ոչ մէկ օրւան մէջ, ոչ մէջ մարդու ձեռքով կրնայ կատարւիլ. պատրաստինք մեր ապագային. նախ չկենանք հոս. Հայաստան երթանք. Հայաստան զրկենք ինչ որ ունինք ազգին մէջ բանիրուն, աաղանդաւոր, ազգասէր, եկեղեցասէր: Հայաստան երթան մեր դաստիարակք, ուսուցիչներ, մեր վառվուն երիտասարդներ: Ուղիներ պիտի բացւին, ջրանցքներ պիտի շինւին, գործարաններ պիտի կառուցւին . . . Հնդկաս-

*) Սրւանձտեանը յուսախափւած էր վեհաժողովից. նա առաջարկում է կտրել ամէն կապ դիւնազիտութեան հետ եւ ջանալ, որ հայութիւնը կենտրոնանայ բուն Հայաստանում: Սրունձտեանը Եւրոպական միջամտութիւնը համարում է վտանգաւոր: Եւրոպական պետութիւնները իրենց շաների համար ստեղծեցին 61-րդ յօդւածը, որ առիթ ունենան միջամտելու Թուրքիոյ գործերին: Տուժող մննք ենք, բայց ոչ թուրքը եւ ոչ Էլ Եւրոպացիր: Դիւնազիտութեան վրա յենելը սիսալ եւ կործանարար ուղի է: «Այդ կեղծ բարեկամները ոչ հայուն հօրեղբայրն էին, ոչ հայուն բեռին, այլ՝ աւելի ճարպիկ որսորդներ եւ մասքարձներ, որ զմեզ երէ վայրի եւ պատրաստ ոչ խալներու եւ պարաբակ կովերու տեղ դնելով, մեր փարախէն կ'ուզէին խրտցնել, հնուացնել եւ իրենց ծեռքը ճգելով ի սպանդ մատուցանելը: Եւրոպայի վրա յոյս ունենարվ, Սրւանձտեանը թելադրում

տանէն, Անգլիայէն, Թուրքիայէն, Ռուսիայէն և Աւստրիայէն մինչև Պարսկաստան միանան, ձեռք ձեռքի տան բոլոր հայերը: Ահա գործի ինչպիսի հեռանկար էր բաց անում 61-րդ յօդւածը հայութեան առաջ: Թուրքահայերի վերածնունդը պիտի լինէր համայն հայութեան գործը, նրա շուրջն է, որ կերտւելու էր նոր, աշխարհիկ և գիտակից հայութիւնը, համախմբւելու էր հայոց կամքը: Այդ գործը լինելու էր կուլառուր-կըրթական և տնտեսական: Նախ պիտի կառաւցւեր մշակութային հայութիւնը: Մեր պարտութիւնը միջազգային գլուխագիտութեան մէջ հետեանք է մասամբ նրան, որ չկար այդ հայութիւնը:

Այս մէկ տեսակէտ էր, որ լայն արձագանք գտաւ հայութեան բոլոր խաւերում: Մինչև այդ կային ընկերութիւններ Թուրքահայաստանի կրթական գործին նպաստող, այժմ սկսում է շարժում դեպի Երկիր՝ նւրիւելու, գաւառի վերազարթօնքին: 80-ական թւերին երկու սահմաններից ել գաղափարական երիտասարդութիւնը զիմում էր զէպի հայկական բնաշխարհը՝ ոմանք լոկ հետաքրքրութեան համար, ոմանք ուսումնասիրական նպատակով, ոմանք գպրոցական աշխա-

էր, որ հայութիւնը յենւի իր սեփական ուժերի վերա եւ զուրգութանքի ու սիրոյ նիւթը գարձնի Թուրքաց Հայաստանը: Հայութեան ամենամեծ չարիքը այն է, որ նա բարձի թողի է արել եւ բուն հայրենիքը մոռացւած մէկ անկիւն է դարձել այն, սակայն պիտի զիտացինք է մեր ապագան, ուստի եւ «փափազեի է, որ մեր դրամատէրները իրենց ուշը դարձնէին Հայաստանի մէջ հողեր զնելու . . . Նրանք մեծ ազդեցութիւն պիտի ունենային սեղական կառավարիչներուն, թուրք եւ քիւրդ պէյերուն վրայ իրեւ օրէնսգէտ եւ քաղաքագէտ մարդիկ . . . Փէտք է օրէնսգէտներ եւ բժիշկներ երթան հոն, այս երկու զասուն ալ մեծ ասպարէզ կայ Հայաստանի մէջ, որոնցմով կապաշտանէին գոյից եւ կենաց զոհեր: Հայաստանի մէջն է բուն հայկական խնդիրը եւ մենք Պերլինի մէջ կորոննենք զայն»:

տանքին նւիրւելու, ոմանք յեղափոխական գաղտնի աշխատանք կատարելու: Թրքահայաստանը դառնում էր «Աւետեաց երկիր»: Այդ մեծ հետաքրքրութեան, եռուղեռի մէջ կերպարանք ստացան, ձեւաւորւեցին հայ քաղաքական հոսանքները և մկրտւեց նոր հայութիւնը: «Արարատեան» ընկերութիւնը իր աշխատանքները կենարոնացնում էր Վանում: Այստեղ հոստատւեց նաև Մկրտիչ Փորթուգալիանը, որ հիմնեց իր նշանաւոր վարժապետանոցը: «Միացեալ Ընկերութիւնը» իրեն գործի ասպարէզ ընտրեց Մուշը և Մշոյ գաշտը, որտեղ տեղաւորւեց Սարեանը՝ իր գործակիցների հետ: Մուշը մէջ հիմնեց կենտրոնական Դպրոցը: Ի հարկէ, զպրոցական այս շարժումը նորութիւն չէր, նա ունէր իր նախորդող գործը, որ կապւում էր Ազգային Սահմանադրութեան մշակութային աշխատանքի հետ, սակայն շարժումն այժմ աւելի զիտակից էր ու կազմակերպւած և կապւած՝ քաղաքական ազօտ հեռանկարների հետ: Գործի ասպարէզ են մտնում նոր մարդիկ, որոնք հոգեպէս յեղաշրջւած էին պատերազմի, ազգային ազատագրութեանց անմիջական ազգեցութեան տակ: Այդ նոր մարդիկը ոչ միայն դպրոցի ներսն էին ուսուցանում, այլև և զպրոցից զուրս՝ հասարակութեան մէջ: Նոր գաղափարներ, տրամադրութիւններ են բերում նրանք, ջանալով սենյակների հոգեկան յեղացրումը, ինքնանաշուրեան հասցնել ստրկացած, զլուխ ծռած հային, ազատել նրա միտքն ու զգացումը կապանքներից և ստեղծել անհրաժեշտ նախապայմաններ ընկերային, քաղաքական յեղաշրջման: Հայ գովրոցը կերպարանափոխւում է. փոխւում են դասաւանդութեան առարկաներ՝ մտցնում են մարդանք. հայ լեզուն, հայոց պատմութիւնն ու աշխարհագրութիւնը դառնում են հայութիւնը պատւաստելու լաւագոյն զէնքերը. ուսումն ու դասախարակութիւնը ազգայնանում է: Շատ տեղերում

անզամ զինավարժութիւն էին սովորեցնում, գործածելով փայտէ հրացաններ և այս բոլորը կատարւում էր ժողովրդի աչքերի առաջ: Փոխւում էր և դասաւանդութեան մերողը՝ վանական – սխոլաստիկ եղանակին փոխարինում էր կենդանի խօսքը, փորձը, կեանքը՝ զունեղ և հետաքրքիր: Այս մի յեղաշրջում էր՝ խաղաղ, անաղմուկ և կուլառուրական յեղաշրջում, որ հայութեան հոգեկան կենտրոնացման ուժերի հաւաքման էր նւիրւած: Առանց զրան սննկարելի է հասկանալ հայոց յեղափոխութիւնը: Հայ դպրոցը իր վանական-կրօնական ցրջանից անցնում էր ազգային դաստիարակչական ցրջանը և հայ վանական վարդապետը տեղի էր տալիս աջսարիկ ուսուցչին:

Այսպիսով, 80-ական թւականներին, մշակւեց մեր մէջ հայութեան կառուցման երկու գործելակերպ՝ յեղափոխական – հայաբական և խաղաղ – կուլտուրական: Երկուսի մէջ էլ ընդհանուրն այն էր, որ մեր փրկութիւնը որպէս ազգային հաւաքականութիւն պիտի կառուցւի մեր ուժերով և մեղ համար: Նա պիտի լինի մեր զոհողութեան, մեր մտաւոր և նրւթական կարողութեան արդիւնքը: Հայկական հարցի լուծումը նաևս մեր ուժերի հետ պէտք է զուգակցել, ազամիայն զիււանագիտութեան ապաւինել: Երկու գործելակերպի միաժամանակ մշակւելը զարմանալի չէ. — Դրանք հայ ինքնանաշումի եւ ինքնորուման երկու տարբեր եղանակներն են՝ ուղղւած միեւնոյն նպատակին – հայութեան բաղադրական եւ մշակուրային վերակառուցման:

II

Այս շրջանի լաւագոյն գործիչներից մէկը Մկրտիչ Փորբուզպակեանն է, որի անունը սերտօրէն կապւած է վանի գպրոցական-կրթական գործերի հետ, ապա «Արմենիա»յի միջոցով՝ հայ յեղափոխական մտքի պատմութեան հետ։ Հայոց մտաւորականութեան և հասարակական շարժման մէջ Մ. Փորթուգալեանը յայտնի է որպէս կրթական մշակ. 1877թ. նա գնաց Վան, ուսումնասիրեց ապագայ իր գործունէութեան շրջանը և 1878 թ. վերագրածաւ նոյն տեղը, հիմնեց իր «Վարժապետանոց»ը, որի միջոցով նա տարածեց իր գործարները՝ հասցնելով մէկ նոր սերունդ։ Յեղափոխութարները հասցնելով մէկ նոր սերունդ։ Թիւն բառը նա չարտասանեց, ինչպէս որակում է Ա. Արփիւարը, բայց, «պատրաստեց յեղափոխական սերունդ»։ Ինքն իրեն զգում էր կոչումով ուսուցիչ թէ գպրոցում, թէ գպրոցից դուրս, և այդ ասպարէզից հրաժարւեց ցաւով։ Վանի պահպանողական հոսանքի ջանքերով և թուրք իշխանութեան հրամանով՝ նա մի քանի տարւայ աշխատանքից յետոյ թողնում է Վասպուրականը, հեռանում է Կ. Պոլիս և գպրոցն էլ փակում է։ Կ. Պոլսում, որ նրա համար մի տեսակ «պատւառը» աքսորավայր էր, ի զուր է որոնում արդարութիւն և ի զուր է փորձում Վան վերագառնալու իրաւունք ձեռք բերել։ Համոզւում է, որ թուրքիսյ մէջիր առաջ վակերել։ 1885 թ. անցնում է Ֆրանսիա, դառնում է կամաւոր տարագիր, հաստատում է Մարսէյլում և ձեռնարկում «Արմենիայի» հրատակութեանը։ Արտասահման փոխադրւելը գործակէտ է նրա կեանքի և գործի մէջ. ուսուցիչը դառնում է խմբագիր, կուլտուրական մշակը՝ յեղափոխականի գործիչ, թէպէտ և իր խոսունածքը յեղափոխականի չէր։ Նա ժողովրդական տրիբուն չէր. նրա յեղափոխական գործը քարոզչական էր։ Նորմալ, աղատ պայմանական գործը քարոզչական էր։

մաններում նա կլինէր սերունդների գաստիարակիչ և նրա անունը պատւառոր տեղ կը գրաւէր հայ գպրոցի և մանկավարժութեան պատմութեան մէջ։ Սակայն թուրքը իր յոոի վարչաձեռվ, արգէն մշակւող հականայ քաղաքականութեամբ, նրան մղեց յեղափոխական գործի ասպարէզ։ Այս սահմանում նա հանդիսացաւ յեղափոխական մՏերի եւ հոսանքների նախապատրասով։ Յեղափոխութեան գործին նա մէկ անգամից չփարեց. նրա մէջ յեղափոխականը մշակւեց գանդաղօրէն, ներքին պայքարներից յետոյ։ «Արմենիայի» հրատարակութեան առաջին ամիսներում, նա իրեն և իր գործը չի հակազրում թուրքիային. ընդհակառակն նա Թուրքիայի հետ և ջանում է ուղղել նրա գարշութեան ախտաւոր կողմերը։ Նա սկզբում յեղափոխական չէ թուրքիայի նկատմամբ, այլ բարենորոգիչ։

1885 թ. վանում և շրջագայքում սկսւում է հաւածանք թէ հայերի և թէ հայ հաստատութիւնների զէմ։ Հետապնդում էին մասնաւորապէս երիտասարդները, որոնք աշակերտել էին Մ. Փորթուգալեանին։ Վերջինիս համար այս հալածանքները մեկուսացած մէկ երեսոյթ են, կապ չունեն բնաւ պետութեան ընդհանուր քաղաքականութեան հետ և որ և է ընդհանուր նպատակ չեն հետապնդում։ Այդ գործն է «տեղական կառավարութեան» և հայ «աղաների», պահպանողական հոսանքի, Վերջիններս «գորաւոր դիրքի» տէր են և չեն հանդուրժում այն հոգեսոր շարժման, որ տեղի ունէր նախարար դարի 80-ական թւերին։ Մ. Փորթունէր նախարար դարի 80-ական թւերին։ Արտասահմանի աշխատանքը Վանում առաջ էր բերել գաղագալեանի աշխատանքը Վանում առաջ էր բերել գաղագալեանի աշխատանքը կրօնի, եկեղեցու, ընաանիքի, փարքուրաքի, վարչական սիստեմի շրջանում։ Ակըսավարքուր էր հնի և որի, հայրերի և զաւակների պայքարը։ Նոր սկզբունքների աղղեցութեան տակ կազմակերպում էր և պահպանողական հոսանքը, որի գլուխը

կանգնում է Վանի Առաջնորդը։ Այդ «ազգեցիկ մարշերը» յենւում են Վանի թուրք իշխանութեան վերաց Նրանց միացեալ ջանքերով ուսուցիչը աքսորւում է, դպրոցը փակւում և այժմ էլ հալածանք սկսում նոր հոսանքի՝ երիտասարդութեան դէմ։ Թուրք-աղայական այս հալածանքը նա համարում է պատահական երեւոյթ։ Նրանք «կյաջողին պղտորել Վանի նահանգապետ վաեմ։ Համիտ փաշայի միտքը», որ ըստ Մ. Փորթուգալեանի բնաւ մասնակից չէ այդ խաղերին։ Ընդհակառակն նա մեր հեղինակին՝ Վանից աքսորւելու ժամանակ, յայտնել է իր «համակրանքը»։ «Անմեղ ժողովուրդը» իր բողոքը չի կարող հասցնել «իր սիրած թագաւորին և իր յոյսը դրած սաղբազամին»։ Բարձր իշխանութեան և ժողովրդի մէջ կան «մեծամեծները», պետական պաշտօնէութիւնը, բիւրոկրատիան, որոնք փոխանակ ծառայելու ժողովրդին՝ նրա գլխին պատիճ են դարձել։ Այս բիւրոկրատիան է, որ հազար ու մի ձեռով հարստահարում է ժողովուրդը իր անձնական շահերի համար։ Դրա դէմ է, որ պէտք պայքարել, Բարձր իշխանութիւնը «ժողովրդասէր է ու հայրենասէր»։ Այս տեսակ, հայահալած քաղաքականութեան մէջ մաս չունեն ոչ Սուլթանը, ոչ Եպարքոսը, ոչ էլ նահանգապատեաները և առհասարակ Մ. Փորթուգալեանի համար այդպիսի քաղաքականութիւն գոյութիւն չունի։ Պատասխանաւութեան մեծ բաժինն ընկնում է հայերի վերա, որոնք իրենց շահերի համար, կառավարութեան ստորադաս պաշտօնեաների հետ խսարում են իշխանութիւնը։ Այն ինչ չէր կարող անել ժողովուրդը՝ ձմարտութիւնը յայտնել բարձր իշխանութեան՝ փորձում է անել ինքը Փորթուգալեանը «Արմենիայով»։ Եւ Օսմաննան կայսրին ու պետական զեկավարներին արած իր դիմումների և քննադատութեանց մէջ նա հանդէս է դպրում ոչ միայն որպէս անիրաւուած հայութեան պաշտ-

պան, այլ և որպէս օսմանեան հայրենասէր։ «Օսմանեան տէրութեան շահերին վասակար է, երբ մի անմեղ ժողովուրդ չարաչար կհալածւի և ի զուր»- («Արմենիա»-ի յուշարար-Մարտէլ 1890. Ա. տարեկան 1885 - 1886)։ Հայերը «ամենահաւատարիմ, հանդարտ և օգտակար հպատակներն են Օսմանեան տէրութեան» և հալածանքները կարող են միայն զրդուլ նրան, յուսահատեցնել «այն բարենորոգութիւններէ զորս թուրք կառավարութիւնը մտադիր է հետզհետէ անել աւելի հանգիստ և անդորր մի ապագայ պատրաստելու համար իր ժողովրդին» (Արմենիա»-ի յուշարար. 10)։

Եթէ մեր հեղինակը այսպիսի վստահութիւն ունի թուրք իշխանութեան վերաբերումի մասին զէպի հայերը, ապա պարզ է, թէ ինչ զիրք կարող է ունենալ նա զէպի օսմանեան կայսրութիւնը։ Որպէս հանրային զործիչ, Մ. Փորթուգալեանը իրեն յայտարարում է թուրքիայի շահերին նւիրւած, «հաւատարիմ հպատակ Օսմանեան տէրութեան և նրա ձշմարիտ շահերի պաշտպան» (9)։ Նա զէպի թուրքիան ունի «անյողզողդ սէր»։ Թուրքիան նրա «հայրենիքն» է։ Ինքը պատկանում է «ազգի և տէրութեան օգտին հաւատարմութեամբ և եռանդով աշխատողների» շարքին, ուստի և «սաստիկ կյուզէի» «կյուսահատւի», տեսնելով նրա ընթացքը։ Ներկայացնելով ինքն իրեն թուրք իշխանութեան որպէս հանրային զործիչ՝ նա ասում է «եթէ այս տողերի զորզը մի յանցանք ունեցած է՝ սա է թերեւս, որ իր ազգի և օսմանեան տէրութեան օգտակար լինելու ջերմ եռանդով վառող մի սիրտ ունի. իր այդ յանցանքը կիսուտովանի հրապարակի վերա, և չի գաղարիլ զործելէ զայն քանի որ կենդանի շունչ կայ իր մէջ» (11)։ Այսպիսով Մ. Փորթուգալեանը բանաձեռում է իր հանրային աշխատանքը որպէս Շիւր ազգի եւ օսմ. Տերեւեանց զոյգ շահերին եւիրւած զործ։ Նա հայոց պալիս

գութեան գիտակից անդամէ է, փորձում է նրան յատուկ իրաւունքները պաշտպանել, հալածանքներից աղաս պահել, սակայն և օսմանեան պետութեան հպատակ է, նրա շահերի ջատագով. փորձում է ազգային եւ համապետական նաև նաև միմեանց հետ: Ուզում է, որ կայսրութիւնը բարենորոգեի և ամուր պատւանդանի վերա կանգնի: Իր քննադատութեան նպատակն է՝ վերանորոգել պետութիւնը: Մ. Փորբուզական օսմանեան հաղաքացի է եւ հայոց ազգային հոգեւոր մարմնի անդամ: Այս երկուսը, ըստ նրա, անյարիր գաղափարներ չեն և հետեւանք են օսմանեան կայսրութեան բազմազդեան լինելուն, բաւական է, որ իշխանութիւնը հասկանայ, «թէ օսման. տէրութեան ճշմարիտ շահերին թշնամութիւն», դաւաճանութիւն է մնշել, հալածել անմեղ, աշխատաւոր և հանդարտ ժողովուրդ» (10): Հստ Մ. Փորթուգալեանի հայը իր քաղաքական գոյութիւնը պատկերացնում է միայն օսմանեան կայսրութեան սահմաններում: Նա անջատողական ձգտումներ չունի, ինչպէս շատերը տարածում էին այդ ժամանակ և ոչ էլ ուռական քաղաքականութեան առաջապահն է: «Կհամարձակինք, ըսել մեր այժմեան զիրքի մէջ ոչ մէկ տեղէ ակնկալութիւն չունինք, թէ Վանի մէջ բացարձակապէս ոչինչ չկայ օսման. պետութեան կողմէն այդպիսի խստութիւններ հրաւիրելու արժանի» (7):

Մ. Փորթուգալեանի բանաձեռ հոյ քաղաքականութեան մասին երկարմատ է, որովհետեւ «ազգը» և «տէրութիւնը» բաժանւած են: Պետութիւնն ուրիշինն է, թուրքինը, բայց նրա սահմաններում ազգը մերն է: Քաղաքականապէս բուրք, մշակոյրով հայ: Այս բանաձեռ ժխտում էր զրսի՝ ուստական կամ անդիմական գիմորոշումն: Նա հային պահում էր թրքական պետութեան մէջ և նրանից սպասութիւնը մասին նոր:

Էր մեր հրապարակախօսութեան մէջ: 19-րդ դարի 60-ական թւականներին Ս. Նազարեանը ճիշտ նոյն ողովի էր բանաձեռ ուստահայութեան քաղաքական վարչագիծը, առելով, «ր հայը բաղականապէս ուսւածելում էր Մ. Փորթուգալեանը, որոշելով հայերի յարարերութիւնը օսման կայսրութեան հանգէստ: Մինչև 19-րդ դարի 80-ական թւականների կէսերը մեր հասարակական միտքը ընթանում էր այն ուղղութեամբ, թէ հայը չի կարող իր «քաղաքական անօթը» ունենալ, թէ չի կարող քաղաքականապէս մէկ հայութիւն ստեղծեիլ, և որ գոյութիւն ունին ուրոյն ուսւահայ և թրքահայ հարցեր, ուրնք պիտի լուծին այս երկու մեծ կայսրութեանց սահմաններում: Այս տեսակէտը հետագայում մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի մէջ որպէս Ֆեղերացիալի պահանջ: Առաջինանգ հայոց անկախութեան երացիւց Բաֆֆիի երկերի մէջ, իսկ Հնչակեանները գարձրին այն որպէս ծրագրային պահանջ: Եթէ, — ասում են Ստ. Նազարեանը և Մ. Փորթուգալեանը, — վիճակւած է որ հայութիւնը իր կեանքն անցնի ուսւած և թուրք կայսրութեանց սահմաններում, ապա նրա վարժագիծն էլ ուղղւած պիտի լինի այն բանին, որ երկու պետութիւնների մէջ էլ նա իրաւունք ունենայ իր կուլտուրական հաւաքականութիւնը անաղարտ պահելու: Նախորդ սերունդը երկու տեղումն էլ ձեռք էր բերել որոշ մշակոյրական իրաւական պահանջ: Ապա աղային սահմանադրութեամբ եւ պղոծենիայով, առակայն նոր պայմաններում նրանք անբաւարար էին հայի պատմակուլտուրական զիմագիծը պահելու համար: Մ. Փորթուգալեանը հաւատարիմ քաղաքացի է օսմ. պետութեան, բայց իայն մէկ պայմանով, որ այդ պետութեան սահմաններում աղատ և անկաշկանդ հնարաւութեան մասին նոր:

ըութիւններ ստեղծւին հայի ու հայութեան նպաստող։ Միայն այս պայմաններում գիտակից հայը և օսմ. քաղաքացին միմեանց հետ հաշտ կլինին միւնոյն հոգու մէջ։ Այդ երկուսը պիտի համազրւեն ստեղծելու իրօք Օսմանեան հայրենասիրութիւնը։ Եթէ համապետական կարգերը չեն հանդուրժում հայոց հաւաքականութիւնը՝ ապա անխուսափելի է պայքարը «օսման» քաղաքացու» հոգու մէջ, ինչպէս անխուսափելի դարձաւ «ոռուս» քաղաքացի։ Ստ. Նազարեանի հոգու մէջ։ Նա պիտի կանգնի նոր խնդրի առաջ՝ հայ թէ օսմանցի։ Հայ հաւաքականութեան գաղափարը պիտի յաղթանակի Մ. Փորթուգալեանի մատածողութեան մէջ և իր դիրքն էլ պիտի փոխի «տէրութեան» նկատմամբ։ Օսմանեան հաղահցին պիտի տեղի տայ հայ ազգայնութեան ջատագովին։

Բայց ի՞նչ էր հայն ինքն իր մէջ։ Մ. Փորթուգալեանը ազգութեան բաղադրիչ տարրերի խնդրով չի զրադում, հակում չունի տեսական ընդհանրացումների և պրադումների։ զրա համար, անհրաժեշտ հմտութիւնը չունի։ Երա համար ազգութիւնը կայ, պատմական փաստ է և կանգ է առնում նա այն ազգակների վրա, որոնք նպաստել կարող են հայութեան բարգաւաճման։ Նա բողոքում է Փարիզի «Le Soleil» լրագրի դէմ, ըստ որի «հայը իրեւ ազգութիւն գոյութիւն չունի. այլ իրեւ կրօնական ժողովուրդ»։ Մ. Փորթուգալեանին ցաւ է պատճառում, որ ոչ միայն օտարների, այլ և հայութեան մէջ էլ այդպիսի մտածողներ կան, որոնք մոռանում են թէ «հայը ազգային անուն է և ոչ թէ կրօնական» (62)։

Ազգութեան և կրօնի խնդիրը 19-րդ դարի մեր հարաբերակախօսութեան գլխաւոր հարցերից մէկն էր։ Դրա շուրջն ստեղծում էին հոսանքներ, մզւում էր կատաղի պայքար։ Դարի յառաջազէմ — ազատական մտաւորականութիւնը Ռուսահայութեան մէջ լուծեց

այդ խնդիրը Ստ. Նազարեանի մէկ բանաձեռվ՝ «այլ է կրօնի հանդէսը, այլ է ազգութեան հանդէսը», սակայն թուրքահայութեան մէջ զեռ երկար ժամանակ նրա չուրջը նիդակներ են ճօնաւում։ Այս հարցը հայոց աշխարհիկ, ապա-կրօն ազգութիւն կերտելու հարց էր։ «Կրօնական ժողովուրդ» լինելու տեսակէտը ըստ Մ. Փորթուգալեանի ոչ միայն սխալ է, այլ և վեսսակար։ Նա բաժանում է հային ինքն իր մէջ, մասնաւում հակադիր զաւանանքների և պառակտում նրան ներքին պայքարներով։ Ըստ այսմ էլ կրօնի և գաւանանքի փոխելը գոյնում է նաև ազգութեան ուրացումն։ Մեր հրապարակագիրը ունի պայծառօրէն ապա-կրօն հայութեան գաղափարը, որի հիմքը մշակութային լեզւական է։ Նա զէմ չէ կրօնին, գերագասում է նրա բարոյական սկզբունքները և ցանկանում է, որ «սերմանւեն և արմատ բռնեն մեր ժողովրդի սրտին մէջ» (62), բայց միանգամայն դէմ է, որ նրանք թմրեցնեն քաղաքական առաքենութեան զգացումները։ Ըստ այսմ էլ նա որոշում է եկեղեցու եւ ազգութեան յարաբերութիւնը։ Եկեղեցին ազգային մարմնի մէջ եղող հաստատութիւններից մէկն է, հետեւապէս ստեղծւած է նրա կարիքների համար։ Այդպէս էլ եկեղեցականները, ուրոնց պարտականութիւնն է առաջնորդել ժողովրդին ձշմարիտ կրօնի սկզբունքով։ «Եկեղեցականները ազգին համար եղած են և ոչ թէ ազգը եկեղեցականներուն» (106)։ Այս տեսակէտից նա շատ խիստ գնահարուն։ Այս տեսակէտից նա շատ խիստ գնահարուն։ Այս տալիս թուրքահայ եկեղեցականներին, որոնք կրօնի սկզբունքը մոռացած, գործակցում են թուրքիշանութեան հետ և հալածում հայութեան մէջ գործող ուժերին։ Հոգևորականութիւնը, ըստ իր հաստարական դիրքի և իրաւասութեան, կոչւած է լինելու ժողովուրդի զեկավարը, սակայն նրանք թէ որպէս կրօնաւորներ և թէ որպէս հաստարակական գործիչներ

անպէտք են ու վաճնգաւոր: «Առքա իրը թէ կրօնասէր են, բայց չեն սոսկար, չեն քսամնիր կրօնի սրբութիւնը զոհ տալ կրօնականի ողծութեան: Նոցա համար Յուդան ալ պէտք է, որ շատ յարգելի, շատ պատկառելի լինի, որովհետեւ նա ալ եկեղեցական պաշտօնեայ էր և մինչեւ անգամ Քրիստոսի ձեռնազրած մի պաշտօնեայ» (106): Հայ հոգեորականութիւնը հականայ գործի գլուխ է անցել Վանում, նոր սերունդի հալածողների գլուխն են անցել «մի եպիսկոպոս*): և մի թուրքի փաշական և քաղաքական ազրուկներ, որոնք խեղած հայ ժողովրդի արիւնը անխնայ ծծելէ յետոյ գետինը կթափեն այժմ» (105): Ահա ինչու Մ. Փորթուգալեանը հայ ընկերային կեանքում ոչ մէկ գրական գործ չի վերագրում հայ հոգեորականութեան և մեր հասարակական շարժումների մէջ ոչ մի տեղ չի տալիս նրան: Հայութիւնը պիտի կազմակերպէի, պիտի անցնի քաղաքական պայքարի, բայց այդ պիտի լինի առանց հոգեորականութեան: Եթէ չկայ այդ դասը, որ խոշոր գործ է կատարեր մեր անցեալում, անգամ շատ մօտիկ անցեալում («Ներսէս վախճանւած և իրեններ հալածւած ու ցրւած...»), ապա հայութեան կառուցման գործը կատարելու է անկախ նրանից և ընդէմ նրա: Ազգահաւաքման գործին չի կարող նպաստել և «հայ հարուսը». «Նրանք սպասողական գիրքի մէջ են միայն և պատրաստ ճօւշ կինտոեն ուտելու համար»: Կ. Պոլսի ազգային քաղաքական վարչութիւնը ոչինչ չի անում գաւառի հայութեան համար, նրա գլուխը կանգնած է «մի հայ էֆէնդի, որի բոլոր քաղաքագիւտութիւնն է խոնարիւ և հարթանալ իրմէ բարձր գիրք ունեցողներին առջև և ծանրանալ ու բոնանալ իրմէ տկարների վերայ» (108): Կ. Պոլսի «աղայական» դասը

*) Պոլս Եպիսկոպոս

անտարբեր է դէպի հայութեան գործերը՝ «ազգը» նրա համար գիրք, հարստութիւն և պատիւ ունենալու համար է: Գաւառի աղաները գէմ են ամէն շարժման և գործակից թուրք պաշտօնէութեան: Նոքա ևս սիրտ չեն մաշեցնում հայութեան գործի համար. նոքա ևս ոչ իրենց գրամով, ոչ իրենց փորձով գաւառի հայութեան հետ չեն: Հայ հարուսի հետ էլ անկարելի է կապել հայոց մշակութեային և քաղաքական վերածնութիւնը: Այդ բանը պիտի լինի հայութեան խոնարին խաւերի, բուն ծողովրդի գործը. նրա միջոցով և նրա համար պիտի կառուցւի «նոր ազգութիւնը»: «այդ տիսուր վեճակի մէջ, Քեզ կը մնայ, ով հայ ժողովուրդ, համախըմբել քու մէջ գտնուած ուժերը, հաղորդակցութեան միջոցներ ստեղծել շրջահայեաց խոհեմութեամբ, չընկըրկիլ գիւարութիւնների առջև և միութեամբ զօրանալով ցոյց տալ մի օր թէ հայ ժողովուրդը քունի մէջ է և ոչ թէ մեռած, թէ մի կենդանի ազդի իրաւունքները վերջապէս յաղթող գուրս կուզան նոյնիսկ սինների դէմ մինչեւ անգամ, երբ իւր զիսաւորները ծախւած և ձեռք առնւած ալ լինեն» (108): Այս ձեռք Մ. Փորթուգալեանը իր ուսմունքին տւեց վերին աստիճանի ժողովրդական-դեմոկրատիկ բնոյթ՝ հայութեան քաղաքական և մշակութային աշխատանքի մէջ բացառիկ գեր վերագրելով միայն «ժողովրդին», նրա խոնարին խաւերին, գաւառին: Այս տեսակէտը իւրացրին և հետագայ հասարակական գործիչներն ու քաղաքական հոսանքները:

Հայութիւնը պիտի կառուցւի և պահւի հայ լեզւի վերա. լեզւի պահպանումն առաջին և զլխաւոր պահանջն է ուրոյն ազգութեան, որովհետեւ վերջինս արդէն լեզւական միութիւն է: Այս տեսակէտից Մ. Փորթուգալեանը բողոքում է հայ լեզւի անդիտացման դէմ: Կ. Պոլսի Արտմեան «ՀԱՅ» գպրոցում հանդէսներին

բոլոր երգերը օտար լեզով են երգւում։ Հայ երգն ու լեզուն տեղ չունին հայ դպրոցում։ Նա արդարօրէն վշտանում է այդ բանից։ «Տէր Աստուած, ինչ է պատահեր ձեղ, Գատը—Գիւղացիներ, որ ձեր մայրենի հայերէն լեզուն թողած, ֆրանսերէն, թուրքերէն և այլ օտար լեզուներով միայն կուգէք երգեն ձեր գաւակները հայ դպրոցի մէջ և մի հայկական հանդիսի մէջ» (21-22)։

Հայ հաւաքականութեան ստեղծելուն նպաստել կարող են մեր անցեալի խոշոր պատմական դէպերը, որոնց յիշատակը պահուում է ազգային տօների մէջ։ Նրանք մէկ ազգի գաղափարների, հաւաքական կամքի և գործի ապրումներն են և յաւերժացման ձերը, որոնք կապում են այսօրը երէկի հետ, ստեղծում հասարակական ժառանգութիւնը։ Ուստի նրանք կարող են լինել ազգային գիտակցութեան ստեղծիչ ազգակներ։ «Ամէն ազգեր, ամէն հանրավարական ժողովու ըդներ, որոնք ազգասիրական և հայրենասիրական զգացումներին, քաղաքացիական առաքինութիւններին մեծ արժէք կը տան ազգային կամ թէ ասենք քաղաքական տօներ հաստատած են, որոնք մեծ հանդէսներով կտօնէ թէ ժողովուրդը և թէ իրենց կառավարութիւնները» (63)։ Նորագոյն պատմութեան մեծազոյն տօներից մէկը յուլիս 14-ն է, Ֆրանսիայի «ազգային տօնը»։ Բայց այդ մէկ խորհրդանիշ է ազատութեան գաղափարի և նրա յաղթանակի, ուստի և նրա արմէքը միայն ֆըրանսական, ազգային չէ, «այլ հանրազգային, զի ժողովրդական վեհապետութեան հրատարակութիւնն էր այն՝ բառութեան դէմ, ազատութեան, հաւատարութեան և եղբայրութեան յաղթանակն էր այն՝ բոնաւորների դէմ, երեք վսեմ սկզբունքներ զորս ամէն ձշմարիտ մարդ կպաշտէ ինչ ազգի ալ որ պատկանի» — (101)։ Յեղափոխութեան յայտարարած սկզբունքներով էլ նա

պայքար է մղում թուրքական բոնութեան դէմ՝ ազգային հաւասարութիւնը և ազատութիւնը իրականացնելու. այս տեսակէտից՝ իր աշխարհայեցողութեամբ նա ազատական է, որ մեր պայմաններում ստանում է ազգային-ազատական գունաւորում։ Եթէ ֆրանսացին ունի իր յուլիսի 14-ը, ապա հայն էլ իր անցեալում դէպքեր, փաստեր ունի, որոնք արժանի են յիշատակութեան և կարող են սրմատացնել մեր մէջ ազգային հաւաքականութեան զգացումը։ Վարդանանց պատերազմը մեր պատմութեան ամենէն հետաքրքիր փաստերից մէկն է իր առաջազրած սկզբունքներով — նա «անձնազոն ազգասիրութեան և կրօնասիրութեան» փաստ է, խըտացրել է իր մէջ «Խզմի ազգատութեան» և «քաղաքական ինքնավարութեան զոյգ պահանջները»։ Նա մեր պատմութեան այն եղակի փաստն է, որին «կպարտինք այսօր մեր քրիստոնեայ և միանգամայն հայ լինելը և առանձին հայրենիք ունենալը» (64)։ Մեր հեղինակի տեսակէտով վարդան Մամիկոնեանը և նրա «յաջորդ» վահան Մամիկոնեանը «ջանացել են դաշնադրութեամբ ապահովել խզմի ազատութիւնը»։ Նոյն պահանջն է անում հայն այժմ էլ «Օսմանեան զոնէն» — հայը չպիտի հալածւի իր կրօնի, զաւանանքի համար։ Խզմի ազատութիւնը այն ամբողջական ազատութեանց մէկ մասն է, որ յայտարարւեց ֆրանսական յեղափոխութեան ժամանակ որպէս «մարդու և քաղաքացու իրաւունք»։ Վարդանանց պատերազմը որպէս ազատ զաւանանքի և ազատ քաղաքական պահանջի խորհրդանշան պիտի տօնւի «ոչ միայն եկեղեցու մէջ, իբրև կրօնական տօն, այլև եկեղեցիներէ զուրս՝ իբրև աղկրօնական մեծ տօն և այդ օրը հանդիսաւոր գային-քաղաքական մեծ տօն և այդ օրը հանդիսաւոր կերպով պիտի յիշեցնել ժողովրդին իրեն մայր հայրենիքի անցեալն ու ներկան և ողերել ու վառ պահել իբրենց մէջ հայ հայրենիքի և ազգութեան սէրը» (65)։

Ոչ միայն այդքան, այդ տօնի յիշատակութիւնը պիտի դառնայ հայութեան տարբեր գտւանութեանց միւս թեան միջոց։ «Խղճի ազատութեամբ» ընտրած դաւանութեանց հետևողները միւնոյն հայրենիքի և ազգային հաւաքականութեան անդամներն են, ուստի նրանք պիտի տօնեն այն «իբր ազգային քաղաքական հանդէս մեր բոլոր հայ ազգակիցների մասնակցութեամբ առանց խտրութիւն անելու նոցա մէջ կրօնական բաժանումներին պատճառով» (65)։

Լեզւի պահպանումն, ազգային անցեալ դէպքերի հրապարակային տօնումն հոգեւոր միջոցներ են հայութիւնը ստեղծելու և պահելու։ Սակայն դրանք քիչ են։ հաւաքական հայութիւնը պիտի ունենայ նիւրական նիմֆեր։ Առանց վերջինի հոգեւոր հայութեան գոյութիւնը ամուր պատւանդան չի ունենայ։ Նիւթականի հարցը կապւում է հայ հայրենիքի և նրա մէջ թագուած տնտեսական հարստութեան ու նրա շահագործման հետ։ Հայ հայրենիքը պիտի հաց տայ իր զաւակներին։ Սակայն հայը իր աշխատանքով և արտադրութեան ձեւերով շատ յետ է մնացած, ուստի և ժողովուրդը մատնւած է աղքատութեան և գաղթի։ Մ. Փորթուգալեանը ցաւ է յայտնում, որ հայ զիւղի և քաղաքի տնտեսական պատկերը երեսն չի գալիս մեր լրագրութեան մէջ։ մենք չգիտենք «Արմենիա»-ի տնտեսական աշխարհագրութիւնը և ընդհանրապէս չենք ճանաչում մեր հայրենիքը։ Մեր գաստիարակութիւնն էլ սխալ է տարւած՝ հետաքրքրուում ենք եւրոպական ազգերի պատմութեամբ, անահեսական ու քաղաքական զարգացման ձեւերով, բայց մերը, ազգայինը՝ չգիտենք։ «Պէտք է նախ մենք մանաշենք»։ «Հայ լրագրութիւնը շատ անգամ այդ գերը կատարելու նըսպատակին չի ծառայած։ Նա աշխատած է ընդհանրապէս Եւրոպայի քաղաքական գործերին և զէպքերին

թական հիմքերի վրա կառուցւած հայութիւնը կլինի ընդունակ «հոգեոր հարստութիւն» ստեղծելու և ազգ դառնալու: Այլապէս «անօթի փորով գիրք չի կարդացուիր»:

Թուրքահայութեան քայլայւած տնտեսութեան և նրա պատճառների վերայ կանգ են առել մեր հրապարակիրներից շատերը: Մ. Նալբանդեանն առաջինն էր, որ յատուկ ուսումնասիրութեան նիւթ դարձրեց այն իր «Երկրագործութիւնը որպէս ուղիղ նանապարհ» գրւածքի մէջ: Շեշտաւած Ֆիզիոկրատ տեսակէտներ ունենալով, ժողովրդական տնտեսութեան հիմքը հողի վերա պատւաստելով՝ նա ջանում էր ստեղծել ազգային վանառականութիւն եւ արդիւնաբերութիւն: Հայը պիտի դուրս գայ իր փակ տնտեսութեան շրջանակից և մանի համաշխարհային տնտեսութեան ջրապայտի մէջ, բայց որպէս նրա բաղադրիչ մասը՝ իր երկրի հարստութեանց շահագործումով, մշակումով և օտար երկրներ արտահանելով: Հայ վաճառականը և արդիւնաբերողը հայ մարդկանց միջոցով, հայ երկրի հում նիւթերը պիտի մշակեն, հարստանան իրենք և հարստացնեն գիւղացի և աշխատաւոր հայութեանը: Թէ Նալբանդեանը, թէ Մ. Փորթուգալեանը տնտեսական աւելի կատարեալ ձև քարոզեցին հայութեան՝ կապելով այն մեր ազգային դոյլութեան հետ, սակայն երկուսն էլ ի նկատի չունեցան հարցի քաղաքական կողմը: Չենք ուզում ասել. թէ Մ. Նալբանդեանը՝ ապա — քաղաքական մտածող էր. ոչ, բայց թուրքահայութեան հարցի լուծումը նրա համար տնտեսական խնդիր դարձաւ, առանց կապւելու քաղաքական պահանջների հետ:



III

Հնարաւո՞ր էր հայ և թուրք ժողովուրդների խաղ կենակցութիւնը Օսմանեան կայսրութեան շրջանակում, մէկ կենակցութիւն, որ երաշխաւորէր հայի ազգային - կուլտուրական անկաշկանդ դարձացումը և կայսրութեան ամբողջականութիւնը: Մ. Փորթուգալեանը չուտով հիսամափակում է թուրք գեկավար շրջաններից. այդ իշխանութիւնը ջանք գործ չի դնում ստեղծելու երկու ազգերի գործակցութիւնը իրաւահաւասարութեան սահմաններում: 80-ական թւերի կէսերին արդէն պարզ էր, որ թուրք գեկավար շրջանները մտադիր չեն իրականացնելու ծրագրւած բարենորոգումները և կեանքի ու գոյքի տարրական ապահովութիւն ստեղծելու հայկական նահանգներում: Իսկ եւրոպական դիւանագիտութիւնը չկարողացաւ ընդհանուր ճակատ ստեղծելու թուրքիայի դէմ 61-րդ յօդւածը գործադրելու համար: Հոգեբանական ու քաղաքական այս մըթնուրաւում էլ ծնունդ առած հայ յեղափոխական միտքը, նոլորաւում տիրող մտածողութեան թուրք ազգի և պեմանակի տիրող մտածողութեան թուրք ազգի և պեմանական բէակցիան էր այդ կեցութեան: Ըստ ժամանակակի ժամանակակի միջոցութիւնների միջամտութիւնից իր ներքին մեծ պետութիւնների միջամտութիւնից իր ներքին գործերի մէջ, կամ անյաջողութեան են մատնւել, ու գործերի մէջ, կամ անյաջողութեան չստեղծեց հասարակարովինետև թուրք պատմութիւնը չստեղծեց հասարակարովինետև թուրք պատմութիւնը լիներ և նրանց կարիքը զգար: Ուստի և բեֆորմները, արմատ չգեցին կեանքի մէջ, չյեղաշրջեցին ընկերային կան այն դասերը, որ բարենորոգումների յինարանը լիներ և նրանց կարիքը զգար: Ուստի և բեֆորմները, արմատ չգեցին կեանքի մէջ, չյեղաշրջեցին ընկերային տեղաքական յարաբերութիւնները: Հպատակ քրիստոնեական պահանջների մէջ, ընդհակառակը, զարգացաւ այն տոնեայ ազգերի մէջ,

շոմտնամթ վրտովմաւսաց : զավթիւստղե զտկավոռ մէ յրառ
ստե տղ : ճճը վժար զտկավթառուց դ զտզթիւստառ
տմղ մէ պրակիղը կիր նմղ : Շմժրից զտզթիւսն զտկամթ
տեսում տմղ զտչմրան մմդզեզտչող զտկակիրոց զտզլիղմ
ու դ զտփող-մմռափ . կտա վեզտաթի անվր նտօք մովլսւթ
. կ ժմդղմտ վիոհե նդրեր մոյավթամոնտի ժմմասաց : ովիտո
ւոլոյենէ զրակվթատի ովակու զդմանես զվեղոսմ ու
նվագը նբանես զտկանըլիրոյ իրովմտաս զտկա սման
նմգենետ զտպակիրում ար յրամարտարոդտ նգիմկզը կտա
վմդպարումա զտկաավեազտարուկն դ զտկարենս զտփմ
ամասաց : Ավմզգդոկիրութ նբղ : վմդզեզտչոց զտպարումտ
դ զտզլիղմտ զտզթիւստղե մէ զտկան ևտուի մովլսւթ
. կ մդոկամիմզկզ զտզլիղմը մմդզզոկիրոց մէ լունչմտն
մժթչտստ զտզթիւստկամթունտմ մէ մոյավթամոնտի զտկ
ամժմթ մմդնջիր վմդզզոկիրութ զտկա-0Հ զնովլ : մովրան
ուն նմսմիմդ զտպարմուն զտկաավտունիր նոց կ յրարենէ
դ կ ցոկյանուայ զմժօնկտետունդ շմժնով զտկամթը
- նոց ունու մովրան ովիտստ զտպարմուն զտկաավտունիր
նոց կ յրարենէ դ կ նմանց ցոկյանուայ ոհին
շումուտովիւն նմանուց զտկան զուզ յրամզետուաց
ուն մղկատատնու զտկամթունտմ քաւաւնդ մմդզզոկամթուց
նվագըմդի : թ զտկա-0Հ ունմէ ոչ քաւասնեւս մմ
շուցրաբմուն զտկակիրոց զմժնզզոկիրութ զտկա-0Հ վմտն
նմսմիմդ իսստատե նբղ : նվութ նինաց մէ մէ յրաւի
մմմե նմոց ուուն լուզուամտ մէ յրաքնատու յրամզետուց
ատու զտզլիղմտ նվագըմդ մոյավթիւստուկն ժմմասաց : զմժուի
մմդզզոկամթուց նէ նման չովլ : տոց վիովնուացու մաս
զտկամթունտմ վմդզմիւսկիրութի զտպատագն զտկամթմասը
զ յրաւնուի ու յշ քաւանմզկտունէ կուլմութ ուն մէ յրաւի
ատու զտզլիղմտ նվագը նվիսնսրաչուցի վմզլմութ ուն յրաւնութ
ատու զտկակատա ուաս մմդզզոկամթուց զտկակիրուշ :

(99) « ճճը վմդզմիւսկիրութ զտկարումտ մովլ ունգոնքար
պրավթիւնմիկմտմ վցուն ժավր ուուզ ուղ , նուտիկուոց
ժուուի մկերան ուոուզ ուղ մս ոհինմտ կ տու ովնսի զտկ
ատուաչուար ոհիցյուտ զտզթիւստիւստի ժմմասաց » : վլզմ
- ատի վէ նկուի տոց վմտվմտասաց մտավու զտզթիւստոց մս
« կ յրաւնսրաց իստաւն էկ ուու չովնզտատունդ : « մլվրուն
առումտունոց » , մէ զտովթիւսնիսքն զտզթիւստամուց
մզգ մզր տունզու զտպատուն տոց վմտվմտասաց մոր կ յրաւ
- լունմու ովմմասաց ըժարու վ-« տպովզոմդ » իստաւԶ

(99) « ճճը վմդզմիւսկիրութ զտկարումտ մովլ ունգոնքար
պրավթիւնմիկմտմ վցուն ժավր ուուզ ուղ , նուտիկուոց
ժուուի մկերան ուոուզ ուղ մս ոհինմտ կ տու ովնսի զտկ
ատուաչուար ոհիցյուտ զտզթիւստիւստի ժմմասաց » : վլզմ
- ատի վէ նկուի տոց վմտվմտասաց մտավու զտզթիւստոց մս
« կ յրաւնսրաց իստաւն էկ ուու չովնզտատունդ : « մլվրուն
առումտունոց » , մէ զտովթիւսնիսքն զտզթիւստամուց
մզգ մզր տունզու զտպատուն տոց վմտվմտասաց մոր կ յրաւ
- լունմու ովմմասաց ըժարու վ-« տպովզոմդ » իստաւԶ

կան այս կացութիւնը նոր երազներ է սնուցանում
Ռուսաստանի թուրք-թաթարական ժողովուրդների մէջ,
ըստ որոնց, դէպի Ասիա դարձող Թուրքիան կարող է
և պէտք է կանգնէր թուրանական շարժման գլուխը:
Եթէ բարկանեան ազգերը անջատւեցին, եթէ թուր-
քիան ընկրկեց քրիստոնեայ ազգերի առաջ, դրա փո-
խարէն կան արևելքում թուրանական ժողովուրդների
հակայ գանգուածները, որոնք կարող են հաւաքւել
ուժեղ և կազմակերպւած պետութեան շուրջը: Թուր-
քիան իր գոյութեան հմաքը պիտի որոնի Փոքր Ասիա-
յում և իր պատմական առաքելութիւնը պիտի համարի
թուրք-թաթարական ժողովուրդներին ազգային գի-
տակցութեան բերելը և քաղաքական պայքարին մղելը:
Պանչակամը մասամբ յաղթեց բալկաններում. պան-
քուրանիզմը պիտի յաղթի Ասիայում: Այս մէկ փոխ-
վրէժ էր Ռուսաստանի դէմ: Սակայն կայսրութեան
արեւելքում նա հանդիպում էր հայուրեան, որին Բեր-
լինի գաշնագիրը դարձնում էր իրաւատէր իր հայրե-
նիքի վրա, որի ազգային գիտակցութիւնը մշակում
էր թէ հրապարակախօսութեան, գրականութեան և թէ
այն բազմաթիւ ընդհարումների մէջ, որ սկսւած էր
նախորդ դարի 30-ական թւականներին քրդերի, չէր-
քեղների և թուրքերի դէմ: Բերլինի գաշնագրից յետոյ
հայ-թրքական յարաբերութիւնը աւելի ձգւած և սուր-
բնոյթ է ստանում. կար և ոռւսական վտանգը, որ
կախւած էր Թուրքիայի վլխին՝ հայկական բարենորո-
գումների պատրւակով: Այս ամէնը մզում է թուրք
վարիչներին հետեղականօրէն գործադրել քաղաքական
մէկ ծրագիր, որի էութիւնն էր բնաջինջ անել հայե-
րին, կամ առնուազն թուրացնել թւական տեսակէտից
և հասցնել այնպիսի մի վիճակի, որ այլևս բարենորո-
գումների խօսք չլինի: Եթէ 80-ական թ. կէսերին Մ.
Փորթուգալեանը հայ - թրքական համաձայնութիւնը

կարելի էր համարում, երկուսին էլ իրաւատէր հոչա-
կելով, թուրք զեկավար շրջանները, հայ-թրքական
շահերը համարում էին հակադիր, չէին ուզում հաշտուել
այն մտքի հետ, թէ իրենց պետութեան արեւելքում
կարող է գոյութիւն ունենալ ազգային հարց: Երեսոյթ-
ների, փաստերի նման կապակցութեան մէջ, Մ. Փոր-
թուգալեանի համար, նոր իմաստ են ստանում վանում
և ընդհանրապէս Հայաստանում կատարող դէպքերը:
«Սա մի պատահար կամ բացառութիւն չէ Համբաւ փա-
շայի կողմէն, այլ Բարձր. Դրան կողմէն կարգադրւած
ծրագիր, թուրք կառավարութեան կողմէն յատուկ
նպատակով ընդունւած մի գրութիւն է՝ պառակտել
Արմենիայի հայ ժողովուրդը հայ անուն կրող Վասակ-
ների միջոցով և անդադար անհանգիստ անել զայն»
(115): Թուրք իշխանութիւնը, իր հայահալած գործի
մէջ, ըստ Փորթուգալեանի, իր հետ ունի հայ հողեռ-
բականին, որ խաղալիք է տիրողի ձեռքին, և հայ
«աղային», որ իր անձի, հանգստի և նիւթի մասին է
միայն մտածում: Բարձր Դուռը իր պաշտօնէութեան
միջոցով «կաշխատի անդադար խռովութիւններ սեր-
մանել հայ ժողովրդի մէջ, պառակտել զանոնք, իրարու-
հետ կուեցնելով անհանգիստ անել և սպառել նրա ու-
ժերը» (113): Եւ զրա հետեւանքով Հայաստանում ըս-
տեղծւել է «քաղաքական ստրկութիւն, ապահովութեան
բացակայութիւն, տնտեսական անստոյդ և միշտ աղե-
տաբեր վիճակ»: Արդ, ի՞նչ է այս բոլորի նպատակը
և ի՞նչ «ծրագիր» է հնտապնդում թուրքիան: Մ. Փոր-
թուգալեանի համար այլևս գաղտնիք չէ թրքական
քաղաքականութեան իմաստը: Նա օսմաննեան պետու-
թեան զեկավարների անունից այսպէս է մեկնաբանում
Հայաստանում ստեղծւած գրութիւնը՝ «Մենք չենք
կարող լսել այդ տեսակ ձմարտութեան ձայնը: Մենք
թուրք կառավարութեան համար իբրև վճռւած դրու-

թիւն ընդունած ենք ձնչել և հարստահարել հայաղգը, որ հետզհետէ բոլորովին վերանայ աշխարհի երեսից: Զէք տեսներ, որ քանի տարիներ առաջ 5 միլիոն հոչակւած հայը Յ միլիոնի իջած է այժմ, նրա մէկ միլիոնէ աւելին ալ Ռուսիայի մէջ է. իսկ Թուրքիայի մէջ հազիւ 2 միլիոն կը գտնուի այժմ: Դուք մեր այսափ ջանքերի և զոհողութիւնների դէմ ինչպէս կյանդընէք պաշտպանել հայ ազգի գոյութեան իրաւունքը»: (35):

Այս եղբակացութեան հասնելով թուրք զեկավարների հայաջինջ քաղաքականութեան մասին, բնական է, որ մեր հրապարակագիրը վերաքննէր իր նախորդ օսմանեան քաղաքացու» բանաձեռ: «Օսմանեան քաղաքացի» և հայ հոգեոր միութեան՝ ազգութեան անդամ լինելու բանաձեռ այժմ պարունակում էր ներքին հակասութիւն: Այդ երկուսը միացնելանկարելի էր. թուրք աւանդութիւնը, պատմութիւնը շատ աւելի ուժեղ են՝ որ կարելի լինի նրա հետ վերանորոգութեան երազներ կապել: Հայի և թուրքի շահերը հակադիր են. թուրքը չի ուղում ճանաչել հայի ապրելու իրաւունքը, գիտակցաբար նպաստում է հայկական նահանգների անիշխանութեան, նա մերժում է մեր ազգային հաւաքական իրաւունքները, բարենորոգումները ձգձգում է և որոշել է երբեք չմտցնել —ու բնական է, որ Մ. Փորթուգալեանը հասնելով իր նախորդ բանաձեռի ներքին հակասութեան գիտակցութեանը, ընտրէր միայն հայկական շահերի պաշտպանութեան ուղին և դառնար հայ ժաղաքականութեան հետապնդող մարդ: Այժմ նրա համար թուրքը «հայութեան թշնամին է», իսկ իր պարտքն է «պաշտպանել հայ ազգի գոյութեան իրաւունքը»: Այլևս անիմաստ խօսք է հայ - թրքական գործակցութիւնը. նա չի ճանաչում մեր ապրելու և ստեղծելու իրաւունքը, ուստի և հայութեան անելիքը ուղղաւած

պիտի լինի թնդիմ բուրքի: Զկայ այլևս միացնող կամուրջ հայի և թուրքի մէջ, հետևապէս հայկական հարցի լուծման համար այլ մեթոդներ պիտի որոնել:

Արդ, ի՞նչ պէտք է անել: Այդ հարցը ոչ միայն Մ. Փորթուգալեանն էր գնում իր առաջ, այլև և ժամանակի լաւագոյն մտածողները թէ Ռուսահայաստանում (Բաֆֆի, Գամառ - Քաթլապ), թէ Թուրքահայաստանում Խրիմեան) և թէ արտասահմանում: Բոլորի համար մի բան պարզ էր. — միայն Թուրքիայի հետ կապել և նրանից սպասել մեր հարցի լուծումը՝ անկարելի է. ուրիշ միջոցներ են հարկաւոր. «Ժամանակը սկսեր է փոխւել և ձայներ կը հասնեն մեզ զանազան կողմերէ, անցած օր Լոնդոնէն, այսօր Ֆիլադելֆիայէն, թէ Եղբայրներ հերիք խօսեցանք ու գրեցինք, եկէք ձեռք-ձեռքի տանք և սկսինք նաև գործել» (66): Այս միաքը թէ խօսքը գործ պիտի դառնայ, հասունանում է և երկրում: Վանից գրած մէկ թղթակցութիւն «Արմենիա»-ի համար կրում էր «Ազգային պատպանութիւն» մակագիրը: Այդ յօդւածը այսպէս է որոշում հայութեան անելիքը. — «Հայի համար ազգային պաշտպանութեան միակ փրկարար միջոցը զէնքն է այժմ»: Լոնդոնէն մէկ սրացաւ հայ, խորհրդածելով հայութեան կացութեան մասին, ելք է որոնում ստեղծւած գրութիւնից: Ըստ նորա «ոռու-թրքական պատերազմից ի վեր» հայի վիճակը ծայր տատիճան վատացելէ, որից ազատւելու համար «չէ թէ միայն յեղափոխութեան կամ ապատամբութեան, այլ ամէն բան ընել կուզենք մեր վրայէն նետելու համար այս անտանելի լուծը» (5): Արտասահմանեան հայութիւնը պատերազմից յետոյ սպասում էր, որ Թուրքիան իրականացնէ իր յանձն առած բարենորոգումները, սակայն ի զուր տարիներն անցնում են և այդ ուղղութեամբ ոչինչ չի արւում: Հայութեան տրամադրութիւններն ել զէպի

Թուրքիան փոխւում են. «Եւրոպաէն, Ասիաէն, Ափ-
րիկէն, Ամերիկաէն՝ հայրենաբնակ և գաղթական հա-
յերէն գրութիւններ եկան խմբագրութեանս՝ թէ մեր
ազգային դատը պաշտպանելու համար պէտք է քաղա-
քական յեղափոխութիւն յարուցանել Արմենիաի մէջ»
(74): Իր ժամանակին այս է եղել «ընդհանուրին մէջ
տիրող զգացումը և բազմանքը»: Մ. Փորթուգալեանի
համար այս ամէնը նշան է, որ համահայկական տրա-
մադրութիւն և մտայնութիւն է ստեղծւում հայկական
հարցի շուրջը: Նշանակում է «զիրն ու խօսքը իրենց
հետևանքն ունեցած են», ստեղծել են հաւաքական
միտք և կամք: Բատ մեր հեղինակի, խօսքը «գործ»
դարձնելու պարտականութիւնը ընկնում է արտասահ-
մանի հայերի վերա, որոնք աւելի ապահով պայման-
ների մէջ են գտնւում, ազատօրէն միանալու, ժողո-
վելու, խորհելու և գործելու հնարաւորութիւններն
ունին: Նրանք «շատ աւելի մեղապարտ» կլինեն, եթէ
այդ գործի գլուխը չանցնեն: Պէտք է «Եւրոպաի և
Ամերիկայի մէջ և այլ ուրեք սփուած հայերը միանան,
ձեռք ձեռքի տան, համատարած մի զօրաւոր ընկերու-
թիւն կազմակերպեն այս նպատակի համար, ազատ մի
տեղ իրենց կենտրոնն անեն և սկսեն այնպիսի զօրա-
ւոր միջոցներով գործել, որ կամայ ակամայ աշխարհի
ուշադրութիւնը հրաւիրեն իրենց արդար դատի շուրջը
(68): Այս ձեռվ ոչ միայն արտաստհմանի, այլև Ռու-
սաստանի հայութիւնը պիտի դառնայ օժանդակ բանակ,
թե ու թիկունք Թուրքահայաստանի ազատագրութեան
համար. նա պիտի տայ իր զրամը, անձը և զոհի ամէն
բան: Այսպէս էր պատկերացնում «թիկունքի և ճա-
կատի» կապը նաև Շաֆին և այդպէս ըմբռնեցին հե-
տագայում հայ յեղափոխութեան բոլոր հոսանքները
բուն «Երկրի» և նրանից զուրս գտնւող հայութեան
յարաբերութիւնը:

Մ. Փորթուգալեանը թելազրումէ հայութեան շուտ
գործի անցնել. մէկ անգամ «պատեհ ժամը կորսնցու-
ցինք» — բայց յետոյ էլ «չպատրաստեցինք»: «Եթէ
դարձեալ թուլանանք, չկազմակերպւենք, չպատրաս-
տւենք ազգայի համար, միշտ պիտի կորսնցնենք
այսպէս պատեհ ժամերը անդարձ կերպով» (69): «Գործի
ժամը հնչած է»: Մեր հրապարակազիրը հարց է դնում
«ի՞նչպէս պէտքէ կազմակերպւինք մենք աղատ երկիր-
ների մէջ բնակւող հայերս»: Այս հարցին պատասխա-
նելուց առաջ նա մէկ խորհրդածութիւն է անում Թուր-
քիայի իշխանութեան աակ ապրող ժողովուրդների ա-
զատագրութեան փորձի և մեթոդների նկատմամբ, որ
անշուշտ միայն ակագեմիկ վերլուծութեան խնդիր չէր,
այլ արդէն գործադրուած և որոշ արդիւնքներ տւած
միջոցների ընդօրինակումն: Բատ նրա, «պատմութեան
մէջ տեսնւած բան չէ բնաւ, և հայերն էլ չեն կարող
մի միակ բացառութիւն կազմել ընդհանուր ազգերի
մէջ, որ իրենց ինքնավարութիւն տրւի առանց արիւն
թափելու, առանց որ և է ծանր զոհաբերութեան՝
թուղթի կտորների տակ ստորագրութիւններ շարելով
և այս կամ այն տէրութեան իրաւունքն ու գթու-
թիւնը մուրալով միայն» (47): Պատմական այս ընդ-
հանրացումը միաժամանակ հրաժարումն էր մինչ այդ
հայերի ընդգրկած քաղաքականութիւնից՝ մեծ պետու-
թիւնների «ստորագրութիւններին» վստահիլ և Թուր-
քիոյ նկատմամբ էլ խաղաղ, լոյալ զիրք բռնել: Դա
հրաժարումն էր, սակայն նաև իր անցած քաղաքական
ուղիներից: Բատ Փորթուգալեանի, չեղել Թուրքիայի
մէջ մէկ ազգ, որ առանց կուի և միայն համաձայնու-
թեան ճանապարհով ձեռք բերած լինի իր աղատու-
թիւնը: «Թուրքահայատակ ազգերէն ո՞րը՝ յոյնը, գա-
րագաղցին, պուլկարը և այլն կրցան ազատիլ Թուր-
քիայի հարստահարող լուծէն առանց արիւն թափելու»

(47): Այս առղերք գործունէութեան մէկ ամբողջ ծրագիր են, ըստ որի, հայութիւնը յեղափոխութեամբ միայն կարող է ձեռք բերել քաղաքացիական և «աղդային քաղաքական» ազատութիւններ։ Յեղափոխութիւնը ոչ միայն նրա իրաւունքն է, այլև նրա պարտականութիւնը, որից հրաժարել նաչի կարող՝ առանց վտանգելու իր ազգային գոյութիւնը։ «Թուրքիային խօսք հասկացնելու և աշխարհի ուշադրութիւնը մեր վերա դարձնելու միակ ելքը մնացած է նիւրական նընտումը, հայերի բողոքը գործնական միջոցներով, ապրասմբութիւն բռնութեան դիմ։» (Ընդգծումը հեղինակինն է)։ Ահա ուր հասաւ օսմանեան քաղաքացին, կամ աւելի ծիշտ, ուր հասցըց նրան թուրքը իր յոսի, կոյր և սպանիչ քաղաքականութեամբ։ Ամենից նւիրւած և բարեցակամ մարդկանց անդամ նա մղում էր՝ յեղափոխական գործելակերպի, որպէս «մի ակ ելքի», որով կարելի է «Թուրքիային բան հասկացնել»։ Մ. Փորթուգալեանը իր նոր քաղաքարներով մօտենում էր Խրիմեանին, Բաֆֆիին, Գամառ - Քաթիպային ու սրանց հետ միասին նախապատրաստում եր այն ուղին, որով զնալու հին հայ յեղափոխական կուսակցութիւնները։ Վերջիններս ընդգրկեցին ու գործադրեցին այն, ինչ որ գոյութիւն ունէր մաքերի մէջ, մշակւած էր 70-80 թւականներին։ Ուստի և ոչ միայն Բաֆֆին ու Խրիմեանը, այլև Մ. Փորթուգալեանը հայոց յեղափոխութեան ուսուցիչներից մէկը գարձաւ։

Այդ «զօրաւոր միջոցը, նիւթական ձնչումը» գործադրելու համար հայը պիտի կազմակերպւի մէկ միծընկերութեան մէջ։ անհատական ձեռնարկները պիտի միանան, «հանրային գործերը յաջողցնելու զիսաւոր պայմաններէն մինն է ամփոփել և միացնել անհատական ուժերը»։ Մեր պատմական անցեալում ուժերի այդ համախմբումը շատ քիչ է տեղի ունեցել. անդամ

բախտորոշ 1876-77թ. թ. հայը երեան չքերեց ոչ բոպէի պայծառ գիտակցութիւնը, ոչ էլ լարեց իր ուժերը կարելին ստանալու համար։ Այդ ժամանակ «անպատճառաստ էր ժողովուրդը օգուտ քաղելու հանգամանքներէն...» այդ թւականը անցնելէ յետոյ ափսոսեցինք, որ պատեհ ժամանակը կորուսինք, ըայց դարձեալ չպատրաստեցանք» (69)։ Դա հայոց հարցի «մանկական շրջանն էր», լալու, աղերսելու շրջանը, այժմ պիտի անցնել բողոքի, պահանջի, «ապստամբութեան» շրջանին։ Հայութիւնը իր բոլոր խաւերով արդէն զիտակից է, որ «հայ ազգի վիճակը անտանելի է եղած այսօր իւր հայրենիքի մէջ», ուստի և համապատասխան գործունէութեան պիտի դիմէ. «Նրանց փրկելու միակ միջոցը միուրեան մէջն է»։ Արտասահմանի հայութիւնը պիտի հաւաքւի, կազմի «հայ հայրենասերների Դաշնակցութիւնը», որը պիտի լինի «համատարած հայ ընկերութիւն» և ճիւղեր պիտի ունենայ ամենուրեք։ Այդ «Դաշնակցութիւնը» իր ենթամասերն ունենալով «Եւրոպաի, Ամերիկաի և Ավրիկէի և նոյնիսկ Ռուսաի և Թուրքիաի մէջ», պիտի նւիրւած լինի «Արմենիայի դատի պաշտպանութեան»։ Այսպիսով, Մ. Փորթուգալեանը հայութեան բոլոր ուժերը, ուր էլ որ նրանք լինեն, վերապահում է միայն «Արմենիայի», այսինքն թուրքահայաստանի ազատագրութեան համար։ Բոլոր խնդիրները, որոնք տեղական նշանակութիւն ունեն, պիտի յետ մղեւն. բոլորի կամքը պիտի համազրւի հայկական դատի շուրջը։

Մ. Փորթուգալեանը, հայոց հարցը այսպիսի եղակի ու ամբողջական հետաքրքրութեան նիւթ դարձնելով, կունեց այն, ինչ որ իրօք եղաւ 90 թւականներից սկսած։ Ռուսահայութիւնը իր ուժերի մեծագոյնը նւիրաբերեց սահմանի այն կողմի ազրող հայութեան ազատագրութեան. հայ մտաւորականութիւնը անզիտա-

ցաւ բոլոր այն հարցերը, որ ոռւսական քաղաքական կեանքը դրել էր նրա առաջ: Հայ քաղաքական կուսակցութեանց համար գոյութիւն չունէր ոռւսահայոց հարց, կար միայն թրքահայութեան խնդիր, որին և տւեց նա իր ուժերի ամբողջութիւնը: Այստեղ նրանք թեքւեցին Ստ. Նազարեանի գծած ուղիից, որի համաձայն հայոց հարցը՝ ոռւսահայ հարց էր, նրա ուրոյն պատմա-կուլտուրական դիմագիծը պաշտպանելու հարց և հետեւեցին, ուղղակի թէ անուղղակի, Մ. Փորթուգալեանին, որի համար հայոց հարցը «Արմենիայի»՝ այսինքն թուրքահայ ժողովրդի պաշտպանութեան խնդիրն էր: Այս իմաստով Մ. Փորթուգալեանը կանխորոշեց և մշակեց ոչ միայն պայքարի ձեերը, այլև հայկական դատի ըմբռնումը: Հայ յեղափոխական կուսակցութիւնները՝ Հնչակեան թէ Դաշնակցական՝ գնացին նրա ուղիներով: Բաֆթիի համար նոյնպէս գոյութիւն չունէր ոռւսահայութեան առանձին հարց. նրա ամբողջ ուշքը կենտրոնացած էր թուրքահայութեան ազատութեան խնդիրի վերա: «Խուսահայերին նանկատում էր առ այժմ իբր պահեստի ուժ, որի բախտը որոշւում էր սահմանի այն կողմը: Հայկական օջախ Հայաստանի թուրքական բաժնում՝ դա նրա մտորումների սրբութիւնն էր» (Դ. Անանուն՝ «Խուսահայերի հասարակական զարգացումը», 2-րդ հատ. 201): Նոյն տեսակէտն էր մշակում նաև Դամառ - Քարիպան իր հրաշունչ բանաստեղծութեանց մէջ: Նրա համար հերթականը, հրատապ խնդիրը թուրքահայութիւնն էր, որի վիճակը, ըստ Մ. Փորթուգալեանի, դարձել էր «անտանելի»: Այսպիսով, սկսած 80-ական թւականների սկզբից, հայ հրապարակախօսութիւնը, հայ վիպագրութիւնը, բանաստեղծութիւնը, և նոյն թւականի կէսերից նաև հայ քաղաքական հոսանքները հայոց հարցը ըմբռնում են որպէս թուրքահայոց հարց, հա-

մարելով արտասահմանի հայութեան և ոռւսահայերին որպէս օժանդակ ուժեր՝ նրա ազատազրութեան համար: Մեկ հայութեան զաղափարը զարբնում ու մօակւում եր Թուրքահայաստանի ըուղը:

«Համատարած» հայկական այդպիսի ընկերութիւնը պիտի ունենայ իր նիւթական միջոցները, նրա անդամները ամսական կամ շաբաթական տուրք պիտի տան «ազգային ընդհանրական գործի համար»: Ամէն մասնաձիւղ պիտի կապւի կենտրոնի հետ և ենթարկի նրա հրահանգներն: Այստեղ մեզ օրինակ կարող են ծառայել իրլանդական Ընկերութիւնը՝ նիւթեած իրենց ազգութեան ազատման գործին, «Խարայէլական Դաշնակցութիւնը», որ ջանում է հրեայ պահել ամբողջ աշհարհում սփուած իր ազգակիցներին և ոչնչից հայրենիք ստեղծել:

1886թ. Մ. Փորթուգալեանի և իր համակիրների ջանքերով ստեղծւում է «Հայոց Հայրենասիրական Ընկերութիւնը», որ «լրիկ մնջիկ կշարունակէ գործել և թէե ոտն առ ոտն, բայց միշտ կյառաջդիմէ դէպի իր նպատակ»: Այդ միութեան մէջ մտնում են միւնոյն գաղափարը, նպատակը և գործելակերպն ընդունող մարդիկ: Բայց ի՞նչ անմիջական նպատակ են հետապընդում Մ. Փութուգալեանը և իր կազմած «Հայոց Հայրենասիրական Միութիւնը». ի՞նչ ձեռվ են պատկերացնում նրանք թուրքահայութեան ապագան: Մ. Փորթուգալեանի քաղաքական պահանջները արմատական չեն, նոյնիսկ վերին աստիճանի չափաւոր են: Նա ուղում է, որ իրագործւեն նիւթինի զաշնագրով սրբագործած բարենորոգումները: Դաշնագրի այդ կէտը պիտի տար հայերին — ազգային սկզբունքով վարչական նոր բաժանումներ, հայերի մասնակցութիւնը տեղական գործերի մէջ, կեանքի և գոյքի ապահովութիւն, արդար ու ժողովրդական գատարան, տուրքերի

արդար բաշխումն, հողային հարցի լուծումն, մի խօսքով այն անմիջական խնդիրների բաւարարումն, որոնք տանելի և ապահով կը դարձնէին հայութեան գոյութիւնը։ Այս բոլորը նա որակում է «ինքնավարութիւն» բառով։ Վարչական տպակենարոնացումը, անիշխանութեան վերացումը, օրէնքների և իրաւունքի հաստատումն՝ ահա նրա պահանջը։ Նա ուրբյի բաղախական հեռապատկեր չունի, ցանկանում է, որ Թուրքիայի սահմաններում եւ մեծ պետութիւնների հակողութեան տակ ստեղծի «ինքնավար» հայկական ուժան։ Եւ այս նպատակին համար՝ նա առաջարկում է նախ և առաջ դիմել Թուրքիային, «գիտնալով հանդերձ թէ անլսելի կմնայ»։ Բայց այդ պէտք է՝ ցուցահանելու հայերի բարեացակամ և օրինապահ վերաբերումը դէպի Օսմանեան կայսրութիւնը։ «Այդ կերպով մենք մեր հպատակութեան պարտքը կատարած կլինենք»։ Միաժամանակ պէտք է դիմել եւրոպական մեծ պետութիւններին, «որոնք իրենց ստորագրութեամբ պարտականութիւններին ստանձնած են հակել Արմենիայի մէջ թուրք կառավարութեան ի գործ գնելիք բարեկարգութիւնների վերայ»։ Այս դիմումով նա ուզում է ապացուցանել օտարի առաջ, որ «անզգայ ժողովուրդ չենք և 61-րդ յօդւածին մէջ ճանաչւած մեր իրաւունք պահանջելու չափ ազգային զգացում ունենք» (47)։ Բայց նա չի հաւատում, որ մեծ պետութիւնների միջամտութեամբ «կյաջողինք 61-րդ յօդւածը գործադրել տալ»։ Ուստի չբաւականանք սրանով՝ այլ «գործենի», որովհետեւ «թուրքին խօսք հասկացնելու... միակ ելք մնացած է նիւրական նեռումը, հայերի բողոքը գործնական միջոցներով, ապահութիւնը բնեութեան դեմ» (48)։ Ուրեմն ըստ մեր հրապարակագրի՝ «համատարած» հայութեան, «Հայ Հայրենասէրների Միութեան» նպատակն է Հայաստանի բարենորոգումները՝ 61-րդ յօդ։

ւածի հիմքով և միջոցներն են՝ դիմումը Թուրքիային, մեծ պետութիւններին և ապստամբութիւնն ու յեղափոխութիւնը։ 80-ական թւականների կէսերին Մ. Փորթուգալեանի հեղինակութիւնը շատ մեծ էր՝ թէ երկրում, յատկապէս Վանում, Վասպուրականում և թէ արտասահմանում և կովկասահայութեան մէջ։ Նրա աշակերանները Վանի մէջ կազմեցին առաջին յեղափոխական կուսակցութիւնը՝ տարածելու իրենց ուսուցչի գաղափարները։ Արտասահմանի ուսանողութիւնը և գաղափարական երիտասարդութիւնը մի առժամանակ հաւաքւեց նրա շուրջը, մտածելով օգտել նրա հեղինակութիւնից և գարձնել նրան խորհրդանիշը հայոց յեղափոխութեան։ Բայց Մ. Փորթուգալեանի շուրջն ստեղծւած համակրանքը երկար չտեսց։ Իր նկարագրով նա յեղափոխական չէր։ Նա յեղափոխական գաղափարների սերմնացան էր, բայց երբեք յեփափոխական գործից 80-ական թւերի կէսից հանդէս եկող նոր երիտասարդները, զանազանում էին նրանից իրենց խառնածքով, յեղափոխական գործի պահանջով։ Նրանք է, որ համոզւած էին թէ գաղափարը մշակւած է, գործադրութեան եղանակը՝ նոյնպէս և պէտք է անցնել զործի, գաղափարը փոխադրել թուրքահայ իրականութիւնը և պատաստել յեղափոխութիւնն այնտեղ։ Այս նոր սերունդը տարբեր էր Մ. Փորթուգալեանից և իր ընկերային գաւանանքով։ Նա երեան էր գալիս եւրոպական և ոռւսական քաղաքական ու հասարակական մտքի դեկավարներից առած ընկերվարական սկզբունքներով։ Զանում էր հաշտեցնել ընկերվարութիւնը ազգային հարցի, թուրքահայ հարցի հետ։ Դա ոչ միայն տրամադրութիւն էր, այլ և ծրագրային պահանջ։ Դրա դիմաց Մ. Փորթուգալեանը իր ազգային - ազատական աշխարհայեցողութեամբ, իր չմշակւած և կցկառը տնտեսական ծանօթութիւններով մենակ էր և նոր հո-

սանքի կենտրոնը լինել չէր կարող։ Նա նոր երիտա-
սարդութեան համար պահպանողական էր, յետադէմ։
Նրա անձը ժխտումն էր իր իսկ քարոզած մեթոդների
գործադրութեան։ Բայց ամենից էականը քաղաքական
ուսմունքի տարբերութիւնն էր նրա և նոր մտաւորա-
կանութեան միջև։ Մ. Փորթուգալեանի քաղաքական
պահանջը 61-րդ յօդւածի գործադրութեամբ բաւարա-
ռում էր, մինչդեռ նորերի համար վարչական ինքնա-
վարութիւնը շատ քիչ էր։ Նրանք Թուրքահայաստանի
քաղաքական անկախութեան ծրագիրն էին մշակում.
80-ական թւականների վերջերին հայ մտաւորականու-
թիւնը իր լաւագոյն և գործօն տարրերով բաժանւած
էր Մ. Փորթուգալեանից, որը նրանց չէր բաւարա-
ռում՝ ոչ իր ընկերային և ոչ էլ քաղաքական պահանջ-
ներով։ Հայոց յեղափոխութեան քարոզիչը մնաց մենակ
իր «Արմենիա»-ով։ Նա հայ յեղափոխական մտքի ան-
ցած փուլն էր այլևս։ Նոր քաղաքական ուսմունքներ
մշակում էին Հնչակեաններն ու Հ. Յ. Դաշնակցու-
թիւնը, որոնցից առաջինը ձևակերպել էր Հայաստանի
անկախութեան, իսկ երկրորդը՝ ֆեղերացիայի պահանջը։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք	3
1. — Մարքսիզմը եւ ազգային հարցը	5-40
2. — Մեծ յոբելեանի առքիւ	41-74
I Կրօնի դերը հայութեան կառուցման մեջ	41-55
II Քրիստոնեութեան եւ լեզվի դերը հայութեան կառուցման մեջ	56-74
3. — Սեփանոս Նազարեան	75-117
I Քաղաքական դաւանանքը	75-93
II Հայ մշակոյրի վարիչը	94-117
4. — Մ. Փորթուգալեան	118-158
I Մի եզ յեղափոխական մտքի պատմութիւնից	



Գիւ

ՍԻՒՐԻԱ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ	7 ՖՐԱՆԳ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	10 "
ԱՄԵՐԻԿԱ.	50 ՍԷՆԹ

Ասմար համար դիմելու —

SARKIS PAKHDIKIAN
B. P. 589 - Beyrouth (Liban)